

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

ԳԱՐԻԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ-
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(1830—1860-ական թթ.)

Ավելի քան մի ամբողջ դար Պատկանյանների տոհմը բացառիկ գեր-
լ խաղացել հայ հասարակական մտքի առաջընթաց պատմության մեջ:
Այդ տոհմի առաջնորդները ներկայացուցիչներ՝ Սերոբե, Գարրիել, Միքայել,
Ռաֆայել և Բերոբե Պատկանյանները անգնահատելի ծառայություն են
մատուցել հայ ազգային նոր լեզվի և գրականության, դպրոցի, մանկա-
վարժության, թատրոնի և հայ պատմագիտության զարգացման բնագա-
վառներում:

Պիտի նշել սակայն, որ մինչև այժմ լիարժեք ուսումնասիրության ու
գնահատության չեն արժանացել այդ գործիչները: Անցյալում քննադա-
տության հախուռն ընթացքի մեջ անտեսվել է նրանց ստեղծագործական
ծառանգության պատմական գերը և մոռացության են մատնվել հայ հա-
սարակական մտքի այդ մշակների անունները:

Մեր նպատակն է այստեղ ներկայացնել Պատկանյանների արժանա-
վոր տոհմի առավել մոռացված ներկայացուցիչներից մեկի՝ Գարրիել Պատ-
կանյանի 1830—1860 թթ. կյանքի ու գրական-հասարակական գործունեու-
թյան համառոտ նկարագիրը¹:

¹ Գ. Պատկանյանի մասին հայ պարբերական մամուլում («Մշակ», «Արարատ»,
«Հուժմա», «Արձագանք» և այլն) ազդարկվել են բազմաթիվ հոդվածներ, որոնք հիմնակա-
նում կենսագրական բնույթ ունեն: 1910 թ. Թիֆլիսում Ե. Շահազիզը հրատարակեց «Տեր-
Գարրիել Պատկանյան» խորագրով ուսումնասիրությունը, որը նույնպես ընդարձակ
կենսագրություն կարելի է համարել: Ե. Շահազիզը իր աշխատության համար հատկապես
հիմք է բնդունել Գ. Պատկանյանի «Հարիւրամեակ նոր նախիջևան քաղաքի» եռահատոր
ձեռագիրը (Պեա. Մատենագարան, ձեռագրական ֆոնդ, №№ 8815, 8816, 8817), բա-
որում ծանրացել է ն. Նախիջևանի եկեղեցական գործիչների և քաղաքական իշխանու-
թյան գեղավորների միջև գոյություն ունեցող ներքին, մեծ մասամբ անձնական փոխ-
հարաբերությունների վրա: Մոտիկից ծանոթ չլինելով Գ. Պատկանյանի գրական-հա-
սարակական ամբողջ գործունեությանը, հեղինակը մի ամբողջական և ճիշտ եզրակացու-
թյան չի հանդուժ Գ. Պատկանյանի մասին:

Մեր նոր գրականագիտության մեջ Գ. Պատկանյանի մասին առաջին անգամ հետա-
բերություն է հանդես բերել ընկ. Աշ. Հովհաննիսյանը դեպի 1937 թ. հրատարակված
«Անտիպ էջերում»: Իսկ «Մ. Նալբանդյանը և նրա ժամանակը» կապիտալ ուսումնասի-
րության մեջ, որը լույս տեսավ վերջերս, նա հանդամանորեն քննության է առել
Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի փոխհարաբերությունների հարցը: Ի դեպ, պիտի նշել,
որ ընկ. Աշ. Հովհաննիսյանի այդ աշխատանքից անկախ կատարված մեր այս փորձաժամաչ-
ուսումնասիրության մեջ, կան որոշ փաստեր, որոնք օգտագործվել են նաև նրա կողմից:

Ժամանակակիցները մեծ հիացմունքով են խոսում Գարրիել Պատկանյանի մասին և շատ բարձր գնահատում նրա ծառայութունները: Նրան անվանում են «երևելի մանկավարժ և պոետ», «գողթան երգիչ», «քաջ հայկաբան», «շնորհազարդ մատենագիր», «հազվագյուտ ճարտասան»: Կենսագիրները, թվելով Գ. Պատկանյանի կրած անլուր տառապանքները, նրան համարում են «կենդանի նահատակ»: Նա մի նավավար էր, որ բազմիցս պատերազմել էր ազգային փոթորիկների հետ... Երբ հարկ է լինում հազեցնել մեկի հեռաքրքրութունը թե ով էր Գ. Պատկանյանը, տեղեկատուն ստիպված է լինում պատմել ներկա դարու գրեթե մի ամբողջ պատմութունը¹, — գրում է Ա. Երիցյանը: «Մի՞թե կարելի է մոռանալ այն մեծամեծ ծառայութունները և օգուտը, որ նա ավել է ազդին. 60 տարուց ավելի նա անխնայ կերպով աշխատել է հայկական փշոտ անդաստանի մեջ»²: «Ի պատիվ հորս այսքանը միայն կասեմ, որ նա Նախիջևանի համար ամբողջ 30 տարի մի տեսակ բարոյական արեգակ էր, որ յուր շուրջը սփռում էր լույս և ճշմարտութուն: Այն ընդհանուր հարգանքը և դարմանքը, որ շրջապատել էր հորս կարծես թե պիտի դարձներ նորան անձնապաստան, ինքնահավան, կամուր. բայց իրօք այսպես չեղավ: Հայրս միշտ մնաց համեստ...», գրում է նրա մասին Ռ. Պատկանյանը³: «Ունենալով զրայնածուռ գիտութիւնս, գոյով քաջ հայկաբան, հմուտ գրականութեան և լեզուին սուսաց, յօրինող և թարգման բազում օգտաւէտ մատենից, հազուագիւտ ճարտասան, պօէտ, շնորհազարդ մատենագիր, նա չկարէ բերել զօգուտ ինչ մարդկութեան ի ներկայ բնակութեան իւրում և ձիրք նորա կորչին ի դուր: Մինչ ընդ իմով նկատողութեամբ կարէ նա ցուցանել մեծամեծ ծառայութիւնս և զօգուտ հայկազանց ի գործս ազգային լուսաւորութեան» — գրում է Մ. Վեհապետյանը՝ 1863 թ. հունիսի 22-ի իր գիմումի մեջ, որով խնդրում է Կովկասի փոխարքային ազատել Գ. Պատկանյանին արքայից⁴: Հայանի է նաև, թե Գ. Պատկանյանի անվանի աշակերտները՝ Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Գևորգ Չմշկյան, Ավետիք Սաղազյան և ուրիշները, ինչպիսի սիրով էին կապված իրենց ուսուցչին: Պահպանված են բազմաթիվ վկայութուններ, խնդրագրեր, բողոքագրեր, որոնցով պարզվում է, թե որքան բարձր գնահատության է արժանացել Գ. Պատկանյանը Աստրախանում, Նախիջևանում, Թիֆլիսում, Պետերբուրգում աշխատելիս:

Վկայում են նաև, որ Գ. Պատկանյանը մտերմութուն է ունեցել լեհ հոշակավոր բանաստեղծ Ադամ Միցկևիչի հետ և որ վերջինս, հիացած մի հայ համեստ մարդու մտավոր կարողութուններով, մի բանաստեղծութուն է նվիրել նրան⁵:

Սակայն Գ. Պատկանյանը իր դեմ կանգնած է ունեցել նաև թշնամիների մի խոշոր բանակ, որը նրան իր ամբողջ կյանքում հանգիստ չի տվել: Բնորոշ է, որ այդ բանակում գանվող մարդիկ կզել են հայ հասա-

¹ «Արձագանք», 1889 թ., № 15, էջ 228:

² Վ. Զարգարյան, «Հրշատակաբաններ», Բ հատոր, Կ. Պոլիս, էջ 245:

³ Ռ. Պատկանյան, Երկասիրութուններ, Ռոստով, 1904 թ., էջ 4:

⁴ «Լուսա», 1905 թ., № 3, էջ 103, «Արձագանք», 1889 թ., № 15, էջ 232:

⁵ «Մշակ», 1902 թ., № 41, 42, 66: Մեր պրպոռումները այս աթիվ նոր տվյալներ չտվեցին: Հավանական է, որ Գ. Պատկանյանը Ադամ Միցկևիչին հանդիպել է Ղրիմում՝ 50-ական թվականների սկզբներին:

բախական մաքի սեակցիոն սրբազույթները՝ մեծատուններ, կալվածատերեր, քաղաքազույթներ, եկեղեցական խոշոր գործիչներ, սխալաստիկ մանկավարժության ներկայացուցիչներ (Հովհաննես արքեպիսկոպոս, Ներսես Աշտարակեցի, Գարրիել Այվազովսկի, Սարգիս Ջալալյան, Կղիա Շապոշնիկյան, Հարություն Խաչիբյան, Սահակ Սահառունի, Հակոբ Կարենյան, Կարապետ Շահնազարյան, Մկրտիչ Եկենյան և այլք)։ Նրանք Գ. Պատկանյանին համարել են «բողոքող սգի», «անհանգիստ մարդ», «խռովարար», «հասարակության արամադրությունների դրդիչ», «վտանգավոր և անվստահելի տարր» և այլն։

Որո՞նք են այս իրարամերժ վերաբերմունքի ու դնահատություն պատճառները։ Ինչպե՞ս է պայքարել և գործել Գ. Պատկանյանը և ի՞նչ ժառանգություն է թողել նա։

Գ. Պատկանյանը իր հրապարակախոսական հոդվածներից մեկում («Հայոց ազգի նպատակն ի՞նչ է»), հիշելով խաչական ազատագրական շարժման հերոս Գարիբալդիին, հայտնում է այն կարծիքը, որ ամեն մի մարդ պարտավոր է իր անձը նվիրել հասարակության շահերին, գառնալ նրա սեփականությունը և իր ազգի նպատակը զարձնել իր անձի նպատակը։ Բայց ազգի հիմնական նպատակների համար բոլորը հավասար չափով չեն կարող ծառայել։ Ամեն ոք պիտի ծառայի իր ուժերին համապատասխան, բայց ազնվորեն և անձնվիրարար։ Հենց այս գիտակցությամբ Գ. Պատկանյանը, դեռևս պատանեկական հասակից, մտնում է հասարակական ասպարեզ՝ անցնելով բարդ ու հակասական, դառնություններով լի կյանքի մի երկարամյա ուղի։

Քաջատեղյակ լինելով Լվրոպական ու արևելյան ազգերի, ինչպես և սուս ժողովրդի պատմությունը, հազորդակից լինելով նրանց ազգային կուլտուրային ու առաջադիմությունը, Գ. Պատկանյանը դեռ 1830-ական թվականներից սկսած իր ամբողջ ուժերը արամադրում է հայ ժողովրդի ազգային լուսավորության ու կրթության գործին։ Հենց այդ պատճառով էլ նա, իր գործունեության առաջին քայլափոխից, ուժեղ պայքարի մեջ է մտնում հայ ֆեոդալական դասի ներկայացուցիչների, եկեղեցական ամենաանակցիոն գործիչների դեմ։ Ճիշտ է, այդ անհավասար պայքարի մեջ Գ. Պատկանյանը, մշտապես կրելով մեծատունների հալածանքը, երբևի՜ն էլ, խաչաձևիող հարվածներից տկարացած, հաշտության ձեռք է մեկնել նրանց, սակայն այդ պիտի բացատրել պատմական ժամանակակից իրականություն կրկնությամբ և Գ. Պատկանյանի հասարակական շրմբանունների հակասություններով։

Գ. Պատկանյանի հասարակական գործունեության ամենաեռանդուն շրջանը նախիջևանյան և թիֆլիսյան տարիներն են։ Նա դեռևս Աստրախանում գիտուն վարժապետի համբավ ստացած, 1827 թ. տեղափոխվում է Նոր-Նախիջևան։

Այդ տարիներին Նոր-Նախիջևանի հասարակության ներսում արդեն սրվում էին սոցիալական հակասությունները։ Մի խումբ հայ կալվածատերեր իրենց ձեռքն էին կենտրոնացրել քաղաքի և նրա շրջակա գյու-

¹ «Հյուսիս», 1864 թ., № 23, էջ 177: Պետ. Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 144, գավ. № 194, էջ 1ա:

դերի հոգային տարածությունների գգալի մասը: Նրանք անտեսապես հզոր լինելով, հանգիստանում էին Նախիջևանի տերն ու տնօրենը, իրավական, քաղաքական ու եկեղեցական բոլոր հարցերի կարգադրիչն ու կիրառողը: Նրանց ներգործությունը բացահայտ էր նաև եկեղեցու վրա: Քաղաքագլուխն էր հսկում, ղեկավարում եկեղեցին և նրա քմահաճույքով էր անօրինվում եկեղեցու արդյունքը: Գ. Պատկանյանը՝ բարբարոսությունների, շահագործման դեմ արամազրված մի ուսուցիչ, խորը վրդովմունքով էր նայում այդ բոլորին: Իր մանկավարժական աշխատանքի հետ միասին նրան մտահոգում է Նախիջևանի հասարակության կենսական շահերի պաշտպանությունը: Նա գրադվում է աղքատների գանձանակի ստեղծման գործով, փրկում է նրանց 1833 թվականի վերահաս սովից՝ նախապես եկեղեցական գումարներով հաց գնելով լցնում է եկեղեցու շտեմարանները և գարնանը բաժանում քաղաքի չքավոր խավերին: Նրա ջանքերով հասարակությունը ազատվում է անօրեն կերպով գանձվող ամենածանր հարկերից մեկից՝ գլխահարկից, գրա համար նա աղայական գասի դեմ ոտքի է հանում քաղաքի ողջ աշխատավորությունը:

Հեռաքրքիր են Գ. Պատկանյանի հիշողությունները այդ առթիվ: «Այս եռամսյակի մեջ քաղաքացիոց արոց ծանրությունն եղավ կրկնապատիկ: Հարություն աղա Խալիբյանը փրկահանջեր որպես ինքնիշխան գլուխ, հասարակությունն կհատուցաներ երեսին թթու ժպիտ ունենալով: Թագանրոզի քաղաքապետն պիտի գն, այսքան գրամ շնորհեցեք: Գրամքն կմանեն ի Դումն և հայնմհեակ պիտի չհամարձակի ոք, ոչ թե միայն հարցանել, այլև դատով ամել, թե ուր գնացին այնքան գրամքն, որոց մուան հայտնի իսկ ելն անհայտ»¹ — գրում է Գ. Պատկանյանը:

Գ. Պատկանյանը մեծ վրդովմունքով և աներկյուղ հանդես է գալիս աշխատավորության ճորտական լուծը ամբացնող այդ մեծատունների դեմ: «Գարբիել Պատկանյանի սրտի մեջ, — գրում է նա իր մասին, — կար մի խորհուրդ, որ բնավ չէր տար նորա հանգիստ ոչ ի տունջյան և ոչ ի գիշերի, այլ միշտ սովերի նման կար նորա հետ անբաժան»²:

Գ. Պատկանյանը օգտագործում է կոմս Վորոնցովի Նախիջևան գալու առիթը և ժողովրդին, գաղտնի, բայց տենդորեն նախապատրաստում է ցույցի: Խալիբյանը իր լրտեսների միջոցով տեղեկանալով այդ բոլորին, որոշում է ոստիկանության ուժով խափանել Գ. Պատկանյանի ցույցը: Այդ մասին նա հայտնում է Տաղանրոզի քաղաքագլուխ Օթթո Ռոմանովիչ Ֆրանկին, որը Գ. Պատկանյանի թշնամիներից էր: Սակայն Խալիբի և նրա գործակցի բոլոր միջոցառումները ապարդյուն են անցնում: Գ. Պատկանյանի նախագծած պլանով ժողովուրդը կոմս Վորոնցովի կողքը շրջապատած բերում է եկեղեցու բակը: Գ. Պատկանյանը իր ծոցից հանում է նախապես պատրաստած իր ճառը, բնթերցում, նկարագրելով ժողովրդի սուկալի վիճակը և հայտնում նրա պահանջը՝ գլխահարկը վերացնելու մասին: Խալիբի և Օթթո Ֆրանկի թելադրանքով եկեղեցու բակը մուտք են գործում ոստիկաններ: Սակայն նրանք անհնազանդ են մնում իրենց տերերին, սրովհետև, — պատմում է Գ. Պատկանյանը, — այդ հսկիչները, «պեշ-

¹ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 8817, էջ 20ա:

² Նույն տեղում, ձեռագիր № 8816, էջ 210ա:

լիկ» կոչված, նույնպես ժողովրդի շքավոր խավերից էին և ատելությամբ էին լցված Սալիբի գեմ:

Գ. Պատկանյանը, հակառակ Նախիջևանի քաղաքական իշխանության մեկն տեսակ գիմադրություններին և արգելքներին, հասնում է իր նպատակին: Նախիջևանը ազատվում է գլխահարկից, սրովհետև Նախիջևանի հիմնադրման արտոնագրով էլ նախատեսված չէր այն, սակայն Պատկանյանի նկատմամբ ազայական դատի և հոգևոր իշխանության հետապնդումները ուժեղանում են:

Գնահատելին այն է, որ ժողովրդի բնդգիմագիր, տրամադրությունների արտահայտիչ ու կազմակերպիչ Գ. Պատկանյանը՝ Նախիջևանի հոգևոր գոյրոցի վարժապետը, գրեթե մենակ էր ղեկավարում այդ պայքարը, իսկ նրան չորս կողմից սեղմում էին քաղաքի մեծատունները և նրանց կամակատար հոգևորականները:

Հայանի է, որ Նախիջևանում խավարամուլների և հարստահարիչների պարագլուխը խոշոր հոգատեր Հարություն ազա Սալիբյանն էր: Գ. Պատկանյանը բնդգծում է, որ Նախիջևանի հասարակության մեկն շարժաց պատճառը նա է: Սալիբյանին բնութագրում է որպես «հասարակաց ուտիչ» (ցեց), «հասարակաց գանձարանի գոյ և ավազակ», որը ձգտում էր հայ ժողովրդի աշխատավոր տարրերին գարձնել «արծաթագին սարուկներ»:

Գ. Պատկանյանը բնդգծում է, որ ժամանակակից իրականության համար բնորոշ են Սալիբյանները և Օթթո Ֆրանկները: «Մեկնայն երևելի քաղաքք Ռուսաստանի ունեին մի մի այդպիսի տղուկք, որք հասարակության արյունը կծծեին...»¹, կինելով հասարակության շահերի նախանձախնդիր և հովանավոր, Գ. Պատկանյանը ցավով է տեսնում, որ ժողովրդի վնասակար այդ մարդկանց համար բաց են կյանքի բոլոր դռներն ու հնարավորությունները: «Որքան ավելի կհեծեին անպատասխար քաղաքացիք ազա Հարություն Սալիբյանի կեղեքելեն և քերփելեն, այնքան ավելի գիսվածք նորա առջև նոր-նոր գրունք կբացեին՝ հաջողաձեռն հառաջանալո յուր ասպարեզի մեջ»²:

Գ. Պատկանյանին խորապես հուզում է դասակարգային շերտավորման հեռանքով քաղաքում և գյուղում առաջացած անհավասարությունը, երկու հակադիր սոցիալական քննանների գոյությունը և այն հանգամանքը, որ մեծատունները տնտեսապես օրբսօրե ուռճանում են, իսկ աշխատավորը զրկվում է իր մի կտոր հողաբաժնից: «...Մըկըր ազա և Սալիբյանն կասեին, թե տեր Գարրիելն կըսչիօրե հասարակության սիրան, որ նոքա շերթան քաղաքի շրջակա քառասուն, հիսուն ագարակաց մեջ երկիրն չբմըշակեն: Մինչ յուրաքանչյուր տարի անվախճան կազ ու կռիվ կլիներ ագարակաց կալվածատիրանց և քաղաքի հողագործաց մեջ, որ քաղաքի հողագործք, քաղաքի լայնածավալ հողեն վիճակ կըխնդրեին և չէին ստանար, իսկ ագարակառայարք քաղաքի հողաբաժինքն կամ խարդավանոք, կամ բնությամբ տիրապետելով, կվարեին, կցանեին, խտան կհնձեին, ցախն»

¹ Չեռագիր № 8817, էջ 31ա:

² Չեռագիր № 8817, էջ 20բ:

կառնելին և քաղաքի մեջ այրի կանայք և որք մի կով դարմանելու համար չէին կարողանա մի սայլ խոտ ստանալ»¹:

Ահա թե ինչու Գ. Պատկանյանը գնալով ավելի քան վտանգավոր է դառնում քաղաքային իշխանության աչքին: Գ. Պատկանյանի կատարած ամեն մի գործի մասին խալիբյանականները ուռճացրած տվյալներ էին հաղորդում Ներսես Աշտարակեցուն: Վերջինս ստանց այն էլ հաշտ աչքով չէր նայում նրան: Ներսես Աշտարակեցին հաշվի առնելով Գ. Պատկանյանի ընդունակությունները, ժողովրդի մեջ ունեցած նրա հեղինակությունը, օգտագործել էր ուզում նրան՝ իր ցանկացած ձևով: Բայց Պատկանյանը նկատելով Ներսեսի և հասարակության շահերի աններդաշնակությունը և միաժամանակ իրեն գործիք դարձնելու նրա միտումը, հաճախ դիմագրում էր, ուստի և նրանց միջև անախորժություններն ու հակասությունները գնալով սուր բնութ էին ստանում: Այս բոլորի վրա ավելացել էր նաև գլխահարկը վերացնելու համար Գ. Պատկանյանի վերջին ցույցը, որը գնահատվեց որպես եկեղեցու և քաղաքական իշխանության դեմ ուղղված մի ակա:

Հետաքրքիր է Ներսես Աշտարակեցու հարցաքննությունը այդ աստի: «...Ես լսել եմ, որ նա (Գ. Պատկանյանը — Շ. Ն.) քաղաքի մեջ անսակ-անսակ անկարգությունք կառաջացնե, քաղաքի կարևոր գործոց մեջ կխառնվի: Ո՞վ խնդրեց նորան՝ որ նա համարձակեցավ ձանձրույթ տալ Վորոնցով կոմսին քաղաքի ապահովության մասին»² — հարցնում է նա հոգևորականներից մեկին: Վերջինս պատասխանում է. «Վեհափառ տեր, նորանև ոք խնդրող չկայր, մանավանդ որ այդ ընդգեմ էր կամաց հասարակության գլխավոր անձանց՝ աղա Հարություն Խալիբյանի, Մրկեր աղայի, Մարկոս աղայի և այլոց, և այն օրը հատկապես հրավիրմամբ քաղաքագլխույն և դատավորաց եկել էր Թագանրոզեն քաղաքական բարոն Օթթո Ֆրանկ, որ այդ խորհուրդն խափանե...»³: Ներսեսը խիստ դաշրանում է այն բանի համար, որ չեն կարողացել Գ. Պատկանյանին հեռացնել եկեղեցուց: Իսկ քահանան երկյուղած պատասխանում է. «Ո՞վ էր կարող հեռացնել, մինչ հազարավոր խաժամուժք նորա ակնկալության կնայելին, նա նր բանն որ շուղե անել ինքն կհեռանա և ոք չկարե նորան բռնությամբ անել տալ, իսկ ինչ որ մտաց մեջ հաստատել է, այն ոք ոչ կարե խափանել»⁴:

Պատկանյանի և Նոր Նախիջևանի վերնախավի միջև եղած պայքարը նպաստավոր հող է հանդիսանում Խալիբյանի և Ներսեսի մտերմական կապերի ամրապնդման համար: Վերջիններս շատ լավ հասկանում են, որ Գ. Պատկանյանը գործելով հօգուտ հասարակության, գործում է իրենց՝ կղերա-ֆեոդալական դասի և խոշոր հողատերերի դեմ: Ահա թե ինչ է գրում Գ. Պատկանյանը 1843 թ. Ներսեսի առաջին անգամ Նախիջևան գալու կապակցությամբ:

«Ձկնի սուղ ինչ միջոցի Խալիբյանն որպես քաղաքագլուխ հրավիրեցավ ի ներքս ի դահլիճն և փակեցավ դուռն: Ձիւնրդ եղև առաջին տեսություն երկուց բարեկամաց և բարեբարաց Նոր Նախիջևանա: Ձիւնրդ հան-

¹ Ձեռագիր, № 8816, էջ 211բ—212ա:

² Ձեռագիր, № 8817, էջ 44բ:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

գիպեցան իրերաց երկու վնասապարտք ազգիս: Նախ ս'իլ ձայն հանեց, ուստի՞ սկսավ նոցա խոսակցությունն: Արդյո՞ք անբարտապանն Թալիբյան մշտնջենավոր գայլն, ձգեց զանձամբն մորթ ոչխարի, կամ անողոք ինձն զգեցա՞յլ գիմակ ազվեսու: Արդյո՞ք գոռոզասիրտ Թալիբյանն առաջի աչաց նպատակ ունենալով եկեղեցյաց դրամագումարքն՝ սրպես երբեմն ազվեսն ի կտուց ազոավու պանիրն հոսյա՞ց յուր անձն զգարչապարանոք ժառանգորդին պարթևազյան Գրիգորի՝ խոպոտ ձայնիւ մրմոռալով՝ շնայր մեղայ յերկինս և առաջի քոյ չեմ արժանի կոչիլ սրգի քոյ, արն՝ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց: Ներսեսն ներսի՞ սք էր. նորա բնավորության կհարմարե՞ր առածն.

«Առ մեծասիրտ սեզ առյուծին,
Շատ է հեղուլ յերկիր զմարմին,
Իսկույն վախճան լինի մարտին,
Երբ խոնարհի անդ թշնամին»¹:

Գ. Պատկանյանը հասկանում էր, որ այդ երկու հզոր «վնասապարտք» մարդկանց խորհուրդը ճակատագրական դեր պիտի ունենա և՛ իր, և՛ նախնիջևանցիների համար: Եվ իրոք, չանցած որոշ ժամանակ, Գ. Պատկանյանին հեռացնում են Նախիջևանից, իսկ եկեղեցական գումարներն ակերն ու տնօրենը դառնում է Հ. Թալիբյանը՝ Ներսեսի հատուկ կոնդակով: Թալիբյանականներին թվում էր, որ անհանգիստ վարժապետի հեռացումով կմեղմանան ներքին հակասությունները: Սակայն հայտնի է, թե Գ. Պատկանյանի հեռացումը Նախիջևանից սրպիտի պայքարի առիթ ծառայեց Մ. Նալբանդյանի համար. դրանով սկսվեց հանձարեզ գործչի մենամարտը Նախիջևանի սեակցիոն ուժերի դեմ:

Հենց այստեղ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի փոխհարաբերությունների մասին:

Պետք է համարձակօրենք ընդգծել, որ Նալբանդյանի աշխարհայացքը իր նախնական սնունդը ստացել է սոցիալական այն պայքարի հոգի վրա, որը զեկավարում էր Գ. Պատկանյանը: Մ. Նալբանդյանի գիտակցական կյանքի զարթոնքը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Նախիջևանում Գ. Պատկանյանի և Թալիբյանի հակամարտությունները թե՛ ընդվիճակ էին ստացել: Դեռ աշակերտական նստարանից, հասարակական երևույթները խորապես բնկալող Մ. Նալբանդյանը զգում էր, որ Նախիջևանի հասարակության շահերին նախանձախնդիր, ուղղամիտ, գիտուն ու բարի իր սուսուցչի դեմ ծռուցել է աղայական դասի և խավարամիտ հոգևորականության խումբը:

Այդ այն ժամանակ էր, երբ Թալիբյանն ու Ներսեսը այնպիսի ուժեղ հալածանք էին սկսել Գարբիլի դեմ, որ նույնիսկ նրա բարեկամներից շատերը գողանի էին տեսակցում նրան: Եվ Պատկանյանը ցավով է ընդգծում, որ Նախիջևանից հեռանալիս իրեն ուղեկցելու էին եկել միայն յուր նոր խնամի Մարկոս ազան, Հուսիկ Կուսիկյանը և շ... Միքայիլ Նալբանդյանն աշակերտն յուր, որ մինչև հասան առաջին սուրհանդակն այն, լայր դասն արտասովանոք²:

¹ Ձեռագիր № 8817, էջ 57ա:

² Նոյն տեղում, էջ 84բ:

Հայտնի է, թե Գ. Պատկանյանի բանտարկության տարիներին՝ Մ. Նալբանդյանը որքան ջանք է գործադրում նրան բանտից ազատելու համար և նրա միջնորդությունով է, վերջապես, 1863 թ. Գ. Պատկանյանը տեղափոխվում Պետերբուրգ:

Իր նամակներից մեկում Մ. Նալբանդյանը երախտագիտության խորն զգացմունքով Ռաֆայել Պատկանյանին համարում է իր հարազատ եղբայրը՝ «որդի արժանապատիվ Գարրիել քահանայի Պատկանյանին... հարազատ ծնող խնույս երախտավորի...»¹:

Հեռանալով Նախիջևանից Գ. Պատկանյանը զգում է, որ խալիբյանականները հանգիստ չեն տալու իր սիրելի աշակերտին. «... Այլ որովհետև չէր տակավին զովացյալ զայրույթ սրտին քաջ և արթուն հովվապետին և կամեր կցորդ կապանաց նորա առնել և զաշակերտ նորա զՄիքայել Նալբանդյանն, զոր բորբոքյալ էր զանշեջ բոց համարապանանջ հաշվեովության եկեղեցական դրամագլխոց, զորս հայրապետական կոնդակով հանձնյալ էր ադա Հարություն Սալիբյանին...»²:

Գ. Պատկանյանը նշում է, որ Նալբանդյանը իրավացիորեն պահանջում էր պատասխան տալ, թե սուր են գնում եկեղեցական գումարները, թե ինչո՞ւ Մարկոս ազան սեփականացրել է այն հոգամասի կեսը, որ Եկատերինա Բ. կայսրուհին պարգևել էր Հովսեփ Արղուսթյանին, իսկ վերջինս էլ կեսը արքունական ապարանքին էր թողել, իսկ կեսը արամազրել էր վարժարանին, թե ինչո՞ւ 1828 թվականին դեռևս Գ. Պատկանյանի ջանքերով կառուցված գեղեցիկ վարժարանը ադա Խաչատուր Խամազճյանը կորզել էր Պատկանյանի ձեռքից և հանձնել Տազանրոզի իշխանի տրամադրությունը և այլն:

Անսահմանորեն սիրելով իր «արդյունավոր» աշակերտին, կամենալով, որ նա «հանձար յուր ի բարիս ի կիր առնե», Գ. Պատկանյանը դեռևս իր ուսուցչության տարիներին, ինչպես և հետագայում, մտահոգված էր Նալբանդյանի բարեհաջող ապագայով: Նա ամբողջ հոգով դեմ էր, որ Նալբանդյանը հոգևորական գործիչ դառնա: Նրան զայրացնում էր այն միտքը, թե ինչո՞ւ Ներսեսը հանգիստ չի տալիս իր աշակերտին, թե ինչո՞ւ նա, թողած հոգևորականների ամեն տեսակ անօրինականությունները, Նալբանդյանի՝ 4-րդ ամուսնությունից ծնված լինելու հանգամանքը առիթ դարձնելով, «կամի խոր վիրապ արկանել նորան»:

Պատկանյանը շտապում էր, որքան հնարավոր է, շուտ հանել Նալբանդյանին հոգևորականության այդ ճղճիմ միջավայրից, ազատել նրան Նախիջևանի հետամնաց ուժերի հարվածներից: Այդ պատճառով էլ, չնայած ինքն էր միջնորդել Մաթևոս Վեհապետյանի առաջ՝ Նալբանդյանին խորհրդարանի քարտուղար նշանակելու, բայց ինքն էլ արդեն ժամանակն էր համարում Նալբանդյանին ազատություն տալու, և նրա փրկության ճանապարհը Մոսկվա ուղարկելու մեջ էր տեսնում:

Երբ Խալիբյանը խորամանկորեն համոզել էր ուզում Գ. Պատկանյանին, որպեսզի վերջինս միջնորդի հոգևոր առաջնորդի: առաջ Մ. Նալբանդյանին առաջնորդարանի քարտուղարի պաշտոնից ազատելու (որով և կա-

¹ Նալբանդյան, Երկեր, հատ. 4, էջ 16:

² Հեռագիր № 8817, էջ 92ր:

մենում էր լռեցնել եկեղեցական գումարների շուրջ եղած բողոքը), Գ. Պատկանյանը նրան պատասխանում է. «Ազա Հարություն, անհնար է, որ ես իմ սիրելի աշակերտին առանց ինչ վնասապարտության նորա, զոհեմ կամաց նորա թշնամյաց, որ գուցե թե և ինձ բարեկամ չեն: Բայց ես քեզ խոստովանիմ իմ խորհուրդը. Միքայել Նալբանդյանին ավտոս է, որ մնա Մատթեոս արքեպիսկոպոսի մոտ. ի՞նչ պիտի վաստակի, ի՞նչ պիտի սովորի և ի՞նչ բարվոք և բնավորության տեր պիտի դառնա: Ես Հովհաննես արքեպիսկոպոսի, Ներսես արքեպիսկոպոսի և Ներսես կաթողիկոսի պաշտոնի մեջ ձերացա, ի՞նչ բարյաց հասա... Միքայել Նալբանդյանին կարեմ այս գաղափարն տալ, որ նա... երթա Լազարյանց հարի և նոցա հովանավորության ներքո յուր ուսումը կատարելագործի, որ ժամանակին լինի անկախ անձն. հողեորականաց նեղ և դարձելի մթնոլորտից դուրս գա, միշտ իմ օրինակից խրատք քաղելով»¹:

Եվ Գ. Պատկանյանը հանդիսացավ Մ. Նալբանդյանի Մոսկվա գնալու ոչ միայն խորհրդատուն, այլև աջակիցը և հովանավորը: 1853 թ. հունիսի սկզբներին, երբ ստիկանությունը Մ. Նալբանդյանին արդեն հեռապնդում էր, Գ. Պատկանյանը այդ օրերին միակ հնարավոր միջոցն է համարում արագ կազմակերպել Մ. Նալբանդյանի գաղանի փախուստը Մոսկվա:

Մենք որոշ կրճատումներով անհրաժեշտ ենք համարում այստեղ ներկայացնել Գ. Պատկանյանի հիշողությունների այն հատվածը, որի մեջ պատմված են Նալբանդյանի Մոսկվա գնալու հանգամանքները: «...Հանկարծ եկավ Միքայել Նալբանդյանն և երևեցավ տեր Գարրիել Պատկանյանի տանը»: «...Միքայել Նալբանդյանն ընդ նմին պատմեց տեր Գարրիել Պատկանյանին, թե վեհափառն գրել էր կոնգակ Քիշնեկի կոնսիստորիային, որ զՄիքայել Նալբանդյան հանձնե Քիշնեկի ստիկանության, իսկ Քիշնեկի քաղաքապետին գրել է, որ ի ձեռն ստիկանության զՄիքայել Նալբանդյանն ուղարկե ի սուրբ էջմիածին:

Վերջապես, երբ որ Նալբանդյանն հայտնեց, թե, — ես Քիշնեկեն փախուստկան եմ եկել, և թե աստ ևս Խալիբյանն, Սարգիս վարդապետն և Եկենյան կամենում են զիս որոնել և մատնել ի ձեռն խնդրակաց, և եթե ես այսօր մնամ Նախիջևան, անշուշտ զիս ձերբակալ կանեն և կտանին անդր քան զԿովկաս. վարանյալ եմ, և չգիտեմ, թե ինչ անեմ: — Տեր Գարրիել Պատկանյանն զարմացավ, որ վեհափառ Հայրապետն, որ անա քսան երկու ամիս պահպանում է Տեր Գարրիել Տեր Սիմոնյանին սուրբ աթոռ մեջ, որ առանց անցաթղթու էր գնացել...². այժմ Նալբանդյանին կամի Խորվիրապ արկանել վասն ապաշխարելու, որ չորրորդ ամուսնությունից է ծնել: Ասացի. — Քո այստեղ մեր տուն մտանելն տեսով սք: — Այն, — ասաց, — տեսով մի ջրկիր, և կարծեմ, որ լուրն պիտի հասուցանե ի Մագիստրաթն: — Ուրեմն, — ասաց տեր Գարրիելն, — դու այս տեղ ևս ապահով չես: Ես իմ կառքը լծել կուտամ, կասեմ, որ երթա մեր դրացվոց գավթումն սպասե, երբ քո խուզարկուքն գան, դու՞ խոհանոցի դռնից կերթաս,

¹ Գ. Պատկանյան, «Հիշատակարան», էջ 361 (Գրական թանգարան, Պատկանյանների արխիվ, փաստաթուղթ № 1):

² Մեկ բառ անընթեանելի է:

կնստես կառք և ուղղակի կերթաս Ռոստով քաղաք. անդ կնստիս ի կառս սուրհանդակաց և կերթաս Մոսկվա, ահա քեզ և ճանապարհիդ ծախն: Եվ այս ասելով, հրամայեց Տեր Գարրիել յուր կառքն լծել, և երթալ դրացվոս սրահն սպասել: Հազիվ թե Նալբանդյան ճանապարհի ծախսոց դրամն գրեչ էր յուր ծոցն և տեր Գարրիելն քաջալերում էր նորան, որ վստահությամբ երթա Մոսկվա, խոստանալով գրեչ Լազարյանց՝ որ զնա ընդունին յուրյանց ճեմարանին սլաշտոնի մեջ, և Ազաֆոն Աքիմյանին ևս նամակ, որ օգնե Նալբանդյանին մտնել ի ճեմարան, առ ի կատարերագործել յուր ուսումն, և մի նամակ ևս առ Մատթեոս արքեպիսկոպոսն, որ վաղվաղակի գրե առ Լազարյանս՝ վասն Նալբանդյանի, ահա պատուհանից տեսան, որ Նախիջևանս Գեա ոստիկանն մտալ Պատկանյանի սրահն: Միքայել խուսյաց: Ոստիկանն ներքս մտալ՝ ողջունեց և հարցուց.— Ո՞ւր է Միքայել Նալբանդյանն: Պատկանյանն պատասխանեց.— Նա աստ էր և երկու րօպե հառաջ զնաց: Ոստիկանն կրկնեց.— Ո՞ւր գնաց: Պատկանյանն պատասխանեց.— Կարծեմ՝ թե յուր քրոջ տուն, — որ էր հանդիման տան Պատկանյանի: — Չէ, պատասխանեց ոստիկանն, — ձեր գրան առաջև պահապանք կային, և թե նա ելաներ, նոքա կտեսնեին, նա այս տանեն չէ ելած: Պատկանյանն պատասխանեց.— Ահա տունն քո առաջն է, ևս քեզ չեմ արգելք լինիր, որոնե ամենայն տեղ: Այս ասաց և գոներն բացեց, և սկսան սենեկե ի սենյակ շրջիլ մտին ամենայն պահարաններն, նայեցան ամենայն արկեղաց մեջ, ելին վեր ի տանինքն, իջին ի նկուղն և ի մառանն, գնացին ախոսն՝ ուր ոչ ձի կայր, և ոչ կառք, քանզի նոքա արգեն Ռոստովի ճանապարհին էին: Նալբանդյանն ընդ խուսափիլն աննշմարելի կերպով անցել էր խոհանոցի միջից այնպես, որ Պատկանյանի գերդաստանի անգամոց ևս ոչ մին էր տեսել, և ոչ այն խոհարար աղախինն և ոչ սք ի դրացյաց, որոց ի սրահին սպասում էր Նալբանդյանին սալլավարն:

Այսպես Նալբանդյանն ազատվեցավ: Եվ երբ ոստիկանն գնաց գատարկաձեռն, տեր Գարրիել Պատկանյանն գրեց այն երեք նամակքն, և հովել մյուս ևս չորրորդ նամակ առ Ստեփան Նազարյանց, որդին խոյեցի տեր Եսայեա, որ օգնե Նալբանդյանին մտնել Լազարյանց ճեմարանն՝ որ և հաջողեց իսկ: Տեր Գարրիել Պատկանյանն յետ քանի ավուրց մի նամակ ևս գրեց առ Ազա Ստեփան Հովհաննիսյան Անանյանն, որ Նալբանդյանի պանդխտությունն, խնդրելով նորա վերա խնամք ունենա, այլ նա որովհետև նման Ազաֆոն Աքիմյանի և Գավիթ Թամամշյանի էր կուսակից ներսեսի և բարեկամ Խալիբյանի, մանավանդ նենգությամբ Սարգիս վարդապետի, [հրաժարյաց և] Միքայել Նալբանդյանի համար վակ պահեց յուր տանն և սրտի գոներն...»¹:

Բնորոշ է, որ խալիբյանականներն իրենց պայքարի ընթացքում փնտրում են ընդհանուր կետեր Գ. Պատկանյանին և Մ. Նալբանդյանին մեղադրելու համար և երկուսի մեջ տեսնում են իրենց միևնույն հակառակորդին: Մինչդեռ Խալիբյանը մի կողմից որոգայթ էր լարում Պատկանյանին բանտ նետելու համար, մյուս կողմից լրտեսում էր Նալբանդյանին՝ ոստիկանության հսկողությամբ էջմիածին ուղարկելու նպատակով: Այս ճանապարհով խալիբյանականները ձգտում էին հասնել Պատկանյան բանա-

¹ Գ. Պատկանյան, «Հիշատակարան», էջ 409—413դ:

կի ուժերի ջլատմանը, նրա և Նալբանդյանի ժողովրդի մեջ ունեցած ազդեցութեան չեզոքացմանը: Հենց այս բանին էր հետապնդում նրանց ամենաոխսերիմ թշնամիներէից մեկը՝ Մկրտիչ Եկենյանը իր լրտեսական ծառայութեամբ: Նա հայտնում է կաթողիկոսին, որ Խալիբյանի դեմ Գարրիել Պատկանյանի կողմից կազմակերպված մահափորձի մեջ անպատճառ մեղադիր պիտի ճանաչել նաև Մ. Նալբանդյանին: 1853 թվականի հունիսի 17-ին նա հայտնում է կաթողիկոսին, որ՝ շտապում է տեղեկացնել օրերս Նախիջևանում կատարված մահափոր անցքերի մասին, խոստանալով մանրամասնութունները հայտնել էջմիածնում, տեսակցութեան ժամանակ: Գ. Պատկանյանը, — գրում է նա, — վարձել է երկու ավազակներ, նախապես վճարելով նրանց 300 արծաթ և հանձնարարել է նրանց սպանել Խալիբյանին: «Սուկամ ասել, — շարունակում է Եկենյանը, — քահանայի աստծոյ խորհել զգործ մարդասպանութեան... և յայտոցիկ կզելոց հետեցուցանէ ևս թէ պատճառ յանկարծական գալստեան այսր ստահակ պատանւոյ և յառանձնական խորհրդակցութեան իւրում ի տան Պատկանյանի, զանգեալ իցեն այս խմոր շարութեան, գուցէ և տէր պատանւոյն առ այս առաքեալ լիցէ զնա այսր առ ի կատարումն խորհրդոցն, և որպէս կարծեմք անհնարին է թէ առանց նորայ գիտութեան և հաղորդակցութեան իցէ այս ամենայն»¹:

Նալբանդյանի հակառակորդների համար գաղտնիք չէր, որ Գ. Պատկանյանը բացահայտ հեղինակութուն էր իր բմբոստ աշակերտի՝ Միքայել Նալբանդյանի համար և որ վերջինս կրում էր նրա ազդեցութունը: Ներսեսը ինքը խոստովանում է, որ ամենայն միջոց գործադրել է նրանց ուժերը ջլատելու, նրանց միարանութունը խափանելու համար: «Կարապետ հայր, — պատմում է Ներսեսը Կարապետ արքեպիսկոպոսին, — հասկացմբ այս բանս արկուի (այսինքն Գ. Պատկանյանի: Շ. Ն.) Քիշինկեն՝ Նախիջևան, Նախիջևանեն Ռուսաստանի մայրաքաղաքներն, Մոսկվայեն և Պետերբուրգեն Նախիջևան, ապա Տփլիս և էջմիածին մականախաղի պես գնդակն գլորելն, և միայն միտքն այն էր, որ Եկենյան Մկրտիչ վարժապետին հասցնէ զնդակի հարվածն. այն խեղճին 1827 թվեն սկսյալ՝ մինչև 1845 թիվն հեղձամաղձ էր արել. ևս սորա (Գ. Պատկանյանի: Շ. Ն.) վարժապետութունն առի և նորան տվի կոնդակով, թեև կաթոլիկ էր, բայց հարազատ որդի Հայաստանյայց եկեղեցվո կոչեցի: Սա. (այսինքն՝ Գ. Պատկանյանը: Շ. Ն.) մի ոջիլ էր Նախիջևանա մարմնո մեջ, որուն բունեցի և ճգմեցի, բայց անիծն է մնացել՝ մի չորրորդ ամուսնութենե ծնած ուստայի որդի Ղազարի ձագ՝ Միքայել Գարրինյան կամ Նալբանդյան, սորա աշակերտ պատանի մի. յայսժամ նա է Եկենյանի սատան հրեշտակն, և մինչև նա Նախիջևանեն չհեռանա, Նախիջևան հանգիստ դտանել չէ կարող: Տեր Գարրիելն աստ է գտնվում, բայց սորա տունն նոր Նախիջևանա աստեղանց երրորդ մասն կքաշէ և երկիր կձքէ: Քան զայս ավելին ի՞նչ անէի, որ սորա փորի մեջ չար հոգին մեռներ. ևս կարճեցի, թե աղքատացնելով, հաց մուրալ տալով հնար է նորան սանձել, սա ահա այստեղ մանկավարժարան ստեղծեց...»²:

¹ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 169, վավ. 118:

² Գ. Պատկանյան, «Հիշատակարան», էջ 258—259: Գ. Պատկանյանը 1845 թ. վերջերին դալով Թիֆլիս, երկար ժամանակ անգործ մնալուց հետո, իր կղորձ Միքայել Պատկանյանի հետ միասին 1848 թ. Մ. Նշանի թաղամասում մասնավոր դպրոց էր բացել:

Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի մտերմական կապի և փոխնարարեթյան մասին խոսելիս պիտի ընդգծել նաև այն օգտակար աշխատանքը, որ Գ. Պատկանյանը կատարել է հնդկահայ կտակների գործով Նախիջևանի հասարակության կողմից Նալբանդյանին լիազոր-ներկայացուցիչ ընտրելու գործում: Յոթ տարի Ռոստովի բանտում խալիբյանական կուսակցության լրտեսական հսկողության ներքո Գ. Պատկանյանին պահելուց հետո, չապացուցված մեղադրանքի համար նրան աված պատիժները բաժարար համարելով, նրան ազատում են բանտից: Գ. Պատկանյանը 1860 թվականի մարտ ամսին գալով Նախիջևան, նամակներ է ստանում Էջմիածնի և Թիֆլիսի իր բարեկամներից այն մասին, որ Խալիբյանը և Գ. Այվազովսկին խորհրդավոր նամակագրական կապի մեջ են եղել Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի առաջնորդի հետ և նսրատակ են ունեցել նախիջևանցիներին հատկացված հնդկահայերի կտակը փոխելու Թեոդոսիայում բացված Խալիբյան ճեմարանի անունով: Գ. Պատկանյանը այս մասին խուսյն տեղյակ է պահում քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանին և վերջինս, Պատկանյանի հետ միասին, նախապատրաստում է լիազոր ներկայացուցիչ ընտրել ամենամեծահաս և վստահելի մարդուն՝ Մ. Նալբանդյանին, և նրան շտապ ուղարկելով Հնդկաստան՝ դրանով իսկ խափանել Այվազովսկու և Խալիբյանի գիտավորությունը:

Հետաքրքիր է Գ. Պատկանյանի հիշողությունն այդ մասին: Երբ Մ. Նալբանդյանը այդ օրերին այցելում է Գ. Պատկանյանին և հայտնում իր ցանկությունը Հնդկաստան գնալու մասին, Գ. Պատկանյանը նրան պատասխանում է. «...Որդյակ, մի՞թե դու չգիտես, որ ես ոչ թե միայն քո երթալն պիտի փափագիմ, այլ և վստահ եմ, որ դու քան զամեն Աճեմյանն ավելի հաջող պիտի լինիս: Մի տարակուսիր, որ ես որքան կարող լինիմ, պիտի քեզ համար թիափարեմ. աներկրա եղեր իմ մտերմության, այլ հաջող կամ ձախորդ վախճանն ես չեմ ձևներես այժմե՛ն գուշակել:

Ժողովն խմբեցավ, բայց տեր Գարրիելն չհրավիրվեցավ և արդեն տարածամյալ էր օրն, որ եկավ մի սպասավոր, և ասաց.— Տեր հայր, քաղաքագլուխ ազա Կարապետ Հայրապետյանց խնդրում է որ շնորհ բերես ժողովք, մի բանի համար՝ քեզ կամենում են ինչ-ինչ հարցանել:

Տեր Գարրիելն մտավ ժողովի դահլիճն. ասացին թե ինչ մասին է ժողովն, և թե ժողովականաց քվեներն երկու մասն է բաժանված. մի մասն կամենում է, որ Այվազյանն երթա, մյուս մասն կամենում է, որ Աճեմյանի վերա հաստատվի ընտրություն:

Տեր Գարրիելն ասաց.— Շնորհակալ եմ հասարակության, որ արժանավոր անձն գիտին ընտրել... ինձ անձանոթ անձինք են, բայց ի լրոց գիտեմ, որ Այվազյանն շատ լավ մարդ է, երևելի փելյզաժիտ է, ասում են, թե այս տերության մեջ, և թե արտաքո սահմանի, ունի շատ ծանոթներ, շատ բարեկամներ, շատ կապակցություններ, և լավ է: Բայց քան զնա լավ է Աճեմյանը, որովհետև Նախիջևանցի է... երթալը հեշտ չէ, բայց որովհետև քաջ և ժիր երիտասարդ է, պիտի հույս կապենք, որ նա կերթա, կհասնի, կստանա հրիտակներն և կվերադառնա և կհասուցանե Նախիջևան, իսկ այդ բանն Այվազովսքյանց անկարելի է հուսալ. նա կերթա, գուցե և կհաջողի ստանալ, այլ զինի բերելո ի հարկե պիտի տա յուր եղբորն, որ Խալիբյան ճեմարանն զարգարե, ճոխացնե և պայծառացնե: Նորա

եղբարն չէ՞ր, որ աչդպես մի հրիտակի համար վեճ ուներ Եվրոպա, և ևս գոյով բանտարկյալ չիմացա թե ինչ կատարած ունեցավ...

Այլ, երբ բանն լավն և նախընտիրն գտանելու վերա մնա, քան զԱյվազյանն և քան զԱճեմյան լավ է Միքայել Նալբանդյանն, որ ոչ միայն նախիջևանցի է, այլ հոշակավոր ազգասեր, նորան ճանաչում են հնդկաստանցիք այնպես, որպես և դուք եք ճանաչում. նորա բարի համբավն իրան առաջնորդ կլինի, նորա գիտությունն իրան ուղեկից, և նորա ճարտարությունն ամենայն տեղ օգնական և զօրավիգ. ոչ խոսելու ժամանակն՝ թարգմանի կկարոտի, ոչ գրելու ժամանակն՝ օրենսգրիտի, ոչ վիճարանելու ժամանակն՝ փաստարանի: Միքայել Նալբանդյանն ընտրվեցավ և սլատառատվեցավ...»¹:

Մ. Նալբանդյանին Հնդկաստան ուղեկցելու օրը կազմակերպվում է մեծ հանդես և Գ. Պատկանյանը մի երգով բարի ճանապարհ է մաղթում նրան. «...նորա հուզի արկանելու հանդեսին տեր Գարրիելն ճանապարհ բարի երգեց...», — գրում է այդ մասին Գ. Պատկանյանը²:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ երբ ոմանք կասկածանք են հայտնում, թե. «արդյո՞ք մենք լավ ենք անում, որ սորան տալիս ենք այսպիսի լիազոր կարողություն և ուղարկում ենք հեռավոր աշխարհ», — Գ. Պատկանյանը «իմանալով թե ինչ քամի էր, խեղկատակություն», սլատառատում է. «Մի վախենաք, նա Ամերիկա չի փախչիր և թե յուր տկարությունից առողջանա կու գա որ Հայրապետյանց փեսայանա»³:

Գ. Պատկանյանն այստեղ հեղնանքով ակնարկում է նրանց դեպի Նալբանդյանը ունեցած քաղաքական անվստահությունը: Հետաքրքիր է նաև Հայրապետյանց տան հեռ փեսայանալու մասին ակնարկը: Այդ նույնպես, եթե չենք սխալվում, Նալբանդյանի կենսագրության համար նորություն է:

Նալբանդյանի Հնդկաստան ուղևորվելուց հետո, Այվազյանը և Սալիբյանը կրկին իրենց զենքի սուր ծայրը ուղղում են Գ. Պատկանյանի դեմ: Հասկանալի է, որ Նալբանդյանին լիազոր ընտրելու գործում Գ. Պատկանյանի միջամտությունը՝ դրա հեռ և նրա կողմից Նալբանդյանական թևի այլ տրամադրությունների պաշտպանությունն է արմատական այն պատճառը, որ երկարամյա բանտարկությունից, տառապանքներից հաղիվ ազատված Գ. Պատկանյանին կրկին աքսորում են՝ այս անգամ հեռավոր հյուսիս՝ Վլատկա: Գ. Պատկանյանը նշում է, որ եթե Նախիջևանում իր ամենամեծ հակառակորդը միայն Սալիբյանն էր, հնդկահայ կտակների հարցը Գ. Այվազյանի ցանկություն հակառակ տնօրինվելու պատճառով, այժմ ավելացավ երկրորդ զորեղ հակառակորդը՝ Գարրիել Այվազովսկին:

Գ. Այվազովսկին մինչև Նոր-Նախիջևան գալը, որպես թեմի առաջնորդ, արդեն տրամադրված էր Պատկանյանի դեմ և ճանաչում էր նրան որպես հակախալիբյանական կուսակցության վտանգավոր անդամներից մեկի: Նախիջևան գալու հենց առաջին օրը Գ. Այվազովսկին հասարակության ընդհանուր ժողովում ունեցած իր ելույթի մեջ անարդանքի այլունին է գամում Պատկանյանին, զգուշացնելով հասարակությանը այդ վտանգավոր մարդու ազդեցությունից: Դա 1857 թվականին էր, երբ

¹ Գ. Պատկանյան, «Հիշատակարան», էջ 586—587:

² Նույն տեղում, էջ 589:

³ Նույն տեղում:

Գ. Պատկանյանը դեռ Խոստովի բանտումն էր: Նրան այդ ժողովի մասնակիցներին մեկը պատմում է, թե ինչպես, երբ Այվազովսկին սկսեց վատարանել Գ. Պատկանյանին, ժողովականները աստիճանաբար թողեցին գահլիճը և այնտեղ մնացին միայն Խալիբյան կուսակցության համակրողները: «Ժողովրդյան քրթմնջյունն անօրինակ էր և ասում էին, թե Խալիբյանն յուր թույնն նորա բերանի մեջ է գրել, և այլք ասում էին, թե եթե Խալիբյանն կամ նորա համախոհներն կարողացան նորա սիրան փոխել երեք ավուրց մեջ, ուրեմն նա մինչև վերջն պիտի նորա սրնգով խաղա՞՞:»¹

Եվ այսպես, սկսած 1857 թվականից Գ. Այվազովսկին Խալիբյանի հետ միասին ետանդուն կերպով պայքարում է Գ. Պատկանյանի դեմ և վրեժ է լուծում նրանից հատկապես Նալբանդյանին Հնդկաստան ուղարկելու հարցում՝ Գ. Պատկանյանի կատարած դերի համար:

Ուշագրավ է, որ երբ Մ. Նալբանդյանը Հնդկաստանից մի անգեղջյուր է ուղարկում, Գ. Այվազովսկին հեղնորեն գրում է, թե՛ նախիջևանցիների սպասած հազարավոր արծաթն փոխվեցավ մի անգեղջյուրի և «լերին երկանց պտուղ մի մուկն էր տեր Գարրիելի աչքն կոխել»²: Եվ զարմանալին այն է, որ հասարակության լայն խավերի կողմից Գ. Պատկանյանին հեռավոր վշատկա աքսորելու առթիվ եղած բողոքներին, Գ. Այվազովսկին ցինիկաբար պատասխանում է. «Այս կերպով կարգազուրկ եղած Պատկանյանը ոչ նախիջևանի մեջ հանդարտ կեցավ, և ոչ Առաջնորդին (այսինքն իրեն՝ Գ. Այվազովսկու: Շ. Ն.) հակառակորդները գրգռելեն զգուշացավ. այնպես որ քաղաքին եկեղեցականները միաբանական գրով խնդրեցին Առաջնորդեն, որ Պատկանյանը նախիջևանեն դուրս հանվի: Առաջնորդը այն խնդրագիրը հուղարկեց Ներքին Գործոց Ոստիկանին, և վճիռ եկավ որ Պատկանյան Գարրիելը քշվի վշաթքա քաղաքը ի բնակություն: — Չեմք գիտեր թե Առաջնորդին այս արած գործողությունը մեջ ինչ անիրավություն կամ ինչ չափազանց խստություն կտեսնեն հակառակորդները...»³:

Վերոհիշյալ փաստերը, ինչպես և Պատկանյանի և Նալբանդյանի փոխհարաբերությունների շուրջ գրականագիտության մեջ արդեն հայտնի շատ նյութեր օգնում են վեր հանելու այն ճշմարտությունը, որ Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի պայքարը նախիջևանյան տարիներին, մինչև Մ. Նալբանդյանի Հնդկաստան ուղևորվելը, ուղղված են եղել միևնույն թշնամական տարրերի, ժամանակակից հայ ազգային լուսավորական շարժման հակառակորդ ուժերի և նրանց համախոհների դեմ:

Հասկանալի է, որ եթե Մ. Նալբանդյանը գործուղված չլիներ Հրնդկաստան, կամ գրանից առաջ պատասխարված չլիներ Մոսկվայում, ապա ամենայն հավանականությամբ ձերբակալված կլիներ, հենց Գ. Պատկանյանին բանա նետելու օրերին:

Սակայն, նույն պատմական ճշմարտությունը թերագրում է ասել, որ հենց այդ տարիներին Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի կողմից տարվող ընդհանուր պայքարը բղխում էր գաղափարական տարրեր գիրքերից: Գ. Պատկանյանի մոտ, որպես պահպանողականի, թույլ էր հեռուողակա-

1 Գ. Պատկանյան, «Հիշատակարան», էջ 510:

2 Նույն տեղում, էջ 589:

3 Պատմութիւն Խալիբեան ուսումնարանին Ազգիս հայոց (1858 - 1871), Տիֆլիս,

նությունն ու սկզբունքայնությունը: Նա պայքարում էր շահագործողների՝ ազայական դասի, եկեղեցական գործիչների դեմ այն բանի համար, որ նրանք ժողովրդից մեծամեծ հարկեր են դանձում, յուրացնում են հասարակական, եկեղեցական գումարները, խանդարում են ժողովրդի լուսավորության, առաջադիմության գործին և այլն. բայց այդ բոլորի հետևանքով հայաժանրներից հուսահատված, նա հաճախ զիջում էր իր գիրքերը և ներողություն հայցում իր թշնամիներից: Մինչդեռ ավելորդ ենք համարում նույնիսկ նշել, թե որպիսի պողպատյա կամք, հոգեկան ու բարոյական վեհություն ուներ նրա աշակերտը: Հենց նախիջևանյան այդ տարիներին՝ Նալբանդյանի պայքարը՝ դարձյալ վերսիրշյալ հարցերի շուրջը, մըղվում էր դասակարգայնորեն խորապես գիտակցված գիրքերից: Գ. Պատկանյանի «վառած ճրագ» (Մ. Նալբանդյանն է իրեն այդպես կոչել) Մ. Նալբանդյանը հրդեհներ առաջացրեց իր ուսուցչի՝ Գ. Պատկանյանի համար անսպասելիորեն:

Գ. Պատկանյանն այնքան առաջադեմ չդանվեց, որ հասկանար իր աշակերտի հետագա գործողությունների ընթացքը, ընդգրկեր նրա գործունեության մասշտաբները, կամ ըմբռներ մեծ գեմսկրատ-լուսավորչի սեփույցուցիտն գաղափարախոսության էությունը: Գ. Պատկանյանի կարծիքով Նալբանդյանը բնկավ մուսուլթյունների մեջ, շեղվեց ճիշտ ճանապարհից, և հենց այդ պատճառով էլ «եզիտ գարնուրնի ման տարածամ»: «Ցավալի էր հույժ,— գրում է Պատկանյանը,— զի այսպիսի արդյունավոր զավակ պահանջավ ի նախիջևանա և կորավ ի ծոցս բովանդակ ազգին, որս շահույն էր անձնատուր և կարեր մեծամեծ օգուտ բերել նմա եթե միայն բարին ի կիր առնույր գնանճար յուր...»¹: Վերջին խոսքով Գ. Պատկանյանն ակնարկում է Մ. Նալբանդյանի հակապետական, սեփույցուցիտն գործունեությունը, որին Գ. Պատկանյանը երբեք չէր համակրում:

Գ. Պատկանյանը պարզապես ցավ է հայանում, որ Նալբանդյանը իր ցանկացած ձևով չշարունակեց պայքարը: Ուսուցչի նստատանն էր, որ Նալբանդյանը լիներ մեծ լուսավորիչ և ոչ թե իշխանության դեմ դենք բարձրացնող քաղաքական ազատության երգիչ:

Գ. Պատկանյանի համար Մ. Նալբանդյանը մնաց որպես իր սիրելի աշակերտը. մերժեց նրա սեփույցուցիտն ոգին, բայց և սկզբնապես օգտակար ազդեցություն ունեցավ այդ ոգու առաջացման վրա: Այս երևույթը ավելի քան հասկանալի կդառնա, երբ մանրամասնորեն վերլուծության կենթարկվեն Գ. Պատկանյանի հրապարակախոսական հոդվածները:

Գ. Պատկանյանի վերաբերմունքը Մ. Նալբանդյանի և նրա թշնամիների նկատմամբ դրսևորվում է որոշակիորեն նաև նրա ստվարածավալ և խիստ արժեքավոր ինքնակենսագրության (ձեռագիր հիշատակարանը), ինչպես և նախիջևանի հարյուրամյա պատմությունը նվիրված անախյ աշխատություն մեջ: Ծիշտ է, դրանցում Գ. Պատկանյանը Մ. Նալբանդյանի մասին հայանում է նաև հակասական, ոչ նպաստավոր և ոչ ճիշտ կարծիքներ, բայց այդ մասին խոսելիս պիտի հաշվի առնել այն խոշոր անջրպետը, որ ստեղծվել էր ուսուցչի և աշակերտի աշխարհըմբռնումների միջև, (որը Գ. Պատկանյանի խոստովանությամբ, զգացվել էր դեռ Մ. Նալբանդ-

¹ Ձեռագիր № 8817, էջ 101բ:

յանի Մոսկվայում ուսանելու առաջին տարիներից): Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի մտերմական կապերը թուլանում են հատկապես 1860-ական թվականների սկզբներից: Այդ է պատճառը, որ 1863—1866 թվականներին նրանց փոխհարաբերությունների շուրջը գրավոր փաստեր, նամակներ, տեղեկություններ գրեթե չկան, եթե չհաշվենք Գ. Պատկանյանի հիշողությունները:

Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի միջև առաջացած ստանություններն այստեղ են նաև Ռաֆայել Պատկանյանի և Մ. Նալբանդյանի միջև եղած հակասությունները: Պակաս դեր չեն խաղացել նաև որոշ մարդկանց անձնական կրթերը: Վյատկայում աքսորական, անմխիթար ձերուհին նամակ է ստանում (1863 թ.) իր մի աշակերտից, որով վերջինս հայտնում է նրան Ռաֆայելի և Միքայելի միջև առաջացած անախորժությունների մասին. այդ լուրը այնքան է հուզում Գ. Պատկանյանին, որ նա հիվանդանում է¹:

Նալբանդյանագեաները մինչև վերջին ժամանակներս ավելորդ են համարել Գ. Պատկանյանի, որպես Մ. Նալբանդյանի, բառիս խկական իմաստով, ուսուցչի մասին խոսել ըստ արժանվույն: Դեռ ավելին, ոմանք արհամարհել են, ոմանք էլ խիստ արհեստական միջոցների գիմելով աշխատել են միայն հակադրել նրանց, որպես միմյանց ի սկզբանե թշնամի գործիչներ: Այս տեսակետից ոմանց մեջ զարմանք առաջացրեց «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրում տեղ գտած «Մ. Նալբանդյանին վերագրված «Կայսրակ»² պոեմի գրություն շարժառիթները» հոդվածը³: Հեղինակը, Պատկանյանների ժառանգություն գնահատման հարցում ստեղծված խստնաշիտթի հետևանքով, զիտա-բանասիրական գերագույն ջանքեր գործադրեց ապացուցելու համար, որ, իբր նալբանդյանն իր «Կայսրակ» պոեմը գրել է, որպես պարոդիա՝ Գ. Պատկանյանի «Շավարշ Բ» պոեմի: Իր հոդվածը ընկ. է. Զրբաշյանը ամփոփեց հետևյալ կերպ. «Կայսրակ»-ի նման մեկնարանությունը բացվում է մի անհայտ էջ նալբանդյանի և Գ. Պատկանյանի փոխհարաբերության պատմությունից, որի մասին մինչև

¹ Գ. Պատկանյան, «Հիշատակարան», էջ 640:

² Ի դեպ՝ «Կայսրակ» պոեմ գոյություն չունի: «Բամբեր»-ում (1904 թ., Բ. մաս), որտեղից սկիզբ է առել բանասիրական այս թուրքիմացությունը, «Կայսրակ» խորագրերը գրված է ուղղանկյուն փակագծերի մեջ: Հրատարակիչը իր ձեռքի տակ ունենալով պոեմի անավարտ և անխորագիր օրինակը՝ ինքն է վերնագրել այն: Կայսրակը պոեմի բացասական, երկրորդական հերոսներից մեկն է՝ հարբի իշխանը: Գլխավոր հերոսը՝ Կարը, բանախց փախչում է և (պոեմի գործողության սկզբում) հանդես է գալիս կայսրակ կեղծ անունով: Պոեմը ինքնագիր ավարտված օրինակում, ինչպես և մի այլ ընդօրինակության մեջ կոչվում է «Կար»:

Ինչպես է այն վերագրվել Մ. Նալբանդյանին: Գ. Պատկանյանը Ռոստովի բանտում թուղթ չունենալու պատճառով (1857 թ.) ստանալով իր հոր՝ Սերոբե վարժապետի «Տաղք» ապագիր ժողովածուն, նրա ազատ էջերում և տողերի արանքում գրում է «Կար» պոեմը, հավանաբար հենց նույն ժամանակ թուղթ ստանալով, նա այն թողնում է կիսատ և նորից գրում է ու ավարտում առանձին տետրակի մեջ: Հետագայում Գ. Պատկանյանի ձեռքի տակ եղած այդ նույն գիրքը («Տաղք») հասնում է նաև Մ. Նալբանդյանին, զուցե և Գ. Պատկանյանն է նրան հանձնում (1863 թ. կեսերից նա արդեն Պետերբուրգումն էր):

Շատ ժամանակ անց «Բամբեր»-ի հրատարակչի ձեռքն է ընկնում Մ. Նալբանդյանի անձնական գրադարանի այդ գիրքը, վերջինս, համոզված լինելով, որ այնտեղ եղած ձեռագիր պոեմը Մ. Նալբանդյանի գրչին է պատկանում՝ հրատարակում է նրա անունով:

³ է. Զրբաշյան, «Մ. Նալբանդյանի «Կայսրակ» պոեմի գրություն շարժառիթները», «Սովետական գրականություն և արվեստ», 1953 թ., № 3, էջ 148—155:

այժմ շատ քիչ բան էր հայտնի: Որ Նալբանդյանի «Կայսրակ»-ը պետք է գիտվի հիմնականում իբրև պարողիա՝ ուղղված ոչ միայն Գարբիել Պատկանյանի, այլ և նրա նման մասնող ու գրող պատմաբանների և բանաստեղծների դեմ, որոնք իրենց հակագիտական առաապելներով խեղաթյուրում էին (ընդգծումը մերն է: Շ. Ն.) պատմական անցյալը և ծառայում հայ իրականութան մեջ գործող սեակցիոն ուժերին», որ «Կայսրակ»-ը պետք է գաովի «Ազգմիք»-ի, Ռաֆայել Պատկանյանի դեմ ուղղված հայանի բանաստեղծությունների և Նալբանդյանի մյուս պարողիաների շարքը», որ «հայ ժողովրդի պատմական անցյալի իդեալականացված, առասպելական, կղերամիտ պատմագրության գիրքերից կատարվող նկարագրության փոխարեն Նալբանդյանը ավել է հեռավոր ժամանակների բավականին կենդանի, ճշմարտապատում նկարագրություն, ցույց տալով արդեն այդ շրջանում գոյություն ունեցող սոցիալական անարդարությունները», որ գրանով Մ. Նալբանդյանը «կլասիցիզմի սկզբունքներին հակադրում է պատմական անցյալի պատկերման սեակցիոնական սկզբունքները, որոնք սրտալի կերպով հանդես են գալիս, չհայած պոեմի արկածային, հեքիաթային սյուժեին և պարողիական բնույթին»: Որ «սյուժեի հիմքում գնելով մի հարց, որ նաև Պատկանյանի պոեմի նյութն է կազմում՝ հայոց նոր նահապետի ընտրության հարցը, Նալբանդյանը գրանով տալիս է արամագծորեն հակադիր լուծում: Հեռուցելով կոմիկական պոեմի սկզբունքին, Նալբանդյանը այդ «բարձր թեման» ներկայացնում է գիտամբ ստորացված սճական միջոցներով, գրանով իսկ ծաղրի ենթարկելով Գ. Պատկանյանի կղերամիտ, ազգայնական, քաղցր-մեղցր նկարագրությունները»: «Այսպիսով, — վերջացնում է իր ամփոփումը հոգվածագիրը, — Նալբանդյանի «Կայսրակ»-ը իր քաղաքական հակառակորդների դեմ մեծ սեակցիոններ-դեմոկրատի մղած գաղափարական և գրական կրքոտ պայքարի ուշագրավ փաստերից մեկն է»¹:

Բարերախտաբար ընկ. Զրբաշյանին էր վիճակված հայտնաբերելու «Կայսրակ» պոեմի ինքնագիր օրինակը, որը պատկանում է Գ. Պատկանյանի գրչին և աներկրայելիորեն նրա ստեղծագործությունն է: Ընկ. Զրբաշյանը «Գրական թերթի» անցյալ տարվա համարներից մեկում² ոչ փոքր ծավալի մի հաղորդման մեջ բացեց այդ թյուրիմացության վարագույրը, բայց ոչ մի խոսք չասեց այդ թյուրիմացության տխուր հեռավանքների մասին³:

¹ Է. Զրբաշյան, «Մ. Նալբանդյանի «Կայսրակ» պոեմի գրություն շարժառիթները»՝ «Սովետական գրականություն և արվեստ», 1953 թ., № 3, էջ 155:

² Է. Զրբաշյան, Մի հիսնամյա թյուրիմացության մասին, «Գրական թերթ», 1955 թ., № 26:

³ Այստեղ վերջացնելով մեր խոսքը Գ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի փոխհարաբերությունների մասին, շեղվելով բուն նյութից, կարևոր ենք համարում հիշել մի փաստ Մ. Նալբանդյանի և Գարբիել և Հովհաննես Այվազովսկիների կապի շուրջը, որը կարող է օգտակար լինել Նալբանդյանագիտության համար:

Հայտնի է, որ Մ. Նալբանդյանի ձերբակալության և ողբերգական մահվան պատճառով ամբողջ հայ առաջավոր հասարակությունը խորն ատելություն էր լցված դեպի Գարբիել վարդապետ Այվազովսկին: Այդ ատելությունը շարունակվել է բոլոր ժամանակներում: Ուշագրավ է, որ երբ 1878 թ. նրան նշանակում են էջմիածնի ճեմարանի տեսուչ, նրա դեմ ստի է կանգնում ողջ աշակերտությունը և ապստամբության ոգի առած բացազանչում՝ «Մենք մասնիչ տեսուչ չենք կամենում ունենալ»: Գ. Այվազովսկին հարկադրված հրաժարվում է ճեմարանից և փախչում Թիֆլիս: Հուշակալոր նկարիչ Հովհ.

* * *

Առանձին ուսումնասիրության և գնահատության է արժանի Գ. Պատկանյանի մանկավարժական գործունեությունը: Նա կարևոր դեր է կատարել 19-րդ դարի առաջին կեսի հայ մանկավարժության պատմության մեջ, մինչդեռ մանկավարժության պատմությունը շարադրողները նրա անունն անգամ չեն հիշատակում: Գ. Պատկանյանը իր պատանեկական տարիներից զբաղվել է ուսուցչությամբ — մինչև իր 80-ամյա հասակը: Անընդհատ պայքարի ու խոսովությունների մեջ, աղայական և հոգևոր գասերի հետամնաց ուժերի հալածանքներին ենթակա, նյութական, տնտեսական ծանր պայմաններում, նա համառությամբ առաջ է վարել հայ մանուկների կրթության ու գասավանդության իր սիրած գործը: Ունենալով բնդհանուր լայն զարգացում, խորը և բազմատեսակ գիտելիքներ¹, օժտված լինելով սքանչելի ձայնով, հետադարձական բացառիկ ձիրքով, նա մեծ հաջողությունների է հասնում որպես մանկավարժ: Գ. Պատկանյանի ուսուցչության համ-

Այվազովսկու խոհի վրա վաղուց ծանրացած լինելով կարճրը վերադարձող ոճիրները, հատկապես նրա մահից հետո, կամենում է անձամբ ստուգել պատմությունը և իմանալ կարճ հանցանքների չափը: Օգտվելով արքունական շրջաններում իր ունեցած կապերից, նա իրավունք է ստանում պետական գաղանի գործերի արխիվը նայելու: Նրան թույլատրում են ծանոթանալու Լոնդոնի պրոպագանդիստների գործին: Երկու ամիս շարունակ (ձերացած լինելու պատճառով նա հնարավորություն չի ունենում լարված աշխատել) նա ուսումնասիրում է սենատական գործը և մանրամասն արտադրում Մ. Նալբանդյանին վերաբերող բոլոր մեղադրական կզրակացությունները: Նա բնագործնակում է հատկապես Վեստոչնիկովի ձերբակալության ժամանակ նրա մոտ հայտնաբերված Բակունինի Նալբանդյանին հասցեագրված նամակները, գաղանի բառարանը և այլ ու այլ կարևոր փաստաթղթեր, որոնք հետադառնում հայանի գարձան նալբանդյանագիտության մեջ: Նկարիչ Հովհ. Այվազովսկին, որն իր կարճրը վերադարձված մեղադրանքներից վերադարձված բնդհատել էր իր հարաբերությունները Մ. Նալբանդյանի նախիջևանցի մտերիմ ընկերների՝ բժիշկներ Հովհ. Բերբերյանի և Անանիա Սուլթանշահի հետ, այդ փաստաթղթերին ծանոթանալուց հետո, շտապում է տեսակցել նրանց և հայտնել իր համար անսպասելի այդ նորությունները: 1880-ական թվականների սկզբներին նա լուր է ստանում, որ Խրիմյան հայրիկը շրջելով գանազան վայրեր, այցելելու է նաև Ն. Նախիջևան: Այստեղ նա ջերմ հանդիպում է ունենում իր վաղեմի ընկերների հետ և պատմում նրանց՝ գործի կելությունը: Ան. Սուլթանշահը և Հովհ. Բերբերյանը գարձանքով են լուր Լոնդոնի պրոպագանդիստների հետ Մ. Նալբանդյանի ունեցած կապի մասին: Սուլթանշահը, իր սովորության համաձայն, այն ինչ պատմում է Հովհ. Այվազովսկին (կարգալով իր մոտ կգած բազմաճրները)՝ գրում է իր հուշատետրում, որը հետագայում հայանի է գասնում «Ուրախ և ախուր օրերի տետրակ» վերնագրով: Նկարիչ Հովհ. Այվազովսկին խոնդրում է իր բարեկամներին շտապարել այդ մասին որևէ լուր մինչև իր մահը, բանի որ այդ պայմանով էր սենատական գործերից վերցրել իր ցանկացած ավյալները: Այվազու էլ լինում է: Հետագայում միայն, երբ արդեն չկային ոչ Հ. Այվազովսկին, ոչ բժիշկները, Հովհ. Բերբերյանի և Անանիա Սուլթանշահի բարեկամներից մեկը, իր արամադրության տակ ունենալով «Ուրախ և ախուր օրերի տետրակ», վերոհիշյալ փաստի մասին ազագրում է մի բնդարձակ հոդված «Անանիա»-ում («Անանիա», 1932 թ., № 1—2):

¹ Գ. Պատկանյանը շատ լավ տիրապետում էր հայերենին և աուսերենին, գիտեր ֆրանսերեն և այլ օտար լեզուներ: Նա դաստիարակ էր հայոց և աուսաց լեզու և քերականություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, բնդհանուր պատմություն, անարիկ աշխարհի պատմություն, երաժշտություն, կրոնագիտություն և այլն:

բազմաթիվ տարածվում է Աստրախանում, Նոր-Նախիջևանում, Թիֆլիսում, սպա նաև Մոսկվայում և Պետերբուրգում¹:

Պահպանված են Աստրախանի, Նախիջևանի հասարակությունների բազմաթիվ խնդրագրերը՝ իրենց անվանի վարժապետ Գ. Պատկանյանին կրկին իրենց մոտ վերագարձնելու մասին: Երբ 1848 թ. Նախիջևանից հեռացված Գ. Պատկանյանը, հակառակ Ներսեսի կարգադրության, գաղտնի կերպով իր եղբոր՝ Միքայել Պատկանյանի հետ Թիֆլիսի մի հետամնաց թաղամասում մասնավոր գլրոց է բացում, լուրը տարածվում է քաղաքի մեջ, և բազմաթիվ ծնողներ շտապում են իրենց երեխաներին բերել Պատկանյանի մոտ: Իսկ երբ կարգում ենք Մ. Նալբանդյանի տպագիր առաջին բանաստեղծությունների տակ կղած ստորագրությունը — Մ. Նալբանդյանց, յաշակերտութենէ աէր Գարրիէլ Պատկանեանի, — արդեն հասկանալի է դառնում, որ այդ ժամանակներում Գ. Պատկանյանին աշակերտելը նախապայման էր կանոնավոր կրթություն ու գաստիարակություն ստանալու համար: Գ. Պատկանյանին որպես մանկավարժ չափազանց բարձր է գնահատում նաև նշանավոր դերասան Գ. Չմշկյանը, որը Ներսիսյան գլրոցում աշակերտել է նրան: «... Այդ թվականից սկսած, մինչև իմ վերջնական ուսում ավարտելս արքունական երկրաչափական փակ ուսումնարանում 1854 թվականին, երբևք էս չեմ պատահել այդպիսի մի հետոր ուսուցչի, որ կարողանար գրավել այդքան աշակերտների ուշագրությունը, առանց շինծու արտիստական միջոցների: Նա պատմում էր մեզ արոյացվոց պատերազմը: Բայց ինչպէս էր պատմում... Նորա պատմելու ժամանակ մենք ամեն մեկս դգում էինք մեզ այդ հին, անցած, հոմերոսական առասպելական դարում: Չգում էինք մեզ այն երկրի վերա, Միջերկրական ծովի ափում, հեղինական երջանիկ ցեղերի շրջանում, ապրում էինք նորանց կյանքով, տխրում կամ զվարճանում, նայելով, թե ինչ անցք էր պատմում մեզ ճարտար հետորը»²:

Գ. Պատկանյանը խորատկում է այն վիճք, որ կար ուսուցչի և աշակերտի միջև: Նա գեմ էր գլրոցում գործադրվող բարբարոսական պատիժներին և ամեն տեսակ անօգտակար խտություններին, ուսուցչի և աշակերտի միջև նա հաստատում է բարոյական կապ և մտերմական փոխհարաբերություն: «Վարժապետությունն յուր տարրն էր, — գրում էր նա իր մասին, — աշակերտաց մեջ օրրստօրե կմատաղանայր և կմանկանայր,

¹ Դեռ 1830-ական թվականների սկզբներին Լազարյանները ցանկություն են հայտնում Գ. Պատկանյանին հրավիրելու Մոսկվա՝ ճեմարանում ուսուցչության պաշտոն հանձնելու նպատակով (Գ. Պատկանյանը վաղուց ի վեր ցանկանում էր Մոսկվա տեղափոխվել ուսումը շարունակելու նպատակով), սակայն Ներսես Աշտարակեցին Լազարյաններին զգուշացնող մի այնպիսի նամակ է գրում, որի դրդմամբ վերջիններս շտապ հրաժարվում են իրենց առաջարկից: «Գո՛ւ կեք բարձր սրբազնութենէ ձերմէ, յազազս ծանուցանելոյ Ձեր մեզ զհօնգամանաց և զբարուց աէր Գարրիէլ Պատկանեան, վասն որոյ եթէ այդպէս զժնդակ է նա բարուր, չէ հարկաւոր մեզ բերել զնա ի Մոսկով քաղաք: Բայց արդ եթէ նա վասն անհարմարութեան բարուց իւրոց անպատշաճ զտավ յուսուցչութեան ճեմարանիս մերոյ, մեզ անպատճառ պիտոյ է ուստի և իցէ խնդրել զմի բաշավարժ ուսուցիչ», — գրում է Խաչատուր Լազարյանը: (Ա. Երիցյան, «Պատմութիւն 75-ամեայ զոյութեան Ներսիսեան հոգևոր գլրոցի», Թիֆլիս, 1898 թ., էջ 475):

² Գ. Չմշկյան, իմ հիշատակարանը, Երևան, 1953 թ., էջ 6:

մինչ ընդհակառակն՝ հողևոր կառավարութեան գրութեանց մեջ կը կորցնէր ամենայն ետանդն և աշխույժն: Բայց ինչ պիտի անէր... — շարունակում է նա, — տեր Գարրիելն կրկին մտաւ հողևոր կառավարութեան, կամ լավ ևս՝ անբան ոչխարն գնաց սպանդանոց»¹:

Պատմում են, որ երբ Գ. Պատկանյանը դատականում էր ընդհանուր պատմութեան, ներսիտյան դպրոցը լի էր լինում բազմութեամբ, մանավանդ հունաց գիցարանութեան դատականուման ժամերին:

Պատկանյանն առանձնապէս ուշադիր և հոգատար վերաբերմունք էր ցուցաբերում աղքատ աշակերտների նկատմամբ: Ոգևորվում էր նրանց ցույց տված առաջադիմութեամբ, մտահոգվում այդ լավ պատասխան տվող, բայց ստնարաց և բոկոտն, պատասխան տված շորերով աշակերտներին՝ նյութական օգնութեան ցույց տալու խնդրով: Նախիջևանում 1827 թ. սկսելով իր մանկավարժական աշխատանքը, մեկ տարվա ընթացքում նրա մոտ քերականութեան սովորող աշակերտները թիվը հասնում է 175-ի: Այդ բոլորը հավաքվում են մի դասասենյակում, ուր չկար ամենատարրական հարմարանքներ: Գ. Պատկանյանը մեծ ջանք էր գործադրում դպրոցական նոր շէնք կառուցելու համար: «...դասատունն նեղ էր, նստարանքն սրահաս, հոժար էին սղորմելիք ստից վերա կանգնած մնալ, միայն թե ուսումունքին չզրկվին» — հիշում է նա²:

Գ. Պատկանյանը իր առաջ նպատակ է գնում երեխաներին տալ ընդհանուր, բազմակողմանի և միաժամանակ հիմնավոր կրթութեան, որ հետագայում նրանք դժվարութեան չկրեն՝ բարձրագույն դպրոցներն ընդունվելիս և ուսումը կատարելագործելիս: Նա հպարտանում է, որ իր աշակերտները և՛ հասարակական կյանքում, և՛ համալսարանների մեջ մեծ հաջողություն են ունենում. «...Որպէս հետո ստուգվեցաւ Մ. Նալբանդյանի հարցադրութեամբ», — գրում է նա ի նկատի ունենալով Մ. Նալբանդյանի և վարժապետ Մկ. Եկենյանի մրցութեանը:

Գ. Պատկանյանը աշակերտների առաջադիմութեանը բարձրացնելու նրանց խոր և գործնական գիտելիքներ տալու նպատակով փնտրում է նոր մեթոդներ ու միջոցներ: Երբեմն պարապմունքներն անց է կացնում դրսում՝ բնութեան մեջ, երբեմն հարց ու պատասխանի ձևով, երբեմն դաստիարակելիք նյութը բաժանում է գերերի, հանձնարարում մի քանի աշակերտների, որոնք թատերախաղով պիտի ներկայացնեն յուրացրած նյութը: Ուշադրով է նաև այն, որ Գ. Պատկանյանը գիմել է նաև գիգակտիկ նյութերի կիրառման: 1828 թ. Նախիջևանում աշակերտների օգնութեամբ պատրաստում է երկրագունդ (գլոբուս) և օգտագործում աշխարհագրութեան դասերին: Հայտնի է, որ Խ. Արովյանը Գորպատում գրած «Տիեզերագիտութեան» աշխատութեան մեջ նույնպէս փորձում է ներկայացնել երկրագնդի

¹ Զեռագիր № 8816, էջ 94: Գ. Պատկանյանը ձգտում չունէր հողևորական դասնալու: Նրան քահանա են ձեռնադրել հակառակ իր կամքի: Երկար ժամանակ նա խուսափել է այդ բանից՝ հիվանդութեան և այլ պատրվակներով: Նա հիշում է, որ իր ձեռնադրութեան օրը (1832 թ.) ամբողջ բնտանիքով հուզուներից հանգիստ չեն գտել իսկ հայրը՝ Սերբի վարժապետը, արտասովել է:

² Նույն տեղում, էջ 35ա:

նախագիծ, այսինքն հանձնարարում է գծագրեր և հաշվումներ գլորուս պատրաստելու համար¹:

Գ. Պատկանյանի մանկավարժական գործունեություն մեջ ամենագնահատելին և նորը այն է, որ նա դեռ 1820-ական թվականների վերջերում գասափանդությունը վարում է աշխարհարար լեզվով, մինչև որ աշակերտները կհասնեին գրարարը յուրացնելու աստիճանին: Ավելին, Հ. Ալամգարյանի հետ ունեցած մի գրույցի ժամանակ Գ. Պատկանյանը պաշտպանում է աշխարհարար լեզվով հայոց պատմության և աշխարհագրության դասագրքեր կազմելու անհրաժեշտությունը: Նա առաջարկում է նաև Մ. Սորենացու «Հայոց պատմությունը» համատեսել և թարգմանել աշխարհարար լեզվով և այլն: Ուշագրավ է, որ Գ. Պատկանյանը 1865 թվականից առաջ հրատարակության համար կազմել է նաև մի «Այբբենարուն»²:

Իր մանկավարժական հայացքներով Գ. Պատկանյանը, ճիշտ է, ոչ արմատական ձևով, պայքարում է խալիֆայական, պահպանողական դպրոցի դեմ և մանկավարժության մեջ պաշտպանում է այն նորը, որը նույն ժամանակամիջոցում սխտեմի վերածնունդ և ամբողջացրեց մեծ լուսավորիչ Խ. Աբովյանը:

Գ. Պատկանյանը քննադատում է սխտեմի դպրոցի ծրագրերը և գասափանդման ֆորմալիստական մեթոդները: Նա գտնում է, որ աշակերտներին գիտելիքներ պիտի տալ սկսելով սարգից, աստիճանարար անցնելով գեպի բարդը: Չպետք է ծանրաբեռնել աշակերտի միտքը, հաշվի պիտի առնել նրա մտավոր կարողությունների և ընդունակությունների չափը: Քննադատելով Հակոբ Զրպեայանի Փարիզից ներսխայան դպրոցի համար բերած ուսումնական ծրագիրը, որը պարունակում է քառասունից ավելի հասարակական, աստվածաբանական, տեխնիկական և լաված և չլաված այլ առարկաներ, նշելով նմանօրինակ ծրագրերի վրաստիար հետևանքները աշակերտների կրթության գործում, Գ. Պատկանյանը վկայակոչում է Խ. Աբովյանին. «Միթե՞ շատ առարկաներ, շատ լեզուներ, շատ ություններ, և շատ բանություններ միասին խոկելով՝ վարժատուներ կոչվածառանա, և ուսումնա կտարրանա, ազգը կկատարելագործվի: Ո՛չ: Ո՛չ, երբեք, — գրում է Գ. Պատկանյանը: — Հարցուցեք Սաչատուր Աբովյանի աշակերտներուն՝ քանի՞ ություն և քանի՞ բանություն կայր նորա վարժարանումը, և սր վարժարանեն քան զնորա աշակերտները լավ ուսյալ, ազգասեր և ազգասպիտան մարդիկ առաջացան, և սով կայր նորա նման աշակերտի լավ ճամփով առաջ տանող: Ի՞նչ էր նորա հնարը՝ աշակերտին այն էր ասում, ինչ որ նորա մանկական միտքը կարողանում էր ըմբռնել, նա յուր ուսումնատվությունն էր հարմարեցնում աշակերտաց, և ոչ թէ աշակերտներուն էր հպատակեցնում վարժարանական կարգին և պրոգրամմային. նա աշակերտեն այն չէր պահանջում, ինչ որ դեռ նորա մտքի մեջ սերմանած, անկած և արմատացած չէ: Եվ լավն ու նախընտիրն էլ այն էր: Բնական կարգին պիտի հետևվի, սանդուղքի վրա պիտի առաջին ստորին աստիճանեն օտք դնիլ. ծառը առաջ պիտի հողի մեջ հաստատուն արմատ ունենա, շինվածքի հիմքը

¹ Մ. Սանթրոսյան, Հայ մեծ լուսավորիչ և մանկավարժ Խ. Աբովյանը, էջ 275:

² Գծքախտարար չի պահպանվել «Այբբենարանի» ձեռագիրը: Մենք համոզված ենք, որ այն պիտի գրված լինի աշխարհարար լեզվով:

պիտի լավ դրվի: Աշակերտաց մտաց կարողությունը պիտի լավ ճանաչվի, և նորա համեմատ ուսումնա ավանդվի...»¹:

Գ. Պատկանյանի գործունեության մեջ մի նշանակալից տեղ ունի «Արարատ» շաբաթաթերթը: Ի դեպ պիտի նշել, որ «Կովկաս» և «Հյուսիս» շաբաթաթերթի հրատարակչական-խմբագրական աշխատանքի ծանրությունը նույնպես Գ. Պատկանյանի վրա է եղել²: «Արարատ»-ի դերը գնահատելի է, որպես ուսանող առաջին աշխարհաբար շաբաթաթերթ, որը, ըստ հրատարակչի, ոչ թե լրագիր պիտի համարվեր, կամ օրագիր, այլ մի ընթերցարան, որ պարզ, հանրամատչելի լեզվով բնական և հասարակական ընդհանուր գիտելիքներ էր տալու իր սկսնակ ընթերցողներին:

Ուշագիր ուսումնասիրության գեղարուժ ակնհայտ է դառնում «Արարատ»-ի մանկավարժական ուղղությունը: Եթե չհաշվենք կրոնա-ավանդական մի շարք հոգվածներ և գրաբար լեզվով գրած մի շարք բանաստեղծություններ, ապա «Արարատ» շաբաթաթերթի բովանդակությունը հիմնականում կազմում են գիտական, բարոյա-կրթական բնույթի գրույցները, մանրավեպերը, անեկդոտները, առակներն ու հանելուկները, որոնց զգալի մասը հեղինակել է ինքը՝ Գ. Պատկանյանը: Իրանք իրենց բովանդակությամբ ու ձևով հետապնդում են մանուկներին բնական և հասարակական գիտելիքներ տալու ժամանակի առաջավոր մանկավարժության պահանջը: Գ. Պատկանյանը հայտնում է, որ «Արարատ»-ը բոլոր էություն ոչ շաբաթաթերթ է և ոչ էլ օրագիր, այլ ընթերցանելի գիրք, որի նպատակն է ոչ թե սակավաթիվ հայ ուսյալներին զարմացնել, այլ բազմաթիվ ոչ-ուսյալների հոգևոր կրթությանը և դաստիարակությանը նպաստել: Իսկ նրանց համար պետք է գրել պարզ լեզվով, գյուրբմբունելի բաներ, որոնցից նախընտրելի

1 Մատենագրան, Պատկանյանների ֆոնդ, թղթ. 136, վավ. 25, էջ 44-45: «Ուսումնասիրություն, ուսումնարանք և ուսուցիչք», Ս. Պետերբուրգ, 1865 թ.:

2 Գ. Պատկանյանը որպես հրատարակիչ հայ մամուլի պատմության մեջ իր ինքնուրույն տեղն ունի: Նա խորապես գիտակցել է լրագրի հասարակական դերը և այդ պատճառով նույնպես վեճերի մեջ է մտել իր հակառակորդների հետ: Գ. Պատկանյանը 30 տարի շարունակ նախանձախնդիր էր տպարան բացելու, սեփական լրագիր հրատարակելու, բայց նրան անվերջ խանգարել են: Երկար տարիների ընթացքում հայկական տառերի մայրեր և կաղապարներ ձևեր բերելով 1848 թ. Թիֆլիսում նա երկու տարի շարունակ զբաղվում է՝ լրացնելու տպարանի սարք ու կարգը, օրեր ու գլխերն էր անցկացնում արհեստանոցում, անձամբ հղում, կոկում է արճիճը և վերջապես 1850 թվականին մեծ դժվարությամբ Թուլյովություն է ստանում «Արարատ» շաբաթաթերթը հրատարակելու: Ներսես Աշտարակեցին պահանջում է նրանից «Արարատ»-ում հրատարակվող ամեն մի հոդվածի մասին տեղյակ պահել իրեն: Գ. Պատկանյանը հայտնում է, որ լրագիրը հասարակաց շահերին պիտի ծառայի և ոչ թե առանձին մարդկանց կամքին: Մեծ դժվարություններով կարողանում է մեկ և կես տարի հրատարակել ու բաշ տալ «Արարատի» գոյությունը, իսկ 1851 թ. հունիսից հարկադրվում է փակել լրագիրը:

Այստեղ կարևոր ենք համարում հայտնել նաև, որ չնայած «Հյուսիս» շաբաթաթերթի պաշտոնական հրատարակիչը Ռաֆայել Պատկանյանն էր, բայց նրա փաստական անօրենք Գ. Պատկանյանն է եղել: 1863 թ. կեսերին, երբ դեռ Գ. Պատկանյանը արտոքում էր (Կոստրոմա), Ռ. Պատկանյանը գրում է հորը լրագիր հրատարակելու իր ցանկություն և նրա անօրինությունը հորը հանձնելու իր մտադրությունների մասին: Գ. Պատկանյանը տեղափոխվում է Պետերբուրգ և իր ձեռքը վերցնում «Հյուսիս»-ի աշխատանքը:

Ակնհայտ է, որ «Հյուսիս»-ը «Արարատ»-ի շարունակությունն էր, նրա զարգացումը: Այնտեղ տպագրված շնորհագիր հրատարակախոսական հոդվածների, մանրավեպերի և զեղարվեստական այլ տիպի բազմաթիվ հոդվածների հեղինակը Գ. Պատկանյանն է:

Քննանկեղծուները, պատմութիւնները, երգերը, «բնական վիպասանութեան պատկանյալ հատվածները, որ մեր ընթերցողաց ճաշակին և կարողութեանն հարմար և գյուրընկալ լինին»¹:

* * *

Գ. Պատկանյանը թողել է հարուստ և բազմաակնակ գրական ժառանգութիւն: Նա իր ուժերը փորձել է թե՛ գեղարվեստական գրականութեան բազմաթիւ ժանրերի, և թե՛ պատմագրութեան մեջ: Չբազմել է հայ և այլ ժողովուրդների պատմութեան տարրեր էտապների շատ ու շատ հարցերի ուսումնասիրութեամբ և լուսարանութեամբ: Միաժամանակ Գ. Պատկանյանը 1840—60-ական թթ. օգտվելով «Կովկաս», «Արարատ» և «Հյուսիս» շաբաթաթերթերին մասնակցելու իր ազատ հնարավորութիւններէն, հանդես է եկել հրատարակախոսական, բանասիրական բազմաթիւ հոգվածներով, սրունցով արձագանքել է հայ ժամանակակից կյանքի հետ կապված բազմազան հարցերին (աշխարհաբար և գրաբար լեզվի պայքար, գրականութիւն, դպրոց, ուսուցչութիւն, մանկավարժութիւն, թատրոն, տպագրութիւն և ազգային առաջագիմութեան հետ կապված այլ խնդիրներ): Նա մտահոգված է եղել հայ ընթերցողներին հաղորդակից անել նաև ուրիշ ժողովուրդների առաջավոր գիտութեան նվաճումներին. իրար հետեից գրել է գիտա-պոստուլյար հոգվածներ՝ թղթի, վառօդի, ժամացույցի, տպագրութեան գյուտերի, Հենրիխ նավագնացի և Քրիստափոր Կոլումբոսի ծովային ճանապարհորդութիւնների և այլ հայտնագործութիւնների մասին: Գ. Պատկանյանը ծրագրել էր գրելու «Հայ տպագրութեան պատմութիւն»... Բայց մենք, — գրել է նա, — մեզ համար անհրաժեշտ պարտք կհամարինք յետ այսօրիկ այս առարկայի վրա ճիշտ և լիակատար հաշիվ տանք մեր բանասեր ընթերցողաց և հայոց տպագրութեան պատմութիւնը ժամանակագրական կարգով լույս ընծայել՝ թե՛ երբ և ո՞ւր, ի՞նչ տպարան է ծաղկել, և ի՞նչ գրչանք են տպագրել, և ո՞րքան օգուտ են տվել ազգին կամ նորա գրականութեանը»²:

Ուշագրավ է Գ. Պատկանյանի գեպի հին և նոր ժողովուրդների պատմութիւնն ունեցած հետաքրքրութիւնը: Նրա արխիվում մենք հանգիստում ենք բազմաթիւ ձեռագիր տետրակների, սրունց մեջ շարադրված են մի շարք ազգերի հին և նոր պատմութիւնների թերի կամ ավարտված դրվագները (Անտիկ աշխարհ՝ Հունաստան, Հռոմ, հեթանոսական շրջանի ազգերի պատմութիւն, նրանց կառավարման ձևերի, կրօնների մասին, արևելյան ազգերի՝ շինացիների, հնդիկների պատմութիւն, նրանց բարքերը, նոր ժամանակների պատմութիւն, ծովային ճանապարհորդութիւններ գեպի արևելեյան Հնդկաստան, Ամերիկայի գյուտը, գեղարվեստի և ուսման վերածնունդի, ֆրանսիական սեռլյուցիայի մասին և այլն): Առանձին մասնագիտական ուսումնասիրութիւն է պետք պարզելու համար այս գործերի ինքնուրույն, թե՛ թարգմանական լինելը և ընդհանրապես նրանց գիտական նշանակութիւնը:

Գ. Պատկանյանը թողել է բազմաթիւ թարգմանութիւններ: Նա թարգմանել է 19-րդ դարի բուրժուական պատմարան-սոցիոլոգ Հենրի Թո-

¹ «Արարատ», 1850 թ., № 14, էջ 216:

² Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 137, վավ. 53, էջ 8ա—8բ:

մաս Բոկլիի «Քաղաքակրթության պատմություն Անգլիոյ» աշխատությունը¹ սուսական օրենքներ, զինվորական կանոններ, հրովարտականներ², սուսերենից թարգմանել է նաև մի անհայտ հեղինակի «Ջրասույցների փրկության մեծագործությունը»³ և «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը»⁴: Գ. Պատկանյանը կազմել է զասագրքեր, բառարաններ (սուսերեն-հայերեն, նոր հայերեն-սուսերեն) աշխարհարար և այլն⁵, կազմել է օրացույցներ⁶, նախիջևանի բարբառից աշխարհարար և այլն⁷, կազմել է օրացույցներ⁸ գրել է նաև տոմարական, կրոնագիտական բաղամթիվ աշխատություններ նրա գրչին է պատկանում նաև Հարություն Ալամգարյանի սովարածավալ կենսագրությունը, որից մի հատված միայն ապագրված է «Հյուսիս» շաբաթաթերթում⁹:

Այստեղ կարևոր ենք համարում մի քանի խոսք ասել Գ. Պատկանյանի թարգմանական գործերից մեկի՝ Շեքսպիրի «Համլետ»-ի մասին: Մեզ հասել է Գ. Պատկանյանի ձեռագրի մի մասը միայն՝ «Համլետ»-ի առաջին գործողության Ա, Բ և Գ պատկերները: Սակայն կասկածից վեր է, որ նա թարգմանել է ամբողջը, որովհետև մեզ հասած մասը մաքրագիր օրինակն է: Իսկ Պատկանյանը սովորություն է ունեցել ավարտված գործը միայն սրբագրել և ընդօրինակել խնամքով: Մեզ թվում է, որ «Համլետ»-ի թարգմանությունը Պատկանյանը պիտի կատարած լինի բանառում կամ աքսոբում, մինչև 1864 թվականը կամ նրանից հետո Պետերբուրգում՝ ոչ ուշ քան 1870-ական թվականների սկզբները⁸: Այսպիսով այդ թարգմանությունը դասվելու է Շեքսպիրի գործերի հայերեն առաջին թարգմանությունների շարքը⁹:

1 Մեզ հասել է Գ. Պատկանյանի թարգմանության սեպտեմբեր 1863 թ. օրինակը (Պետ. Մատենադարան, Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. № 62, վավ. 3): Մ. Նալբանդյանը իր «Նկատողություն» հրատարակչության հոդվածում շատ բարձր է գնահատում Թ. Բոկլիի սույն աշխատությունը: Նա 1862 թվականին նույնպես ցանկություն է ունեցել թարգմանելու վերոհիշյալ գիրքը: Հայանի է նաև, որ Մ. Նալբանդյանը մի բանաստեղծութուն է նվիրել Բոկլիի հիշատակին:

2 Նույն տեղում, թղթ. № 65, վավ. 60, 61:
 3 Մատենադարան, ձեռագիր № 6674:
 4 Տպագրված Աստրախանում, 1827 թ.:
 5 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 136, վավ. 20, թղթ. № 140, վավ. 119:

6 Նույն տեղում, թղթ. № 137, վավ. 56, 57, 58, 59, 60, 62, 63:
 7 Նույն տեղում, թղթ. 137, վավ. 51:

8 Հայանի է, որ Գ. Պատկանյանը ձեռության տարիներին նոր բան չի ավելացրել իր ստեղծագործությունների վրա. 1870-ական թվականներին նա մեծ մասամբ սրբազրում է բանառում և աքսոբում գրած իր երկերը և թարգմանությունները, որոնք հակառակ հայանի կարծիքին կազմում: 1863 թ. աքսոբավարում նրան այցելության եկած Ավետիք Թաղեղյանին զարմանք է պատճառում ձեռագրերի այն բերքը, որ տեսնում է Գ. Պատկանյանի մոտ: 1870 թվականների վերջերից Գ. Պատկանյանը ձեռնամուխ է լինում գրելու Ն. Նախիջևանի կոստանոպուլիցի պատմությունը (ավարտում է 1879 թվականին) և սովարածավալ ինքնակենսագրությունը (ավարտում է 1882 թվականին): Այդ տարիներից սկսած Գ. Պատկանյանը արդեն կիսով չափ կորցրած լինելով իր ստեղծությունը, մտափոխվում է աշխատանքով գրեթե չի գրադրում: 1888 թվականին նրան վերահաստատում են, որից մեկ տարի շանցած՝ 1889 թ. ապրիլի 14-ին, նա մահանում է և թաղվում Պետերբուրգի Սմոլնի գերեզմանատանը:

9 Սենեքերիմ Արծրունու և Հովհ. Մատենյանի թարգմանություններն ավելի ուշ շրջանի են պատկանում: Մ. Արծրունին «Համլետ» թարգմանել է 1880 թվականին (որը առաջին անգամ բեմադրվել է 1889 թ.), իսկ Հ. Մատենյանը՝ 1921 թվականին:

Հայանի է, որ սուսահայ թատրոնի համար այդ ժամանակաշրջանում (մենք նկատի ունենք 60-ական թվականները) աշխարհաբար լեզվով ինքնուրույն, թե թարգմանական պիեսներով հանդես գալը նոր և շատ դնահատելի երևույթ էր: Գ. Պատկանյանի «Համլետ»-ի թարգմանությունն այս նախաձեռնությունը պետք է համարել մի խիզախ և շատ դնահատելի գործ:

Ստորև մեջ ենք բերում «Համլետ»-ի Պատկանյանի թարգմանությունից մի հատված (առաջին գործողություն Բ տեսարանից):

ՀԱՄԼԵՏ (մենակ).— Ա՛խ, եթե իմ այսքան ամուր մարմինը կարողանար հարվիլ ու ցող գատնալ...: Ա՛խ, եթե նախահավիտյանը անձնասպանություն գեմ արգելք դրած չլիներ: Աստված, Աստված, ի՞նչպես դբդույն և արհամարհ, ի՞նչպես սնտախ են երևում ինձ կյանքի վայելչությունները: Ի՞նչպես խղճալի է այս աշխարհը: Մոլախոտայալ հին պարտեզ, ուր որ միայն ցախ ու անպիտան խոտեր են բսնում: Կարելի՞ էր որ մինչև այս տեղ հասներ...: Դեռևս երկու ամիս է՝ որ մեռաւ... Ի՞նչ եմ ասում, գեռես երկու ամիս էլ չկա:

Այնպիսի մեծ միապետ, որ այժմյան թագավորի հետ համեմատելով՝ էր այժմարդի առջևը Հիփերիոն... որ այնքան քնքույշ սիրով սիրում էր յուր դուզակցին... քամիին արգելումն էր տալիս, որ նորա երեսին անդգուշարար չըփչե... երկինք, գետին: Ա՛խ, ինչի՞ եմ ես միտքս բերում: Նա էլ նրան ի՞նչպես սերտ էր մածանում, որպես թե կեքակուրն ավելի ուժգին էր քաղցր դորացնում...: Եվ ի՞նչ, հազիվ թե անցավ մեկ ամիս միայն... Հերիք է... էլ չընիշենք, միտքերս չըրերենք: Անհաստատություն: Քո անունը կին: Դեռ մեկ ամիս: Դեռ այն ոտնամանները մաշված չեն, որոնցով որ գնում էր նա իմ հոր դագաղի հետևեն՝ արտասուքի մեջ՝ Նիորիայի նման...: Եվ այս կինը...: Ո՞վ երկինք: Անմիտ գազանը այսքան շուտ չէր մոտանար յուր կրսկիծը: Իսկ սա արգեն ամուսնացած է. իմ հորեղբոր կինն է, յուր մեռած մարդու եղբորը, որ այնքան նման է նրան, որքան որ ես նման եմ Հերքուլեսին: Մեկ ամսումը...: Օրինազանց շտապ: Այսպես հոժարություն մտադյուր ճեպել դեպ ի ազգապղծության անկողինը, լավ բան չէ, այստեղ հաջողված չի լինիր: Փշրվի՛ր սիրտ: Ինձ մտում է լուր՝:

* * *

Ամենից ավելի ուշադրություն արժանի են Գ. Պատկանյանի գեղարվեստական երկերը: Նա գրել է գրաբար և աշխարհաբար լեզվով բազմաթիվ պոեմներ, վեպեր, պատմվածքներ, սյրերգություններ, բանաստեղծություններ, առակներ և այլ ժանրի ստեղծագործություններ: Այս բազմատեսակ ստեղծագործությունների համար նյութ են հանդիսացել թե ժամանակա-

1 Պեա. Մատենադարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթ. № 62, զավ. 15, էջ 7ա:

կից իրականությունը և թե պատմական անցյալը, հայ նախնիները, դիցաբանական հերոսների կյանքն ու պայքարը:

Գ. Պատկանյանը գրել է սկսել վաղ, պատանեկության տարիներից: Բայց այդ շրջանի գեղարվեստական երկերը մեզ չեն հասել: Մինչև 1850 թվականը նա խճճված լինելով հասարակական, եկեղեցական հարցերի շուրջ ծագած վեճերի մեջ, հնարավորություն չի ունեցել շատ բան գրելու: Իսկ, ինչպես ինքն է վկայում, 1853 թվականին, ձերբակալության ժամանակ, նրա ունեցած արխիվը բռնագրավել են և հետագայում չեն վերագարձրել: Հենց այդ է պատճառը, որ այժմ Հայաստանի արխիվներում պահպանված նրա թվակիր երկերը սկսվում են 1853 թվականից: Ձեռագիր երկերի մի զգալի մասն էլ անթվակիր է, ուստի և գծվար է որոշել նրանց ժամանակը: Մի շարք երկերի գրության հանգամանքների մասին վստահելի տվյալներ կան Գ. Պատկանյանի ձեռագիր հիշատակարանում: Բայց այստեղ էլ նա իր ոչ բոլոր երկերի ստեղծագործական պատմության մասին է խոսք բացում:

Գ. Պատկանյանի բանաստեղծութուններից մի քանիսը առաջին անգամ տպագրվել են Գամառ Քաթիպայի տետրակներում, իսկ հետագայում Կ. Պոլսում ու Ջմյուռնիայում տպագրվել են նրա հեթանոս երգերից ու դյուցազներգություններից շատերը: Երկերի մի զգալի մասն էլ ֆնացել է ձեռագիր վիճակում և պահպանվում է զանազան արխիվներում:

Գ. Պատկանյանի գրական ժառանգության մեջ ամենից արժեքավորը աշխարհարար լեզվով և ժամանակակից թեմատիկայով գրված երկերն են՝ թե արձակ, և թե շարժած: Որոշակի արժեք են ներկայացնում նաև պատմա-դիցարանական երկերը: Դրանցից հատկապես, այսպես կոչված, Գողթան երգերը՝ «Հարսանիք Արտաշեսի և Սաթենիկա», «Յուլունսն Շամիրամայ», «Արի արքայն արքայից», «Վահագն» և այլ, 19-րդ դարի 40—60-ական թվականներին՝ հայկական լայն շրջանների ամենասիրված և տարածված երգերից են եղել. դրանք իրենց հին գուսանական-բանաստեղծական ինքնատիպ արվեստով ու վարակիչ հուզականությամբ մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց հմայքը:

Յուլունսն Շամիրամայ,

Յուսութք յուլունսն Շամիրամայ,

Յուսութք ի ծով ծածանէին,

Ծածանէին ի ծով ծիրանի —

Յուսութք ի ծով ծիրանի:

Ծիժագախիտ ծածանէին:

Յուլունսն Շամիրամայ,

Յուսութք յուլունսն Շամիրամայ,

Ծածանէին ի հով դովարար,

Ծածանէին ի ծով ծիրանի,

Գիսակք ի հով հիւսիսոյ,

Սիրապատար տարուբերէին:

Յուլունսն Շամիրամայ,

Ծածկոյթք յուլունսն Շամիրամայ,

Ծածկոյթ գսաինսն սքողէին —

Սքողէին յաչաց պատանեկաց,
Ծածկէին յաչաց պատանեաց,
Յաչազելով դատինսն սքողէին¹։

Պետք է նշել նաև, որ շնայած այդ տատնամյակներում հայ նոր պոեզիան, ի դեմս նրա խոշորագույն ներկայացուցիչների՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահազիզի, արդեն իր զարգացման նոր և որոշակի հունի մեջ էր մտել, սակայն Գ. Պատկանյանի թե վերահիշյալ երգերը և թե մի շարք այլ բանաստեղծությունները («Օրորոցի երգ գյուղական այրի կնոջ», «Գեղեցիկ Նախիջևան», «Քրանաջան այգեսղան», «Իշխան անխելք և հիմար», «Առ հայրենիս» և այլն) իրենց արվեստով և բովանդակությամբ միանգամայն համահունչուն են հենց այդ նոր և իշխող պոեզիայի ընդհանուր ոգուն։ Գրանք միաժամանակ գրսևորում են նաև բազմատանջ բանաստեղծի անձնական և հասարակական խոհերը, հոգեկան ծանր վիճակը։ Այս տեսակետից շատ բնորոշ են 1866 թվականին նրա գրած մի բանաստեղծության հետևյալ տողերը.

Հոգիս վիրոք վշտացած է,
Սիրտս խոթ է ցավերով,
Աչքես սպիաս չեն արտասուք,
Շրթունքս լի ողբերով։

Հույս չմնաց առողջության.
Մեկ ճար չեղավ դեղերից,
Սրտին դեղքն չեղան օգուտ,
Զայրացան ցավքս թույներից։

Առաջ ինձ ախտ սպաճառեցին,
Զավակացքս գաղջութունք,
Պատկառելի այլացս դեմ,
Արհամարհոտ սեգութունք²։

«Առ հայրենիս» բանաստեղծության մեջ դարձյալ իր նույն հալածական ու հուսահատական վիճակը պատկերելով, բանաստեղծը սակայն հանգում է այն վճռական եզրակացություն, որ հայրենիքի շահերը պահանջում են ոչ թե լուր, խոնարհվել թշնամու առաջ, այլ պայքարել նրա դեմ։

Քանի անգամ ես երգում եմ արել,
Արդի վիճակիս զանձն իմ ենթարկել,
Սանձ դնել սրտիս, սանձ դրնել կամաց,
Սանձ դնել հոգույս անսանձ մզանաց։

¹ Միանասրյան, Քնար հայկական, էջ 248—249; Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 135, վավ. № 2, էջ 12։

² Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 62, էջ 44—45, թղթ. № 137, վավ. 58, էջ 18ր։ Այս և սրան հաջորդող բանաստեղծությունները անսխալ են։

Երդում եմ արել հանդարտ և մեղմիկ,
 Կյանքս անցուցել խաղաղ և լռիկ,
 Եվ բոցաբորբոք իմ հեծեծանաց
 Չայն կրքեք չառնել քեզ առիթ վշտաց...

Երբ քաջիկ սրգիքդ ցայտեն կայծակունք,
 Երդում եմ արել, որ հոգույս ձգամունք,
 Նոցա մեջ հուսոս կայծեր չորոնեն,
 Այլ լսիլ դարգացման նըշաններ կարծեն:

Երդում եմ արել օրեր առանձին
 Վառել աննշան, անհայտ ու մըթին. —
 Բայց երբ լավեցավ քս ձայնն անուշիկ,
 Տնդեցան կրգմունքս, ուխտերս խարուսիկ¹:

Այս բանաստեղծութունն անթվալիբ է. բովանդակութունից երևում է, որ բանտում կարող է գրած լինել:

Թվում է, թե Հ. Խալիբյանից կեղեցական գումարների հաշիվները պահանջելու առիթով է գրված հետևյալ բանաստեղծութունը, որի առաջին տողերն անընթեռնելի են:

... Իշխան անխելք հիմար
 Մնաց անտեր...
 Պահանջեցին հեշտ հաշիվներ,
 Ամեն գործոց ինչ արել էր:

Միտքն է այն դուռը փակելը,
 Պարզամիտ խափխփելը,
 Որով հիմար այդ մեծատուն,
 Երևում է Պիգամալիսն...²

Հետաքրքիր է նաև «Փունջ հայոց պատմութեան» բանաստեղծութունը, որտեղ բանաստեղծը հայ քաջերի դովքն է անում սկսած Հայկից՝ մինչև Գավիթ բեկը:

Գ. Պատկանյանն ունի նաև լիրիկական շնչով հագեցված պարզ և սահուն բանաստեղծութուններ և քառյակներ, որոնց մեջ ղգալի է բնության կենդանութունը, դարձան թարմ շունչն ու բուրմունքը:

Հասավ դարձան կղանակը,
 Դաշտք և հովիտք ծաղկեցան,
 Ահա բյուրյուզն ու կրգնակը
 Արտաներում փովեցան³:

Հաճախ բանաստեղծը բնության դարթոնքը հակադրում է հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական անապահով վիճակի, օտար բռնակա-

¹ Մատենագարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 21, էջ 2բ:

² Գրական թանգարան, Պատկանյանների Ֆոնդ, վավ. 38, էջ 19:

³ Մատենագարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 58, էջ 20բ:

լուծյան լծի տակ նրա կրած տառապանքների հետ: Նա հուսահատ բողոքում է, թե՛ երբ պիտի դարուն դա նաև իր ժողովրդի համար, միթե՞ նա դեռ շատ պիտի մաքառի ու տանջվի իր կյանքի դարնան համար: Նրան թվում է, թե բնության դարթոնքի հետ պիտի վերանան և հայ կյանքի մութ ու մռայլ կողմերը:

Գարուն հասավ, դաշաք ու հովիտք դալարանան,
Եվ լսեցավ սղատ ծիծեռանց ձայն հրճվական,
Կարծում եմ թե երկինք երկիր ծափ են դարնում,
Եվ արհավիրք մութ խորհրդո են հեռանում:

Գարուն հասավ, ամենայն ինչի մեջ բնության,
Մազկի, զարթնի երկայն քնո խոր թմբության,
Բայց այս կենոք մեր առջև ինչ այլ կա պատրաստ,
Մեզ համար երբ կուգա գարուն սիրապատվաստ¹:

Ուշագրավ են նաև Գ. Պատկանյանի մշակած առակները, ասացված քները, որոնք նույնպես ժամանակակից սոցիալական հարաբերությունների արտացոլումն են: Այսպես օրինակ.

Գեղը գտել է անգաղան,
Ման է գալիս անգավաղան:

Կամ

Գեղը գրտել է անշուն,
Անցուպ շրջի տընեաուն:

*

Մի անցաներ վատթար մարդու կամուրջեն,
Թող քեզ տանեն հեղեղանորդ հոսանքը,
Մի ուղենար ապաստանի վառ մարդեն,
Թող գիշատեն քեզ առյուծի ճիրանքը²:

Գ. Պատկանյանն ունի նաև ուշագրության արժանի գեղարվեստական արձակ երկեր — «Ամառ», «Զորս եղանակ», «Մրտանց բարեկամություն», «Դրացի», «Վարդանամակ»³ և այլն: Առաջին երկուսը խորհրդածություններ են բնության մասին, գրված պարզ ու մառչելի աշխարհաբար լեզվով: Հաջորդները պատմվածքներ են՝ Նախիջևանի բարբառով, որոնք պատկերում են ն. նախիջևանցիների բարքերն ու սովորությունները, լուսավորության վիճակը: Իսկ վերջինս վեպ է՝ աշխարհաբար լեզվով գրված 1860 թվականին: Այստեղ մենք հարկ ենք համարում ավելի մանրամասնորեն քննարկել «Վարդանամակ», կամ «Արկածք Վարդանա», երկը՝ որպես անհամեմատ ծավալուն գեղարվեստական ստեղծագործություն:

¹ Մատենադարան, Պատկանյանների առիթով, թղթ. № 136, վավ. 21, էջ 2ա:

² Մատենադարան, Պատկանյանների արիթով, թղթ. 136, վավ. 21, էջ 1բ—2ա:

³ Դրանք բոլորն էլ անտիպ են:

19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ գեղարվեստական արձակի մեջ հայտնի են թվով ոչ շատ վիպական ստեղծագործություններ: 1860 թվականին աշխարհարար լեզվով գրված վեպը, որքան էլ այն գեղարվեստորեն պակասավոր լինի՝ ինքն ըստ ինքյան ուշագրավ է:

«Արկածք Վարդանա» վեպի շապիկի վրա գրված է՝ «Վարդանամակ — շարագրութուն Վահագնի Գ. Պատկանյան պորուտչիքի թուլյան Եգերեան գնդի»¹: Այս գրութունից ելնելով «Արարատ» ամսագրում (1902 թ., № 9) տպագրված Գ. Պատկանյանի երկերի ցանկի մեջ «Վարդանամակը» վերագրվել է Վահագն Պատկանյանին:

Վահագն Պատկանյանը Գ. Պատկանյանի չորրորդ որդին է, Ռաֆայելի կրտսեր կորայրը: Պատկանյանների հանրահայտ տոնմի թողած մեծ ժառանգության և նրանց վերաբերյալ մեզ հայտնի տպագիր և ձեռագիր աղբյուրների մեջ սակավ տեղեկություններ կան Վահագնի մասին: Հայտնի է, որ նա ծնվել է 1834 թվականին: 1842 թ. ընդունվել է Վորոնեժի զինվորական դպրոցը: Մասնակցել է Ղրիմի պատերազմին, իսկ հետագայում ապրել է Պետերբուրգում, զբաղվել է ծխախոտավաճառությամբ՝ խնամելով իր ձեռացած ծնողներին: Հայ գրականության պատմության հետ Վահագն Պատկանյանի անունը աննշվում է երկու թույլ գործով: Առաջին՝ Գ. Պատկանյանի «Արարատ» շարաթաթերթում Վահագնի անունով տպագրվել է «Յնորք մտաց» խորագրով Կիկոսի հանրածանոթ հեքիաթը, ընդամենը մեկ էջ: Երկրորդ՝ Վահագնին է վերագրված Վիկտոր Հյուգոյի մի բանաստեղծության թարգմանությունը², որից պահպանված երեք ինքնագիր օրինակներն էլ պատկանում են Գ. Պատկանյանի գրչին: Այս թարգմանական բանաստեղծության մաքրագիր օրինակի տողատակում Գ. Պատկանյանը խնդրում է «Մասիս»-ի հրատարակչին տպագրել այդ բանաստեղծությունը «Ի նշան հայր-որդիական մտերմության»: Գրական թանգարանում պահպանվում է նաև Վահագնի ինքնագիր մի նամակը ուղղված իր հորեղբոր որդուն՝ Քերոբե Պատկանյանին: Նամակը գրված է խիստ անվարժ հայերենով: Այս բոլորը ցույց են տալիս, որ Վահագն Պատկանյանը գրական ստեղծագործական աշխատանքով չի զբաղվել և որ վեպի շապիկի վրա եղած նման հիշատակությունը գրական մի ձև է և ուրիշ ոչինչ: Մանավանդ որ վեպը գրված է Գարրիել Պատկանյանի հանրածանոթ ձեռագրով:

«Վարդանամակ» կամ «Արկածք Վարդանա» վեպը³ մեզ հասել է սևագիր և անավարտ վիճակով. գրված է տևարակի 46 գեղնավուն թղթի վրա, դարչնադույն թանաքով, խիստ մանր, հաճախ աննշմարելի տառերով: Վեպը

¹ Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 136, վավ. 18:

² Գրականության ու արվեստի թանգարան, Պատկանյանների ֆոնդ, վավ. № 20:

³ Պետ. Մատենադարանի արխիվ, Պատկանյանների ֆոնդ, թղթ. № 136, վավ. 18:

Գ. Պատկանյանի կյանքի և գործունեության մասին սույն ակնարկը գրելուց հետո, մեզ հայտնի դարձավ նրա գրական մի այլ երկը՝ «Ելուցան մեր ժամանակի, կամ դաստիարակության ճշգրիտ անցք» վիպակը: Այստեղ ներկայացվում է գրիմահայ առևտրականների մի ընտանիքի կյանքի պատկերը. այս ֆոնի վրա հեղինակը բնագատության է ենթարկում կեղծ ազդայիններին, ժամանակի բախտախնդիր այն մարդկանց, որոնք մեծամեծ միասնեք են հասցնում ազդային դաստիարակության և առաջագիմության գործին: Վիպակը գրված է 1855 թ. աշխարհարար լեզվով, գործողությունը կատարվում է Կ. Պոլսում և Ղրիմում: (Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. Կ. 61):

բաղկացած է 15 գլուխներից: Ունի առաջաբան: Ըստ երևույթին գրչական սխալի հետևանքով 4-րդ գլխին հաջորդում է 6-րդը, իսկ 15-ից վեպն ընդհատվում է:

Գ. Պատկանյանի «Վարդանամակ» վեպը իր բնույթով պատմա-արկածային ստեղծագործություն է, այս առումով էլ թարմություն է ժամանակակից արևելահայ արձակ գրականության համար: Հեղինակի կողմից այս թեմայի բնարությունը պիտի բացատրել ուսսական գրականության մեջ արդեն տարածված ծովային ճանապարհորդական գրականության ազդեցությամբ, իսկ գրելու կոնկրետ շարժառիթը կղել է Գանինել Գեֆոյի «Ռորինդոն Կրուզո»¹ վեպը, որի ազդեցությունը բացահայտելն նկատվում է Գ. Պատկանյանի այդ երկի վրա: Առաջաբանում հեղինակը պատմում է այդ արկածների հերոսի՝ Վարդանի մանկության, պատանեկության, ուսումնասնության մասին, իսկ առաջին գլխից սկսվում է արկածների բուն պատմությունը:

Վարդանի հայրը՝ պղնձագործ Ավետիքը, Ալաշկերացի է. գալով Թիֆլիս, ամուսնացել է հավլարացի ոմն ջուլհակի դստեր՝ Մարգարիտի հետ: Վարդանն իր աշխատասեր ծնողների բարերար հսկողության տակ ստանում է լավ կրթություն ու դաստիարակություն: Պղնձագործ Ավետիքը իր որդուն ուղարկում է Աստրախանի Աղաբարյան դպրոցը, իսկ հետո Մոսկվա, այստեղից էլ Վենետիկ: Սուրբ Ղազարի վանքում նա ծանոթանում է մի անգլիացի արքայազնի հետ, որի թարգմանն ու քարտուղարը գանալով, շրջագայում է նրա հետ նշանավոր քաղաքներ: Վարդանը Կոստանդնուպոլսից նավ նստելով կամենում է Մոսկվա վերադառնալ՝ Հազարյանների մոտ մի պաշտոն ստանալու հույսով, բայց ճանապարհին արտասովոր փոթորիկը փոխում է նավի ընթացքը: Ուղևորները մակույկներով փախչում են, իսկ Վարդանի մակույկը թաղվում է ավազակության մեջ: Մնալով մենակ, մեկնում է անմարդարնակ մի կղզի և բնակություն հաստատում այնտեղ, ուր երբեմն գալիս էին նաև ծովահեններ, իրենց կողոպուտները թաղցնելու նպատակով: Վարդանը ծովում խեղդվելուց ազատում է իտալացի մի ազնվա՝ Ռոզալիային և հետագայում ամուսնանում նրա հետ: Ծարունակելով իր արկածային կյանքը, Վարդանը իր նոր ընտանիքի հետ սպասում է հայրենիք վերադառնալու բարեհաջող գիտվածի: Ռոզալիային նա պատմում Թիֆլիսի, Ղլարի, Աստրախանի, Ն. Նախիջևանի մասին, սկսում է կրոնա-ալանդական մի պատմություն Երուսաղեմի մասին, և հենց այստեղ էլ ձեռագիրն ընհատվում է:

«Վարդանամակ» վեպի սյուժեն առաջ է գնում երկու գծով, զուգահեռ կերպով: Մի կողմից ներկայացվում է Վարդանի արկածների հաջորդական պատմությունը, մյուս կողմից 18-րդ դարի առաջին քառորդի հայ պատմական իրականության մի շարք կողմերը: Վեպի արկածային մասը ընթերցանության համար հանրամատչելի մի նյութ է, շարադրված պարզ արվեստով, ինքնատիպ սճով: Գրանով Գ. Պատկանյանը հակադրվում է երևիսանների գաստիարակության կղերա-սրահպանողական հայացքներին, պաշտպանելով իր ժամանակի համար բազմակողմանի և ազատ գաստիա-

¹ «Ռորինդոն Կրուզո»-ն Պատկանյանների ընտանիքի սիրված զբոսներից մեկն է կղել. Ռ. Պատկանյանը (1857 թ.) թարգմանել է այն, Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ում խրատուսել է Ռ. Պատկանյանի այդ նախաձեռնությունը:

բակության սկզբունքները: Նա գանում է, որ երեխային փոքր հասակից պիտի ընտելացնել անային ամեն տեսակ գործերի, աստիճանաբար սեր արթնացնել նրա մեջ գեղյի ուսումը, գիտությունը, տրհատները: Նրա համար պայմաններ ստեղծել շրջագայելու, ծովային ճանապարհորդություններ կատարելու, այլ ժողովուրդների հետ շփվելու, նրանց պատմությունը յուրացնելու, լեզուներ սովորելու և այլն:

Այս բոլորը «Արկածք Վարդանա» վեպի մեջ առաջնակարգ նշանակություն ունեն: Մարդուն իր գոյության ընթացքում հանգիպում են ամեն կարգի գծվարություններ, փորձություններ, նա պետք է գինված լինի գիտելիքներով, կենսական փորձով, որպեսզի կարողանա այդ գծվարությունները հաղթահարել: Այս է Գ. Պատկանյանի պահանջը. հենց այս պատճառով էլ նա իր հերոսին տանելով կյանքի մի երկար ճանապարհով, տալիս է կենսական, հասարակական բնոճանուր գիտելիքներ և ապա գցելով նրան գծվարությունների մի մեծ շղթայի մեջ, նրա ստացած գիտելիքների ուժով էլ դուրս է հանում այդ գծվարություններից: Մնալով անմարդարնակ կղզում, Վարդանը ձգտում է իշխել ոչ միայն իր, այլ և շրջապատի վրա. տարիներ շարունակ ապրելով այնտեղ, նա ստեղծում է իր համար ապահով կյանք՝ կենցաղի մեջ մտցնելով այն ամենը, ինչ նա տեսել ու սովորել էր Թիֆլիսում, Աստրախանում, Նախիջևանում, Գյումուշխանում, սուսական և եվրոպական նշանավոր քաղաքներում: Քարտաշության, բրուտության, ատաղձագործության ու այլ արհեստների ծանոթություն ունենալը նպաստում է, որ նա կղզում իր համար անհրաժեշտ սարք ու կարգ, արոր-գութան, սայլակի, նավակի, սեղան, տնակ պատրաստի: Հավիարարում տատանց տանը պարտիզպանություն սովորած լինելով, նա կղզում բանջարանոց և այգի է մշակում, պատվաստներ անում, պտուղներ աճեցնում. գանազան լեզուներ իմանալը փրկում է նրան ծովահենների վտանգից: Քուռ գետում լավ լողալ սովորած լինելով, նա աներկյուղ թիավարում է օվկիանոսի ջրերում: Սողի ապուխտ պատրաստելու, ձուկ որսալու, չորացնելու, խավյար պատրաստելու ժամանակ կիրառում է լեճ գինվորների, Թիֆլիսի, Աստրախանի հայերի, վրացիների, սուսների սովորությունները: Առյուծը սայլակին լծելիս, հիշում է, թե ինչպես Թիֆլիսի Տափի թաղում իր շնիկին էր նույն ձևով սայլակ լծում: Մի խոսքով Վարդանը կղզում բնակվելով ոչ միայն չի օտարանում մարդկային կյանքին այլ ամենայն ճշտությամբ ձգտում է այնտեղ կիրառել այն սովորությունները և գիտելիքները, որ նա ստացել էր կյանքից:

Վեպի մեջ հետաքրքիր են Վարդանի՝ վայրի կենդանիների հետ ունեցած արկածները, հատկապես առյուծի, կապիկների փոխհարաբերությունները, Վարդանի փորձերը նրանց միմյանց ընտելացնելու, հաշտեցնելու համար: Ընթերցողը ծանոթանում է մի շարք կենդանիների ու թռչունների՝ առյուծ, արծիվ, թուխակ և հատկապես կապիկների մի շարք տեսակների հատկություններին: Վարդանի արկածների միջոցով հեղինակը ձգտում է համոզել, որ հեռուգրական հոգատարությունը, խնամքը, դրա հետ միասին և համարձակությունը, խիղախությունը, կարող են ապահովել մարդու գերիշխանությունը կենդանական աշխարհի վրա: Այս սկզբունքով է Վարդանը սկսում իր աշխատանքը առյուծի հետ, հանելով վիրավոր առյուծին մի խոր փոսից, մաքրում է նրա սաքի վերքը, բուժում, ընտելացնում նրան, դարձ-

նկյով իր առաջին օգնականն ու հովանավորը: Մի շարք հետաքրքիր մոմենտներով վեպում ներկայացվում է առյուծի երախտագիտությունն ու փոխադարձ նվիրվածությունը տիրոջ նկատմամբ (որսի է գնում Վարդանի հետ, փրկում է նրա կյանքը կապիկի հարվածից, պաշտպանում է ծովահեններին, ավազակների հարձակումներից, գիշեր ու ցերեկ արթուն հսկում է նրա քարայրն ու անտեսությունը): Նույն բնակացման մեթոգով Վարդանը կապիկներին վարժեցնում է անային ամեն տեսակ գործերի մեջ, նրանք մաքրում են տան հատակը, հավեր են փետրում, կերակուր եփում, մատուցում, ձուկ որսում, սշխարներին արածացնում, ջրում և այլն:

Վեպում ուշագրավ են նաև Վարդանի և ծովահենների արկածները:

Գ. Պատկանյանը քննադատություն է ենթարկում անգլիական ծովահենների գործունեությունը, ներկայացնում ավազակային կյանքի ու կենցաղի աշխանակ պատկերը, նրանց հոգեբանություն յուրահատուկ գծերը: Մտթ ու ահավոր է ավազակների կերպարը. խորամանկ, արնախում ավազակապետ հեշտություն մշտնջացնում է իր երեսուներեք բնիկերներին, որպեսզի ինքը միայնակ տեր դառնա նրանց տասը տարիների ծովահենության վաստակին: «...Սորա բնիկերակիցքը հենք են և մարդագող, որ ամենայն կողմերը ծովի մեջ ման գայով՝ ոչ թե միայն նավերու հափշտակություն են անում, այլև մարդ են գերի բռնում և հեռավոր աշխարհումը մարդագին վաճառականներուն ծախում... Ես թեպեան մարդու բնիկություն կցանկանայի, բայց ոչ այսպես մարդու. սա մարդկության գիրտն էր...»¹ — պատմում է Վարդանը՝ կզգում իրեն հանդիպած հարբած ավազակի մասին:

Ծովահենների արկածների, ըստ էության, սոմանտիկ նկարագրությունների միջոցով Գ. Պատկանյանը ընդգծում է ժամանակակից իրականությունից փոզի տիրապետության ախտը հեռանքները: Կուտակումների, հարստանալու տենչը ապականել է մարդկային հոգին, հարստանալ հնարավոր է միայն սճրագործությունների ճանապարհով, սակին է հրահանգողը մարդկային մաքի և զգացմունքների, նրա համար ստնատակ է արվում ամեն մի սրբություն: Հեղինակը այդ նույն միտքը բառացիորեն արտահայտում է նաև իր հերոսի միջոցով: Վարդանն իր գարի մարդ լինելով, տեսել ու զգացել է սակու ահավոր գերն ու զորությունը: «Գիտեմ թե սակին ինչ գորություն ունի, թեև ամայի կզզվո մեջ, ևս ինքս նորա գորությունը իմ անձի վերա փորձել էի, երբ որ անգլիացվոց արքայազնի քսակը իմ ձեռիս էր ճանապարհորդության ժամանակը. ինչ սրտեր էր իմ առջև նվաճում, և ինչ մրրիկներ էր զիջուցանում, կարծում էի թե սակունցն համար է սասձ՝ Ես երթայց առաջի քս, զլերինս հարթեցից, և զգրունս սղնձիս խորտակեցից, և զնիզս երկաթիս փշրեցից...»²:

«Արկածը Վարդանա» վեպը ավելի քան արժեքավոր է իր հաղորդած պատմական տեղեկություններով, 19-րդ դարի առաջին քսաորդի հայաշատ մի շարք քաղաքների կյանքի ու կենցաղի վերաբերյալ եղած նկարագրություններով:

Մեր առաջ որոշ կողմերով վերականգնվում է Թիֆլիսը՝ իր բնակչությունով, նրանց գրադմունքով, պարզվում է, թե ինչ արհեստներ են գար-

¹ «Արկածը Վարդանա», էջ 16ա:

² Նույն տեղում, էջ 25բ:

դացած եղել նրանց մեջ և այլն: Մեր գրականության մեջ այստեղ ենք առաջին անգամ հանդիպում պատմական Հարվարարի կյանքի ու կենցաղի որոշ նկարագրությունը: Թիֆլիսը ներկայացված է որպես հայության կուլտուրայի և առաջադիմության մեծ օջախ: «Թիֆլիսը զինի Պետերբուրգեն և Մոսկովայեն Ռուսաստանի երևելի քաղաքներեն մեկն է...» — գրում է հեղինակը:

Գ. Պատկանյանը նկարագրում է հայ մանուկների կրթության համար ստեղծված այն պայմանները, որոնք գոյություն ունեին դեռ մինչև Ներսիսյան դպրոցի հիմնադրվելը: «Այն միջոցն, որ ևս միայն լսելով Սերսի վարժապետի անունը, միշտ գնում էի այն թուքանի առջև, ուր որ տասնուհինգ կամ քսան տարի առաջ այն գիտնական անձն աշակերտ էր կարգացնում, և որտեղաց որ երևելի անձինք էին առաջացել, որոնց որ Թիֆլիզի մեջ մատով էին ցույց տալիս, իմ ուսմանս փափագը լցուցանել չէի կարողանում»¹, — պատմում է վեպի հերոսը: Վեպում նկարագրված է նաև հին Թիֆլիսի որոշ թաղամասերի արտաքին տեսքը և այլն:

Այստեղ գծագրված է նաև Աստրախանի կյանքը 19-րդ դարի սկզբներին (մասամբ նաև հին շրջանի): Նկարագրված են քաղաքի արտաքին և ներքին դիրքը, շրջակայքը, բերդերը, եկեղեցիները, նշանավոր փողոցները, շուկաները, գրոսավայրերը, կամուրջները, պետական-պաշտոնական հաստատությունները, դպրոցները, գրադարանները և այլն: Հայերը Աստրախանում ունեցել են բազմաթիվ եկեղեցիներ, հոգևոր գործերի կոնսիստորիա, վարժատուն, «վարժարանաց բնակարան», տպարաններ, հայերեն և ռուսերեն գրքերով հարուստ մատենադարան: Աստրախանում բնակվել են 1000 տուն հայեր, որոնք ունեցել են առանձին դատաստանատուն, մեծ մասամբ գրադվել են վաճառականությամբ, ունեցել են նաև գործարաններ՝ «քարխանայ», որոնցում արտադրվել են մետաքսյա գործվածքներ, կերպասներ, ունեցել են նաև լավ պարտեզներ, այգիներ, ոչխարների հասակեր, ձիերի երամակներ: Չարգացած է եղել պղնձագործությունը, երկաթագործությունը, ներկարարությունը, ժամագործությունը, հյուսնությունը և այլ արհեստներ: Նույն կարգով վեպում նկարագրվում է Ն. Նախիջևան և Ղզլար հայարնակ քաղաքների կյանքը: Պատկանյանն արտացոլել է նաև այդ քաղաքների առևտրական, տնտեսական փոխհարաբերությունները: Նա քննադատաբար բնորոշում է նաև այդ հարաբերությունների ոչ բարերար ազդեցությունը հասարակական տարրեր շերտերի կյանքի, կենցաղի և հոգեբանության որոշ կողմերի վրա: «Թմիչքը, թղթախաղը, ամեն տեղ մեկ հասարակաց անշուշտ հարկավորություն էր գարձել: Ո՛չ թե այլ գրյանք, կազեթ կամ օրագիր կարգացողները ևս շատ սակավ են գարնվում»² — բողոքում է նա: Պատկանյանը քննադատությունն ուղղում է հատկապես ունևոր դասի դեմ: Առևտրի շահը մեծացնում է նրանց մեջ ուսման ու գիտության տենչը: «Մեծատան որդին ասում է. իմ հայրս ինձ չափ ևս չդիտեր գրել կարդալ, և այնքան հարստության տեր դարձավ, ինձ լինչ է հարկավոր կրթությունը»³, իսկ բնագահառակը «աղքատաց որդիք իրանց բնիկ խոնարհությունը կսովորին, թե որ սովորեցնող լինի...»⁴, ասում է վեպի հերոսը:

¹ «Արկածք Վարդանա», էջ 20:

² Նույն տեղում, էջ 34ա:

³ Նույն տեղում, էջ 34բ:

⁴ Նույն տեղում, 36բ:

Գ. Պատկանյանը Ղզլարի, Նախիջևանի, Աստրախանի հայերի կենցաղի ու կուլտուրայի հետազոտությունը, հասարակական հիմնադրամիջոցները քաղաքում է միայն և միայն գիտություն, լուսավորության պահպանում, առանձին մարդկանց վատ կամ լավ արարքներով կամ դերով: Ըստ Պատկանյանի, եթե ամեն ոք ուսման կարևորությունը հասկանա, ապա ամեն տեսակ շարիք կվերանա: Պատկանյանը, զգալով գիտության և լայն լուսավորության համար ֆեոդալական հասարակարգի ստեղծած կապանքները, հնարավոր է համարում հասնել ապահով կյանքի, անհատների՝ հատկապես հարուստների անշահախնդիր ու անխանջ աշխատանքի միջոցով:

Լուսավորության և քաղաքակրթության հասնելու համար Պատկանյանի կարծիքով պետք է հենվել հարուստների, առևտրականների, ազնվականների վրա, որոնք իրենց աշխատանքների հետ միասին կարող են գոհարել նաև իրենց հարստությունը: Կրթված հարուստներ, կրթված ազնվականներ, կրթված առևտրականներ — գրանց միջոցով պիտի քաղաքակրթությունը տարածվի ամբողջ ազգի, հասարակության բոլոր շերտերի մեջ: Պատկանյանը պախարակում է այն հոգևորականին, այն հարուստին, որն այդպես չի մտածում: «Ազնվականին պայծառացնողը գիտությունն է», «վաճառականը պիտի ազնվացնի իր բնությունը գիտությամբ»:

Այսպիսով, «Վարդանամակ» վեպը արևելահայ գեղարվեստական արձակի առաջին ստեղծագործություններից է, որի մեջ արտացոլվել է Ռուսաստանի հայաշատ մի քանի քաղաքների պատմական կյանքը և բնակիչների կենցաղը. վեպի մեջ 19-րդ դարի սկզբի Աստրախանի, Կազանի, Ղզլարի, Նոր-Նախիջևանի, Թիֆլիսի հայություն կյանքի ու կենցաղի մասին բերված են փաստեր ու տեղեկություններ, որոնք շատ օգտակար են այդ օջախների տնտեսական ու կուլտուրական վիճակն ուսումնասիրելու համար:

«Վարդանամակը» մեզ փաստեր է բնօրինակում նաև 19-րդ դարի առաջին քառորդում ռուսական կուլտուրայի և գիտության հետ շփոթ հայ ինտելիգենցիայի որոշ ներկայացուցիչների մասին (Սերոբե Պատկանյան, Հարություն Ալամդարյան, Լազարյաններ, Ն. Աշտաբակեցի, Քանանյան, Իգմիրյանց, Մարգար Խոջենց և այլն): Տեղեկություններ ենք քաղում Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի հիմնադրման փաստերի մասին և այլն:

Հեղինակը ավյալներ է հաղորդում այն մասին, որ 19-րդ դարի սկզբներին արդեն հայ առաջավոր ինտելիգենցիայի սերն ու հետաքրքրությունը դեպի ռուսական կուլտուրան ու քաղաքակրթությունը ավելի քան ուժեղացել է: «Ղզլարցիք յուրյանց զավակները միշտ զրկում են Մոսկով, Պետերբուրգ, Տորպա, Ղազան, Խարկով և այլ քաղաքներ, ինչ տեղ որ կան համալսարաններ, այնտեղ սովորում յուրյանց ուսման բնթացքը», — տալով է հեղինակը¹: Վեպի հերոս Վարդանը աշխարհի գրեթե բոլոր քաղաքները ման գալուց հետո, իր հիացմունքն է հայանում ռուսական քաղաքների մասին, նրան ճնոր յույս են տալիս Մոսկվան ու Պետերբուրգը: «Այսքան քաղաքներու տեսնելը, մանավանդ մեր հայոց ազգի այժմյան կուլտուրը իմանալը, ինձ համար բավական վարժարան էր, շատ մարդասիրություն տեսա Նախիջևանի, Հաշտաբխանի, Ղզլարու բնակչության մեջ... բայց երկու մայրաքաղաքաց տեսությունը ինձ մեկ նոր լույս տվեց. այս

¹ «Արկածք Վարդանա», էջ 34ր:

աշխարհածողով քաղաքները հիրավի բովանդակ տեղերաց մեջ երևելի քաղաքների կարգումն են, մանավանդ Պետերբուրգը¹:

Գ. Պատկանյանն ընդգծում է պատմական այն ճշմարտությունը, որ միայն սուսական տիրապետության պայմաններում «Գերության լուծը հայոց ազգի վրային խաղաղ վերացավ»: Նա գտնում է, որ հայերը պիտի շտապեն օգտվելու այն բարենպաստ պայմաններից, որնք ստեղծվել են նրանց համար Ռուսաստանում: Գ. Պատկանյանը նույնիսկ գայրույթ է հայտնում այն բանի համար, որ թյուրքահայության ծանր լծի համեմատությամբ «Ռուսաստանի հայերը այնքան ազատության մեջ չեն փուլթանում յուրյանց ապագա երջանկության համար»², իսկ այդ ապագա երջանկությունը նրա կարծիքով կախում ունի միայն լուսավորությունից: Նա համոզված է, որ հայ ժողովրդի վիճակը արմատապես կարող է փոխվել, եթե նա «յուր լուսավորությունն ինքն հողա, յուր հարկավորությունը տեսնելով և հասկանալով»³:

Վեպում յուրօրինակ արտահայտություն են ստացել Գ. Պատկանյանի կրոնական հայացքները: Հեղինակը հավատացյալ է, ջերմ աստվածապաշտ, այդպիսին է նաև վկայի հերոսը: Կղզում Վարդանը ամենախոր հավատով պատմում է Ռոզալիային կրոնական առասպելներ, ամեն օր աղոթում և փառք է տալիս նախախնամությանը՝ փորձություններից հաջող դուրս գալու համար: Նկատելի է Ռոզալիային մի նորատիպ հայունի դարձնելու Պատկանյանի միտումը (Վարդանը և Ռոզալիան վճռում են հայկական եկեղեցում ձևակերպել իրենց ամուսնությունը): Սակայն պիտի նշել, որ վեպում կյանքի էական երևույթների նկատմամբ հեղինակի ունեցած վերաբերմունքի մեջ գործնական դեր չեն խաղում կրոնական բմբունումները:

Գ. Պատկանյանի դեպի հոգևորականությունը ունեցած վերաբերմունքը կոնկրետանում է այն բանով, որ նա խուսափում է Վարդանին հոգևոր ծառայության տալուց: Թիֆլիսում եղած ժամանակ Վարդանը զրկվում է եկեղեցի հաճախելու հնարավորությունից և իրեն նվիրում է ինքնակրթության, այնուհետև չի իրականանում և էջմիածին գնալու ցանկությունն ու չնայած Վարդանը գնում է Վենետիկ, սակայն նրա վենետիկյան տարիների և հետագա կյանքի վրա աննշմարելի է մնում Մխիթարյանների գալրոցի և կաթոլիկական կրթության ազդեցությունը, Ընդհակառակը, նկատելի է Գ. Պատկանյանի սրտակի քննադատական վերաբերմունքը վենետիկյան գաղափարախոսության նկատմամբ. նա զգուշացնում է իր հերոսին՝ «... աղատ պահել սիրտս որևիցե կրոնական մոլեռանդութենեն, որն որ շատ անգամ այն վանքի մեջ ստանում է անփորձ մանկությունն հայոց և ներս է բերում յուր ազգի մեջ գանազան փասաներու հիմն»⁴: Հասկանալի է, որ Պատկանյանը իր հերոսին Վենետիկ է ուղարկում նախ արկածային ճանապարհորդության հող ստեղծելու համար և ապա նրան առաջափոր գիտնականների հետ շփվելու պայմաններ տալու, լեզուներ սովորեցնելու նպատակով: «Այն երկարատև ծովագնաց ճանապարհորդությունը ինձ մեկ նոր մարդ շինեց: Բալտիկ ծովին Հյուսիսային օվկիա-

¹ «Արկածք Վարդանա», էջ 32ր:

² Նույն տեղում, էջ 37ա:

³ Նույն տեղում, էջ 34ա:

⁴ Նույն տեղում, էջ 3ա:

նոսր մտանել Շվետի և Դանիմարքայի ծովեզերքը և բազմամարդ ծովեզերքյա մայրաքաղաքները աջ ու ձախ թողնելով անցնել Աթլանտյան օվկիանոս, այնքան ծովահայաց թագավորությունց ծագելյալ քաղաքաց այցելութուն անելով, վերջապես Հոլանդիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի հյուսիսային կողմերը պատելով... զանազան ազգեր տեսնել, զանազան լեզուք լսել, անթիվ մարդկանց հետ տեսութուն և հարակցութուն անել, բարվոց, բնավորութանց տեղեկանալ, ծովային ճանապարհորդութանց ամեն տեսակ փոփոխութանց փորձ առնել, իրավի բավական կրթութուն էր¹:

Այնուհետև Վարդանը դիմում է Պաղուայի համալսարան և այնտեղ ծանոթանում է Վեյրոպայի ակադեմիոսի վարժապետաց, բժշկապետաց, արհեստագիտաց, բանաստեղծներուն, մեքենագործներուն, երաժիշաներուն, որն այն ժամանակ եկել էին Պաղուայի համալսարանը այցելութուն անել կամ իրանց գիտութունը կատարելագործել²:

Այս բոլորը Գ. Պատկանյանի աշխարհայացքի հիմնական գծերն են, որոնք ամբողջապես գրեկորվում են վեպի հերոսի՝ Վարդանի հոգեբանության մեջ: Իսկ վեպը գեղարվեստական շունչ ու երանգ է ստանում Վարդանի և Ռոզալիայի փոխհարաբերութունների նկարագրությամբ: Այդ սոմանտիկ կերպարների միջոցով Գ. Պատկանյանը հանդես է գալիս տնտեսության ու կուլտուրայի, բնտանական կյանքի ու կենցաղավարության, սիրո և ամուսնության հարցերում ժամանակի սեպտիստի, կղերական հայացքների դեմ, սրաշատանելով անհամեմատ նորը և առաջավորը:

19-րդ դարի առաջին կեսի արևելահայ գեղարվեստական արձակի մեջ Վարդանը և Ռոզալիան նոր տիպեր են, հասարակական նոր հարաբերությունների արդյունք:

Վարդանը աշխարհ տեսած, բազմակողմանիորեն զարգացած մի երիտասարդ է, նա շրջել է ուսսական և եվրոպական նշանավոր քաղաքներ, շփվել է հասարակական զանազան խավերի հետ, տեսել չարն ու բարին և բմբռնել է գոյության կռիվի իմաստը: Հեղինակը նրան օժտել է գրական բազմաթիվ հատկութուններով, Վարդանը գործնական մարդ է, անվախ, համարձակ, աշխատասեր, խորագետ, ճարպիկ, շրջահայաց, միաժամանակ ազատամիտ, լավատես, մարդասեր և աստվածասպառ: Այս հատկութունները հարկավոր են մարդուն գոյության կռիվ համար. գրանց շնորհիվ է, որ Վարդանն ամայի կղզին վեր է ածում գրախոսության: Վարդանը ժամանակակից տիրապետող կարգերի առաջադեմ ներկայացուցիչներից է: Նա դեմ է ավազակության, կողոպուտաների ճանապարհով ձեռք բերած հարստության, բայց աշխատանքով ձեռք բերած հարստությունը համարում է օրինական և ձրգտում է «հարստանալ ամեն կերպիվ» — այսինքն նաև կրթությամբ, գիտությամբ, լուսավորվելով:

Բայց երբ հարց է առաջ գալիս ձեռք բնկած հարստությունը պահպանելու մասին, այստեղ արդեն Վարդանի մարդասիրությունը այլ երանգ է ստանում: Ծովահենների կղզում կուտակած անհամար ոսկին ու ակնեղենները Վարդանի ախորժակը բացում են, նույնիսկ կարծրացնում նրա նուրբ ներվերն ու երբեմնի զգայուն հոգին. «Իմս են այս զանձերը, ևս եմ նրանց

¹ «Արկածք Վարդանա», էջ 3ա:

² Նույն տեղում:

տերը», — աղահուլթյամբ բացահանչում է նա ավազակների դեմ կոլի պատ-
րաստվելիս: Շահը, ծովահեններից մնացած հարստության տեր դառնալու
տենչը գնալով վերափոխում են Վարդանին. ճիշտ է, նա ձգտում է գեպի
հասարակութուն, գեպի մարդը, բայց ամեն տեսակ զաղանների և թռչուն-
ների ընտելացումը գերադասում է կղզում իրեն հանգիստած վայրի գերուն
կամ անօգնական ավազակին դաստիարակելուց:

Գ. Պատկանյանը այս երևույթի մեջ վատ բան չի տեսնում: Նա բնա-
կան է համարում Վարդանի այդ հատկութունը, ներկայացնում է այն,
ինչ իրական ու բնորոշ է ժամանակի հարաբերությունների մեջ: Սակայն
հեղինակը իր ներստի իրական, բայց բացասական այս ձգտումը ներկայաց-
նում է որպես գրական երևույթ, դրձնով իսկ հակասական դարձնում նրան.
այս միտումը թուլացնում է վեպի գեղարվեստական ներգործությունը:
Գ. Պատկանյանը Վարդանի մեջ գնելով 1860-ական թվականների հայ
առաջագեմ ինտելիգենցիայի որոշ տրամադրություններ, նրան չի առաջ-
նորդում գեպի ամեն կողմով լավի ու կատարյալը, այլ սահմանափակում է
նրա գործունեությունը այնտեղ, որտեղ հատվում է ֆեոդալական հասարա-
կարգի առաջավոր թևի իդեոլոգի նոր քաղաքակրթության համար մատու-
ցած ծառայությունների սահմանագիծը: Պատկանյանը իդեալականացնում
է իր ներստին: Վարդանի մոտ նկատելի են ազգային սնապարծության որոշ
գծեր. ըստ Վարդանի՝ հայերը ամեն հրաշագործությունների ընդունակ են
և բավական է, որ ցանկություն ունենան, բոլոր գծվարությունները կհաղ-
թահարեն: «... Եվ եթե փոքր ինչ սեր ավելացնեն ուսման, պիտի հասնեն
եվրոպացվոց կարգը, որովհետև առևտրական գործոց մեջ ունեն մեծ հարմա-
րություն, իրանք սրամիտ, աշայուրջ, գործունյա, մեջները շուտով պիտի
ծաղկի գիտություններն ու ամեն ազատական ու մեքենական արհեստներն.
Ինչ գործոց որ սեր տան՝ կարող են հասնել և առաջանալ և այլ ազգաց մեջ
միշտ երևելի լինել»¹: Մնապարծությունը ակնհայտ է դառնում, երբ Վար-
դանը ինքն է խոսում իր արժանիքների մասին: «Վա՛յ քեզ աշխարհ, Լու-
սիտանցվոց Լիսսարոն մայրաքաղաքեն սկսած, բոլոր Եվրոպայի երևելի քա-
ղաքներու մեջ անհամար հաղթանակներու զարգերով պատկված պատանին,
որ պաշտելի էր և բարձրահոն սպանիական չքնաղին, և սիրաբորբոք Փրանսուս-
վույն, և հրապուրիչ պոլսնուհվույն, ի ծանրաբարո հելենուհվույն, և վենե-
տիկյան արքայակերտ բամբիշներուն, և հոսվմեական մեծափառ տիկնանց,
և գծվարաշարժ գերմանուհվույն, և խորամանկ օրիորդաց Փլորենտիո, և
ոսկեհեր գստերաց տանն Իսթաշելի, և անձնանվեր հրաշագեղ պատանեկուհ-
յաց Արարատյա, որ Լոնդոնի և Փարիզի ջերմուկներու մեջ ծաղկել են ու
փթթել՝ նման սքանչելի վարդից բարեխառն գոտյաց, այն պատանին, որ
յուր կերպարանքով անգլիական արքայազնին ևս ծածկում էր և սքանչատե-
սիլ աղջկերաց աչքերը շլացնում էր, այժմ ոչ թե մեկ հատ խաչացի
աղջկա գեմ ծառի տերևի նման գողում է, այլև այնքան անհուն ճոխու-
թյունը պատրաստ է նորա գարշապարի ներքո գնել իրրև չնչին դոն, որ նո-
րա սրտին հաճոյանա, որ նորա աչքումը երևի սիրելի, քան թե անեղ...»²:

Վեպում ընդհանուր առմամբ չափազանցվում են Վարդանի ընդունա-
կությունները: Նա բոլոր գիտությունների, արհեստների մեջ հավա-

¹ «Արկածք Վարդանա», էջ 32ր:

² Նույն տեղում, էջ 25ր:

առաջափ սեր ու առաջադիմություն է ցուցաբերում, բազմաթիվ լեզուներ
տիրապետում և այլն:

Գեղարվեստորեն անհամեմատ հաջողված են վեպի այն մասերը, որոնց
մեջ ներկայացվում են Վարդանի և Ռոզալիայի փոխհարաբերությունները՝
նրանց հանդիպումը, Ռոզալիայի ընտանեկան կյանքի պատմությունը, նրա
փեսացուի՝ Անտոն Պորճիայի թաղումը, Ռոզալիայի սուգը, ապա Վարդա-
նի և Ռոզալիայի սերը, ամուսնությունը և նրանց կենցաղավարու-
թյան որոշ կողմերը՝ ամայի կղզում: Գ. Պատկանյանը պաշտպանում է
ազատ, փոխադարձ սիրո գաղափարը, բողոքում է բռնի ամուսնության
դեմ: Ըստ նրա, ամուսնությունը պիտի տեղի ունենա միայն ամուսնացող-
ների ջերմ սիրո, փոխադարձ համաձայնության պայմաններում: Կղզում
Վարդանը և Ռոզալիան միմյանց նկատմամբ ցուցաբերում են բարձր
սեր և անձնավիրություն: Վարդանը ամբողջ հոգով ծառայում է գժրախա-
աղջկան, որ բռնակալ նավապետի հետապնդումից ազատվելու համար ծովի
է նետել իրեն, կորցնելով իր ծնողներին ու փեսացուին: Վարդանի վար-
մունքը դեպի Ռոզալիան մեծ մասամբ ներկայացված է սեպ և հոգեբա-
նորեն պատճառարանված. նա սիրում է Ռոզալիային ջերմ, անշահախնդիր
սիրով, բայց և աշխատում է իր գործնական հատկանիշներով, մարդկային
բարձր վարվեցողությամբ՝ նրա մեջ ևս բուռն սեր արթնացնել, ամե-
նայն քնքշությունով խնամում է նրան, ստքի կանգնեցնում, փարատում
նրա կրած վշտերը:

Վարդանը դեպի իր սիրած աղջիկը մեծահոգի է և անձնազոհ: Նա հա-
վասարակչուված, գիտակցված վերաբերմունք է ցուցաբերում Ռոզալիայի
նկատմամբ և ձգտում է աղջկա մտապատկերից հանել բռնակալ նավապե-
տի ահափոր կերպարանքը, և ինքն էլ «...նորա աչքումը երևի սիրելի, քան
թե ահեղ, նորա հավատացնե թե նա է նորա տիրուհին, հաղթանակողը և եր-
ջանկություն պատճառը, և ինքն երևի նորա հաղթանակի գերի և ճոխավոր,
նորա սիրո շղթաներով կապված և կաշկանդված, որ թեպետ և սիրում է, բայց
չի համարձակվում բերանով հայտնել, որ նրան չվշտացնե՞՛: Գ. Պատկան-
յանը այս եզանակով է ներկայացրել Ռոզալիայի և Վարդանի սիրո աս-
տիճանական զարգացումը, ընդհուպ մինչև սիրո խոստովանությունը և
ամուսնությունը:

Ինքնատիպ է Ռոզալիան, որպես արևելահայ գրականության մեջ
խառնուրդի կնոջ առաջին վիպական կերպար: Չնայած նա սովորական մտա-
հղացման արգյունք է, սակայն հեղինակին հաջողվել է նրա միջոցով ար-
տահայտել ժամանակակից առաջադեմ կնոջ որոշ արամադրություններ:
Սերը Ռոզալիայի համար մի բարձր և ազնիվ զգացմունք է, ընտանեկան
կյանքը մի սրբություն, իսկ անսեր ամուսնությունը՝ բռնություն, որի հեա-
չի կարելի համահերթվել: Այս է Գ. Պատկանյանի միտումը, և զրա համար
է սակզժել արկածների այն շղթան, որի մեջ հյուսվում է Ռոզալիայի անձ-
նական արագեղիայի պատմությունը: Բնական են Ռոզալիայի հույզերը
այն պահին, երբ բռնակալ նավապետը զնդան է նետում նրա ծնողներին
և փեսացուին, և հարկադրում է նրան ամուսնանալ իր հեա: Ինքնիշխան նա-
վապետի գաժանությունները չեն հնազանդեցնում Ռոզալիային, այլ մղում

¹ «Երկածք Վարդանա», էջ 25ր:

են նրան գեպի վրիժառություն՝ անձասպանության գնով: Ռոզալիան մահը գերադասում է անսեր ամուսնությունից:

Ռոզալիան գեղեցիկ է, քնքուշ, խոնավահան: Անկարելի էր մեկ անգամ նրան տեսնել և չսիրահարվել, ասում է Վարդանը: Վարդանի հոգատարությունը երախտագիտությամբ է լցնում Ռոզալիայի սիրտը:

Բայց գնալով թուլանում են Ռոզալիայի կերպարի իրական գծերը, նրա փոխադարձ, մաքուր և ազատ սիրո զգացմունքի մեջ աստիճանաբար դրսևորվում է մի տենդենց, որը ոչնչով չի պատճառարանվում: Ռոզալիան կամաց-կամաց դառնում է նորատիպ մի հայուհի³: Նա անզուսպ սեր ու հետաքրքրություն է ցուցաբերում հայ ազգի նկատմամբ: Մի շնչով ուղում է իմանալ նրա հին ու նոր պատմությունը և իրեն նվիրել նրա լուսավորության գործին:

«Արկածք Վարդանա» վեպը ավելի քան գնահատելի է իր ճանաչողական կողմով: Հեղինակը նպատակ է ունեցել շարքային ընթերցողին աշխարհագրական, պատմական, տնտեսական բազմակողմանի գիտելիքներ հագորդել: անհամեմատ լայն ծանոթություն տալ բուսական, կենդանական կյանքի մասին, ցույց տալ աշխարհի մեծ ու փոքր քաղաքները, ծովային ճանապարհները, գետերը, ովկիանոսները, սովորեցնել անթիվ ու անհամար թռչունների, ձկների, բանջարեղենների, համեմունքների անունները, ծանոթացնել ընտանեկան կենցաղավարության համար պիտանի իրերի, առարկաների, հագուստեղենի, դարդերի, կերակուրների, խմիչքների տեսակների հետ, գաղափար տալ վար ու ցանքսի տարրեր եղանակների, աշխատանքային գործիքների մասին և այլն և այլն:

Վեպը գրված է ժամանակի գեղարվեստական գրականության մեջ արդեն կիրառվող աշխարհաբար լեզվով, իհարկե այն գեղ Մ. Նալբանդյանի ստեղծագործությունների լեզվի մակարդակը չունի: Գ. Պատկանյանի մոտ գրարարի և որոշ բարբառային տարրերը ավելի շատ են, սակայն նկատելի է գրանց ազդեցությունից կամաց-կամաց ազատվելու Գ. Պատկանյանի ձգտումը. հատկապես գերանունները, նախդիրները, գոյականների ուղղական հոլովը նա օգտագործում է կ' գրարար, կ' աշխարհաբար ձևերով, բայց վեպը ամբողջությամբ շարադրված է սովորական խոսակցական լեզվով, պարզ, անբանադրոսիկ ոճով: Նկատելի է նաև ժողովրդական բառ ու բանի ազդեցությունը. «առյուծը նստած էր քնջումը», «հայելին շիլ մարդութշնամին է», «նավի մեջ գտա լծելու հարմար սարք ու կարգ», «չավ է որ մաղերը սպիտակ գույն չկարեց», «կասեն առածով, թե երկու արջ մեկ բնում չեն կարող կենալ», «աղբի պես գեն ևս ձգում, օսկու պես պրպտում ևս», «չավ երազ է, թե կատարվի» և այլն:

Գ. Պատկանյանի վեպը աչքի է ընկնում իր պարզ պատմողական-նկարագրական արվեստով: Փանտաստիկ վեպի համար պարարտ հող հանդիսացող երևույթներն ու արկածներն անգամ ինչպես, օրինակ, փոթորիկը ծովի վրա, նավի մոլորվելը օվկիանոսի անհայտ ջրերում, գեղեցիկ հովիտ-

³ Ուշագրավն այն է, որ Վարդանը և Ռոզալիան հանգես են դալիս նաև «Երացի» պատմվածքում: Նրանք նախիջևանում ճանաչվում են որպես գիտուն ու զարգացած մարդիկ: Ռոզալիան այստեղ կոչվում է Վարդուհի: Հեղինակը հիշում է, որ 20—25 տարի առաջ Վարդանը և Վարդուհին երկար ժամանակ ապրել են անմարդարնակ կղզում: Վեպի գործողությունները հասնում են մինչև 1830 թվականը. հասկանալի է, որ «Երացի» պատմվածքը պիտի գրված լինի 1860 թվականից, այսինքն վեպը գրելու տարեթվից հետո:

ներքի, դաշտավայրերի նկարագրությունը և այլն, տրված են անպաճույճ, հասարակ ձևով:

Վեպը թեև անավարտ է, բայց արկածները տպավորվում են իրենց հաջորդական կապակցությամբ: Առաջարանը կազմում է սյուժեի ողնաշարը, այնտեղ շոշափված հարցերը մասամբ հիմք են դառնում արկածների համար: Կան հետաքրքիր հանդույցներ, խորհրդավոր մտահոգացումներ, գեղքերի ոտմանտիկ հյուսվածքներ, որոնք յարում են ընթերցողի ուշադրությունը: Այսպես օրինակ՝ Ռոզալիայի և նրա ծնոջների կյանքի պատմությունը, ծովանհենների վերջին մուտքը կղզի, երկրորդ քարայրի հայտնությունը, որտեղ տեսարանը, թուփակները և Ռոզալիայի զրույցը, նրա և Վարդանի կենցաղավարությունն որոշ նկարագրությունները և այլն:

Վարդանը բնությունը գրկում է անցկացնում իր աշխատանքային օրը՝ վար ու ցանքս, ծառատունկ, պատվաստ, զանազան բանջարեղենների սերմանում, բերքահավաք և այլն: Չկան բնությունն անախորությունն արտահայտող երկարաշունչ, վերամբարձ նկարագրություններ: Ընդհակառակը բնությունը զգացնել է տալիս իր մեղմությունը և գեղեցկությունը: Նկարագրվում է գարունը, երբ Վարդանը սկսում է գարնանային աշխատանքները, խոսվում է ամռան մասին, երբ պիտի հավաքի բերքը և այլն: Վարդանը սիրում է բնությունը, սքանչանում նրա գեղեցկությամբ, բայց նրա ներգործությունը պատիվօրեն չի քննադատում:

Վեպը գուրկի չէ նաև հումորից: Առյուծին, կապիկներին, արծվին առանձին-առանձին իրավունքներ ու գեր տված Վարդանի ընտանիքում ծիծաղելի շատ բաներ են կատարվում: Երբավի սր մենք նորահարս և նորափեսա էինք և այն կղզվո մեջ, ուր սր չկար մարդու բնակություն, մենք համարձակ կարող էինք մեկգմեկու թագավոր և թագուհի կոչել. և այն ժամանակն մեր նախարարները պիտի լինեին առյուծը՝ և արծիվը, բայց անդամ կապիկները իրանց մնչկատակ զավեշտություններով մեղ շատ էին ծաղր անում, որն սր առյուծն էլ չէր հասկանում, որ խրատե՞՛:

Այս բոլորով հանդերձ «Վարդանամակ» վեպը գեղարվեստականորեն թույլ գործ է: Գ. Պատկանյանի ստեղծագործական ֆանտազիային խանգարել է հնագեռ և պատմաբան հեղինակը: Նա չի կարողացել պատել այն անջրպետը, որ կա վիպական ստեղծագործություն և պատմություն շարաֆբանքի միջև: Սյուժեի ամբողջականությունը խախտել է պատմությունն այս կամ այն հարցը մեջ բերելու հեղինակի ցանկությունը: Հատկապես վերջում տրված կրոնա-առասպելական երկար ու բարակ դատողությունները բոլորովին թուլացրել են վեպի արվեստի ներգործող ուժը: Այդ մասերն այնքան անհարիր են վեպի բովանդակությանը, որ եթե հեղինակը մեջքնգմեջ չհիշեր իր հերոսների անունները, չէր կարելի իմանալ, թե գրանք կապ ունեն վեպի հետ: Ի գեղ պիտի նշել, որ այդ Գ. Պատկանյանի ստեղծագործությունների առանձնահատկություններից մեկն է, ժամանակակից ամեն մի հարց քննությունն առնելիս նա անպատճառ գուրահեռ է անցկացնում անցյալի հետ, հակադրում կամ համադրում պատմական փաստերով կամ կրոնական, ավանդական հիշողություններով: Չափազանցություն հասնող այս երևույթից գերծ չեն նաև նրա հրապարակախոսական հոգվածները:

Վեպի թուլության պատճառներից մեկն էլ կրկնություններն են ու ձգձգվածությունը: Այս նկատելի է նույնիսկ գեղարվեստորեն հաջողված մասերում:

Նկատելի է «Ռորինդոն Կրուզո» վեպի որոշակի ազդեցությունը Գ. Պատկանյանի վեպի վրա:

Իր թերություններով հանդերձ Գ. Պատկանյանի «Արկածք Վարդանա» անտիպ վեպը գրական մի ուշագրավ երևույթ է: Այն շրջանում, երբ գեռ հայ ընթերցողի ձեռքն էին տրվում «Պղնձե քաղաքի պատմությունը» և նրա նման այլ գրքեր, «Արկածք Վարդանա» վեպը շատ ավելի մեծ դաստիարակչական նշանակություն կունենար, եթե տպագրվեր ժամանակին:

* * *

Պիտի ընդգծել, որ Գ. Պատկանյանի ստեղծագործությւններն զերապես կշռող մասը, այնուամենայնիվ, կազմում են պատմական, դիցարանական թեմայով գրված պոեմները, վեպերը և ողբերգությունները («Հայկերգ», «Արամերգ», «Անուշավան», «Փառնակ», «Աննակ», «Փառանձեմ», «Վաշտակ», «Ոչ գիր ոչ Կիրակոս», «Վարդան», «Կար», «Շավարշ Բ», «Հրաշյա» և շատ ուրիշները): Ինչնով է բացատրվում այս երևույթը: Նախ և առաջ նրանով, որ Գ. Պատկանյանը հմուտ դիցարան, պատմարան էր և բանտի ու աքսորի պայմաններում հայ և անտիկ պատմությունն ու դիցարանությունը առատ նյութ էին տրամադրում ստեղծագործության համար: Երկրորդ՝ նա խոստովանում է, որ դառը, հալածական կյանքը, ներսեսի և Խալիբի մեքենայությունները թույլ չեն տվել նրան աչք բանալու, որոշելու իր անելիքը, կենտրոնացնելու իր միտքը՝ ազգին առավել օգտակար ծառայություններ անելու համար: Գիտեր, — գրում է Գ. Պատկանյանը իր մասին, — որ ազգն բազմատեսակ վերքեր ունի. այլ չգիտեր, սրն է նորա մահառիթ խոցն, որ առաջ նորա սպեղանու համար հոգայր¹: Երրորդ՝ իր երկերի համար հիմք ընդունելով պատմական անցյալը և դիցարանությունը, որոնցով ոգեշնչված էր, հեղինակը դիտավորություն է ունեցել հերոսներից ոմանց պատմական անունների տակ ներկայացնել ժամանակակից լավ ու վատ մարդկանց, «որը որպես իր, այնպես էլ ազգի վիճակին հարմարի», — պատճառաբանում է նա: Այսպես, օրինակ, «Անուշավան»² գյուցազներգության մեջ քստ հեղինակի միայն Անուշավանը և Նինասն են պատմական անձինք, իսկ մյուս հերոսների անունների տակ իրական անձնավորություններ են նկատի առնվել:

Հիշենք մի այլ օրինակ. «Հոբիսիմե» ողբերգության համար հիմք է ծառայել Նախիջևանի 1850-ական թվականների կյանքը, Խալիբյանի իշխանություն տակ ընկած Նախիջևանի և նրա գաղթի թշվառ վիճակը: Այդ պիեսի մեջ Գ. Պատկանյանը իրեն պատկերել է Գրիգորի, Խալիբյանին՝

¹ Հիշատակարան, էջ 464:

² «Անուշավան»-ը գրել է Ռոստովի բանտում 1853 թ., չորս շաբաթվա ընթացքում: Հեղինակը նշում է, որ իր նպատակն էր գրել «առակաց համար», սարգ և հասկանալի լեզվով: Նա մի քանի անգամ պատահել է այն հատվածները, որոնք իր ցանկացած ձևով չեն ստացվել: Վերջապես գրել է աշխարհարար լեզվով և միանգամայն գյուրբմբունելի մի երկ (հրատարակվել է 1875 թվականին՝ Զմյուռնիայում):

Տրդատի կերպարների մեջ, իսկ դեկերի շարքում առաջնություն է տվել Բելլարին՝ այսինքն Գարրիել Այվազովսկուն: Սոսրովագուխտի կերպարի տակ հեղինակը հանդես է բերել հասարակության այն առաջավոր խավին, որը համակրում էր Գ. Պատկանյանին և «միշտ բարյաց ակնկալությունը նորա կողմն է պահում»:

Պիտի նկատել այն, որ Գ. Պատկանյանը սովորություն է ունեցել լսել ժողովրդին, գրի առնել նրա մեջ պահպանված հուշերն ու ավանդությունները և օգտագործել իր ստեղծագործություններում: «Հայկերգ» և «Արամերգ» պոեմների համար նա նյութեր է հավաքել դեռ 1820-ական թվականներից: «Այս միջոցն էր, որ տեր Գարրիելի մտաց մեջ ծագեցավ Հայկերգի և Արամերգի գաղափարն և սկսավ խաժամուժ տմբոխի բերանեն լսած առածից և ավանդությանց միտ դնել և յուր մտաց մեջ անդիր խրմբագրել»¹:

Այս բոլորը գալիս են ասելու, որ Գ. Պատկանյանի անցյալին նվիրված երկերը զուրկ չեն կարող համարվել պատմական արժեքից և որ նրանց քննությունն ու գնահատությունն ժամանակ պետք է հաշվի առնվեն վերոհիշյալ հանգամանքները:

Պատկանյանի վերոհիշյալ գործերը մանրամասն չքննելով այստեղ, միայն մի քանի խոսքով անդրադառնանք գրանց:

Եթե դատելու լինենք «Կայսրակ» («Կար») պոեմին ոմանց կողմից տրված գնահատականով, ապա Գ. Պատկանյանը պետք է դառնա դեմոկրատիայի ներկայացուցիչ, իսկ եթե դատելու լինենք Գ. Պատկանյանի «Շավարշ Բ» պոեմին նրանց տրված գնահատականով, ապա հեղինակը պիտի դառնա կղերա-ազգայնական, հետագեմ դասի մի ներկայացուցիչ, որը գեպի անցյալն ունեցած իր հակադիտական մտացումով վնասել է ժողովրդի ազգային ինքնագիտակցության գործին:

Գ. Պատկանյանի ամբողջ ստեղծագործության հանգամանալից քննությունը չի կարող հանգեցնել ոչ առաջին և ոչ էլ երկրորդ եզրակացությունը: Հենց միայն պատմական անցյալին վերաբերող իր գործերով (որոնք բոլորն էլ, ներառյալ «Կայսրակ»-ը և «Շավարշ Բ» միևնույն տեղեկենցն ունեն) Պատկանյանը մի ծայրով կառչած է անցյալին, իսկ մյուս ծայրով ամուր կապված է նոր ժամանակների հետ: Հեղինակը ազգասիրական նկատառումով մտաբերում է անցյալի արժանահիշատակ այն դեմքերին, որոնց կերպարը օգտակար կարող է լինել ժամանակակից հասարակարգի կազմակերպման, ամրապնդման գործում: Իր այդ երկերով Գ. Պատկանյանը սեպտիման, կղերամիտ ազգայնամոլների նման ոչ թե կամենում է հետ դառնալ դեպի անցյալը, այլ ցանկանում է իր ժամանակների մարդկանց մեջ տեսնել Հայկի, Արամի, Վահագնի, Վաշտակի, Կարի և այլոց հերոսական գծերը, և նրանց միջոցով ապաքինել բացասական այն մարդկանց հոգիները, որոնք ապականում են հասարակությունը իրենց կեղտոտ արարքներով:

¹ Չեռագիր № 8816, էջ 221ա: Հենց այդ ժամանակ Գ. Պատկանյանը մտադրություն է ունեցել գրելու վերոհիշյալ պոեմները: Բայց նրա հայրը՝ Սերոբե վարժապետը, կանխել է՝ «կասկածելով թե մի զուցե ծածուկ դարանակալության փոխարկվի ի հայանի խիզախ հարձակումն թշնամական» (ակնարկում է Գ. Պատկանյանի շուրջ սկսվող թըշնամանքը):

Ընդունված է ասել, որ պատմական թեմատիկայով Գ. Պատկանյանի գրած բոլոր երկերից կզերա-սղահպանողականության և ազգայնամոլության սուր հոտ է փչում: Շատերն արդեն ծանոթ են «Կայսրակ»-ի բովանդակությանը. այստեղ սակայն հերոսն իր հոգեկան աշխարհով և մտածողությամբ շատ ավելի մոտ է կանգնած ժողովրդին, քան թե իշխանավորներին: Այդպես են նաև Գ. Պատկանյանի մյուս երկերի՝ «Արամերգ»-ի, «Հայկերգ»-ի, «Անուշավան»-ի, «Վաշտակ»-ի հերոսները: «Վաշտակ» վեպը¹, որը գծրախտարար անավարտ է, հեղինակի ամենահաջող արձակ գործերից մեկն է, գրված է 1857 թ.:

Այստեղ հանդես են գալիս ոչ միայն ժողովրդասեր հերոսները՝ Հայկակ, Նորայր, Հրանտ, Մանուշակ, ձերունի Ջրաղացդան, զինվոր, Շահպուրակ և այլն, որոնք կոչվում են երկրի համար վնասակար իշխանների դեմ, այլ և հանդես է բերվում ժողովուրդը, որի բազմաթիվ ներկայացուցիչները ամեն տեղ՝ գաշտերում, բերդերում և ամրոցներում ծպտյալ գործում են Վաշտակի ղեկավարությամբ և նախապատրաստվում են հարձակման այրունարբու նահապետ Հավանակի իշխանության դեմ: Պատմա-առասպելական այս միջավայրում գործում են հատարակ, կենդանի մարդիկ, ժողովրդի շահերին նվիրված իշխաններ, որոնք իրենց ամեն մի քայլափոխով, մտածողությամբ ու գործով հիշեցնում են 19-րդ դարի կեսերի գործիչներին: Գ. Պատկանյանը պատմական, գիցարանական իր երկերում պարզապես առաջ է քաշում այն նույն խնդիրները, որոնք գրված են նրա ժամանակակից թեմատիկայով գրված երկերի և նույնիսկ հրապարակախոսական հոդվածների մեջ: Իրանք են՝ աղբի միաբանությունը, լուսավորությունը, առաջագիմությունը, ժողովրդի ներքին և արտաքին թշնամիների դեմ պայքարի կազմակերպման հարցերը:

Գ. Պատկանյանի պատմա-գիցարանական հերոսները անձնուրաց կերպով, ամենադժվարին պայմաններում ծառայում են իրենց ազգասիրական նպատակներին: Այդպիսի հերոսներ են Հայկը, Արամը, Արմենակը, Կարը, Անուշավանը, Վաշտակը և ուրիշներ: Վաշտակը իր նպատակին հասնելու համար երկար տարիներ ապրում է քարայրներում, թափառական, ազքատ ձերունու կերպարանքով: Հայկակը, որին սրբեզրել էր Ողական ամրոցի նախարարը, երբ իմանում է, որ ինքը այդ ազքատ ձերունու սրդին է, թողնում է պալատական աստիճանի կյանքը, իր սիրած նշանածին, և գալիս ազքատ թափառական հոր մոտ, և նրանք միասին պայքարում են նույն նպատակի համար: «...Եթե իմ հայրս դու ես, ձերունի, ինձ ցանկալի չէ ոչ մեծություն, ոչ գանձ և ոչ ճոխություն. այո, սիրում եմ Շահպուրակին, բայց այն սերը չէ կարող հաղթել սրդիական սիրույն»², ասում է Հայկակը:

¹ Մեզ թվում է, որ Գ. Պատկանյանը «Վաշտակ»-ը թերավարտ է թողել Արարատյան գաշտի և նրա շրջակա բնակչության կյանքի նկարագրերը տալու գծվարությունները հաշվի առնելով: Գ. Պատկանյանը անծանոթ էր այդ վայրերին: Նա թե ինչ է գրում նա այս կապակցությամբ: «...Ինձ ցանկալի չէ Երուսաղեմ. և թե գտանիմ ազատությունի կապանաց, պիտի ճեմեմ ի գաշտն Արարատյան, ոչ որպես ազաշխարող, ոչ որպես ուխտավոր, այլ որպես նկարագիր»: Նա ընդգծում է, որ ուզում եմ «Տեսանել թե ուստի բղիթ Բասաղ դեա, ու զինրդ անցանի ընդ Օշական, զինչ զիրս ունին...», Նոր Ապարան, Կարբի, Աշտարակ...»: Նա ցանկացել է տեղեկանալ «չբից Արարատյան գաշտին և քաղաքաց նորա», բանգի գրեմ «զՎաշտակ» (Հիշատակարան, էջ 773):

² Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 135, վավ. 11, էջ 9:

Այստեղ էլ ակնհայտ է Գ. Պատկանյանի նույն մտայնությունը: Վաշտակը արդեն հասունացած է համարում պայքարը՝ Հալանակի նահապետության դեմ: Տարոնը, Մանազկերտը, Արարատյան դաշտը անքում են Հալանակի դաժան տիրապետության տակ: «...Մեկ մարդ չկա այն կողմը, — պատմում է Մանազկերտից եկած զինվորը Վաշտակին, — որ կամենա ալլես համբերել այս պղտորության: ...այն ժամանակներն անցել են, որ հայերը ասում էին, ով որ Հաչկա տխուր ունի, նա է մեր իշխան. այժմ ասում են, ուզում ենք, որ Հայաստանի իշխանն լինի հայոց ազգի ակեր և պաշտպան, և ոչ թե կեղեքիչ և դահիճ. հայերու անպարտ արյունը ազազակում է և վրեժխնդրություն է պահանջում...»¹:

Գ. Պատկանյանը բողոքում է անօգուտ հնազանդության, համակերպվելու դեմ: Նա միաբանություն է քարոզում հասարակության մեջ եղած ամեն ակասակ կեղտերը մաքրելուց հետո, ազգայինս գործիչներին ասպարեզից հեռացնելու, նրանց ոչնչացնելու պայմաններում: Վաշտակը դաշտանում է, որ գեռ սրոշ գավառների բնակչությունը չի մտածում ամբարշտի կապանքից շուտ ազատվելու մասին: «...Բովանդակ ազգի հին սովորությունն է սիրել, պատվել յուրյանց կործանողին, հնազանդիլ նրան, ով որ սովելի կշարչարե և կտանջե: Արարատա մեջ տակավին կան այնպիսի գերդաստաններ, որ նահապետի սուտը լավ կհաշվին, քան թե այլոց ճշմարիտը...»², բողոքում է մանազկերտցի նույն զինվորը:

Վաշտակը պահանջում է, որ ազգի իշխանությունը արվի ազնիվ, ժողովրդի շահերին նվիրված մարդկանց ձեռքը: Ազգի թշվառության պատճառը վնասակար իշխաններն են և նրանց հանցանքով է, որ օտարը իշխում է, ազգային լեզուն մոռացվում, անկտուրը նվազում. «Իշխանությունը ընկնում է ազգատյաց մարդու ձեռք, քաջերը, խելոքները, ազգասերները խորշե-խորշ են ընկնում և աներևույթ են մնում, իսկ վատարար մարդիկ ազգի կատախարության սանձը ձեռքն են առնում և ազգին թշվառացնում», բացատրում է Վաշտակն իր որդուն³:

Գ. Պատկանյանի գյուցազներգությունների, պատմական թեմայով գրված այս երկերի մեջ նկատվում է նաև ազգային ազատագրական շարժման, ազգային պատերազմի (ինչպես ինքն է բնութագրում Արայի՝ Շամիրամի դեմ մղած պատերազմը) անդեհնցը: Բնորոշ է, որ մի շարք երկերում («Շավարշ Բ», «Կար», «Վաշտակ» և այլն) զգալի գեր է արված գյուցազնությունը. նրա ներկայացուցիչները խմբերով, շտապներով դուրս են գալիս և՛ արտաքին, և՛ ներքին թշնամու դեմ, թե ինքնուրույնարար, և թե քաջ ու հայրենասեր իշխանների, նահապետների առաջնորդությամբ: Պատկանյանի այդ երկերի համար գիցարանությունը ընդհանուր ֆոն է, որը գնալով թուլանում է ընդդիմադիր ուժերի սեպ, կենսական փոխհարաբերությունների, նրանց բախումների ներգործող ազդեցության տակ: Հաչկա նեղը ասիթ է, որպեսզի Գ. Պատկանյանը ժամանակակից հայ գյուցազնությունը, հայ ինտելիգենցիային արամագրի ընդդեմ օտար բռնակալություն, ուժ ու ոգի ներշնչի նրանց՝ ազգը և հայրենիքը պարսկաթյուրքական տիրապետությունից ազատագրելու համար:

¹ Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 135, վավ. 11, էջ 60:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 55:

«Հայաստանը այժմ սրգով և թախիժով սեպացած,
Տեանում է, որ զորացել են ամեն տեղ ջոկք թշնամյաց,
Գրսեն օտարքն են զիշատում, ներսեն տանջում թոնավորք,
Յուրակի հեռ շատ կան կըցուրդ ավագորջարք փառավոր»¹:

Մինչդեռ բնակիչ Յուրակի շուրջը հավաքված են ազգի ընտրյալները, «ավագորջարք փառավոր», բայց նրա դեմ ոտքի է կանգնել աշխատավոր գյուղացիությունը և չոխատներ կազմած արիարար կույում է՝ հանուն ազատագրության:

«Յուրակի դորք բնակված են Արարատյան դաշտումը,
Գեղ ու գավառ նեղացած են ասպատակած ձեռումը,
Խեղճ գյուղացիք փախստական ցրված են գեպ լեռները,
Որ փրկություն կարողանան գանել յուրյանց ջոկերը:

Բայց կան սմանք էլ, որ փախչիլ, թափառիլ չեն կամենում,
Դեմ բռնության արիարար զենքով, թուրով են կանգնում,
Մեկզմեկու խմաց տալով տեղ-տեղ կազմում են զնգեր,
Զըկայր մեկ մարդ, որ ամենույն մեկ մեծ բանակ ժողովեր»²:

Գ. Պատկանյանը գյուղացիությանը գիտում է սրպես մի ուժ, որը «ազգային պատերազմում» կարևոր դեր ունի կատարելու: «Անուշավան» պոեմում նույնպես արտաքին և ներքին թշնամուց հայրենիքը պաշտպանելու փտանդի ժամին, դեռ զորավարները ոտքի չկանգնած, առաջինը գյուղացիությունն է մաճն ու խոփը զենք դարձրած դուրս գալիս պատերազմի:

«Այլ գյուղականք առին յուրյանց երեքժանին գերանդին,
Ոմանք հեծան ձեռք բռնեցին, ոմանք մաճ, խոփ, արորին,
Ասպատակաց ընդգեմ ելլան այս քաջարի արամյանք,
Համ ջարգեցին, համ փշրեցին, համ յեռ դարձան հաղթականք:

Կսեց Արա այս գյուղացվոց հանկարծ արած հաղթություն,
Պարգև զրկեց տանուտերանց, դովեց հայոց քաջություն,
Երբ լսեցին լեռնաբնակք, թե նոքա ձիրք ստացան,
Իրանք էլ շուտ գունդ կազմեցին, ընդգեմ զինիլ ըսկսան:

Ազգային էր այս պատերազմ, դեռ զորավարք չեն հասած,
Արա զրկեց զորապետներ՝ առաջնորդել այն քաջաց,
Վերջացել էր և սոցա հունձք, լեռնականքն պարսպ են,
Շամիրամի գեմ մարանչիլ գլուխն առած վազում են»³:

Սակայն Գ. Պատկանյանի այդ երկերում «Ազգային պատերազմը» զեկավարում, գլխավորում են նահապետները, թագավորները: Թշնամու դեմ գյուղացիության վերջին հախուռն հարձակումը պսակվում է հաղթանակով՝ գյուղացիների հանկարծակի արշավանքի հետևանքով: Ժողովուրդը քաջ է

¹ «Շավարշ Բ», «Հյուսիս», 1863թ., էջ 179: Մատենագարան, Զանազան հեղինակների արխ., թղթ. № 62, վավ. 13, էջ 3ա:

² Մատենագարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթ. № 62, վավ. 13, էջ 15բ:

³ «Անուշավան», Զմյուսնիա, 1875 թ., էջ 52: Մատենագարան, Պատկանյանների արխ., թղթ. № 135, վավ. 6:

և հաղթող, բայց նա չունի իր սեփական ներոսները: Գյուղացիությունն առաջնորդում է Հայկի տոհմից սերված Կարիճը: Եվ չնայած Գ. Պատկանյանը «Վաշտակ» վեպում բնագծում է, թե՛ անցել են այն ժամանակները, երբ ասում էին. Ով Հայկա աթոռն ունի՝ նա է մեր իշխանը... բայց միշտ Հայկի շառավիղներին է հանձնում նահապետությունը: Կարը, այդ գեղջկական չարքաշ կյանքով մեծացած երիտասարդը, որը շատ հեռու է եղել ազնվականական միջավայրի ազդեցությունից, պարզվում է, որ գյուցազն Վաստամի որդին է, և նաև որպես այդպիսին է ընտրվում նահապետ: Հենց այս մոտեցումն էլ բնորոշ է ազգային պահպանողական բանակի գաղափարախոսներին:

Սակայն, ինչպես նկատեցինք, Գ. Պատկանյանի ստեղծած ներոսները՝ Վաշտակ, Հայկակ, Նորայր («Վաշտակ»), Վաստամ, Կար («Կար»), Արա, Անուշավան («Անուշավան»), Արամ, Հայկ («Հայկերգ») և այլն շատ կոզմերով հիշեցնում են հեղինակի ժամանակակից ազգային ներոսներին: Հատկապես Կարի և Վաշտակի կերպարների նկարագիրը խտացած է չարքաշ, հասարակ մարդկանց բնորոշ կյանքի խայտարեկտ գույներով: Նրանք խոսում են ժողովրդի լեզվով, ապրում են նրա կյանքով, մտածում, գործում են ինչպես սովորական մահկանացուն: Նրանք ունեն ազնիվ, անբիծ սեր և բնական, խիստ մարդկային ցանկություններ: Կարը և Վաշտակը ենթարկվում են այնպիսի փորձությունների, կրում այնպիսի տանջանքներ, որոնք սահմանված չեն իշխանների համար: Հեղինակը նրանց թրծում է աշխատավոր խավերի համար ստեղծված դառն կյանքի հնոցի մեջ և ապա հասցնում իշխանություն, որպեսզի նրանք անկեղծորեն կարեկից լինեն ժողովրդի ցավերին:

Պիտի ասել նաև, որ վերոհիշյալ պատմա-առասպելական թեմաներով գրված երկերի մեջ կան կանանց գեղարվեստորեն հաջողված կերպարներ: Շամիրամը և Նվարդը («Անուշավան»), Լուսնթագը և Համաափյուռը («Հայկերգ»), Շահպուրակը և Շուշանը («Վաշտակ»), Մարգարիտը, Մեխակը և Անթառամը («Կար») անհատականում են իրենց ներքին, հոգեկան աշխարհով, իրենց մտածողություններ ու գործով: Ջերմ սեր, անձնվիրություն, կարեկցություն, մեծահոգություն, բնամեկան կրթանիկ կյանքի ձգտում, խանդ, դավադրություն, զղջում, կիրք, այս բոլորը առավել կամ նվազ չափով, հաճախ վառ ու գունագեղ պատկերների մեջ գրտևորվում է նրանցից յուրաքանչյուրի մաս: Այս տեսակետից Գ. Պատկանյանի պատմական երկերի մեջ բացառիկ տեղ է գրավում «Կար» պոեմը: Այն կենսաթաթախ, բարձրարվեստ մի ստեղծագործություն է, և իր տեսակի մեջ առաջինը՝ ժամանակակից հայ գրականություն համար: Մարգարիտը անբիծ ու հասարակ գեղջկուհու այն ախպարն է, որը խորը կերպով զգում է աշխարհիկ կյանքի ամենաքաղցր վայելքների հմայքը, խիստ մարդկայնորեն անձնատուր լինում նրան և ապա գիտակցաբար հրաժարվում նրանից: Նրա պարզ, անձնվեր, հախուռն սիրո զգացմունքները գեպի Սյունյաց իշխան Վաստամը, նրա անկաշառ որդիական սերը, պարտավորվածությունը գեպի իր տանջված, չարքաշ ու ձերացած ծնողները, նրա մայրական խանդաղատանքը՝ գեռևա շծնված իր մանկան նկատմամբ, նրա գործվագութ սերն ու նվիրվածությունը գեպի իր որդին՝ Կարը, տրված են դարձանալիորեն նուրբ և քնքուշ գիտողականությամբ, պարզ:

անկաշկանդ նկարագրությամբ: Այստեղ ավելի, քան հեղինակի մյուս երկերում, ճկուն ու շարժուն գործողությունների ու գեղարվեստական խառնուրդի քախումների ու հանգույցների մեջ կանկրետանում է շոշափելի մարդը՝ իր հոգեբանության քնորոշ կողմերով:

Գ. Պատկանյանի վերահիշյալ պոեմները ունեն մշակված սյուժե, գործողությունները զարգանում են արամարանական քնթացքով և հասնում որոշակի վախճանի: Այս երկերի դասական ստեղծագործություններից ունեցած տարբերությունը ավելի քան քնորոշ է գատնում, երբ քննության ենք անում Գ. Պատկանյանի լեզուն և ոճը: Նրա հերոսները՝ Վաշտակ, Հայկակ, Մանիշակ, Շահպարակ, Հայկ, Արմենակ, Լուսնթագ, Արա, Նվարդ, Անուշավան և այլն, խոսում են շատ հասարակ, սովորական մարդկանց հատուկ լեզվով, անբռնազրոսիկ, բնական ոճով: Զափազանցություն չի լինի, եթե ասելու լինենք, որ հեղինակի 1853—1858 թվականներին աշխարհարար լեզվով գրած արձակ և չափածո երկերը լրիվ պատկերացում են սալիս ժամանակակից գրական հայերենի վիճակի մասին:

Ճիշտ է, Գ. Պատկանյանի լեզուն այնուհետև քաջարձակ զարգացում չապրեց և նրանից հետո հանգես եկող բանաստեղծներն ու արձակագիրները շատ ավելի մաքուր գրական հայերենով էին գրում իրենց երկերը, բայց Գ. Պատկանյանի դերը այնքանով է գնահատելի, որ նա հանդիսացավ գրական հայերենի առաջին կիրառողներից մեկը: Պիտի հաշիփ անն որ Գ. Պատկանյանը իր աշխարհարարով գրած երկերից շատերը ստեղծել է այն ժամանակ, երբ դեռ լույս չէր տեսել «Վերք Հայաստանին», երբ դեռ նոր էր բորբոքվում հին և նոր գրականության, աշխարհարարի և գրարարի պայքարը: Ընթերցողներին գաղափար տալու համար հեղինակի 1850-ական թվականներին գրած արձակ և չափածո երկերի լեզվի ու ոճի մասին, կարևոր ենք համարում մեջ բերել երկու նմուշ ևս.

«Ժրպատաց Հայկը, պատասխանեց. «Այդ բանը չի հաջողիր,
Որ իմ անվամբ Հայք անվանվին՝ քո ազգը և քո երկիր.
Իմ սրդիքըս երնեկ պահեն իմ անունս, չը մոռնան,
Քո ազգը թող քո անունով՝ միշտ ճանաչվի Քարթլոսյան»:

Չեր մեջ կլնի խաղաղություն, իմայնոց մեջ կազ կրսիվ,
Բարիլունեն բերած բարքը՝ սոցա մեջը կա լրիվ.
Եթէ մեկը գեղ աջ քաշե, մյուսըր գեղ ձախ՝ համարձակ,
Աջ քաշողին էլ գիմացը կը բարձրացնին աղաղակ:

Տեսեք եղբարք, դուք ուզում եք՝ իմ պատմության լրսելու,
Իմ սրդիքը չեն կամենում խոսքիս անկաջ գրնելու.
Ես պատմություն էի ասում, Մանավազը խոսում էր,
Ու աչք ունքով յուր եզրորը անում պես-պես նշմարքներ՝:

*

«Կատարատակ լուրջ երկնքումն փռվել են արշալուսի ծիրանյաց
քղանցներն, բայց բարձրազագաթ սարերն արգելում են՝ որ այգու առա-

¹ Մատենագարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 135, գալ. 4., էջ 51բ:

ջին նշույլներն տարածվին ծաղկածին դաշտերու երեսին, այն ճառագայթներու տեղ գեռես սփռվում են լեռներու երկայնացած ստվերներն, որ մինչդեռ գիշերը չէր վերացրել նոցամեն յուր ազոտագին ծածկույթը, չէին երևում. բայց երբ հեռացավ այն համատարած քողարկությունը, և երբ սարերու մեջերեն թափանցեց այգածին ճաճանչը, նոքա սկսան երևիլ գեանի վերա փռված հարրած հսկաներու նման, որ բոլոր գիշերն ուտելով և խմելով անցուցել են, և այժմ կանանչարոտ հովիտներու մեջ պառկել են, գլուխները դրել են սարերու վերա, և մարմնով ծածկել են ձորերը և լայնածավալ դաշտերը: Այս դովարար ստվերները յուրյանց քաղցրիկ սյուզներով մեկ նորօրինակ զվարթություն են տալիս կանաչագեղ հովիտներուն, ուր որ գեռես չէ հասուցել երկնից դշխույն յուր արտեանունքի սուկեղոծ շողերն: Այս ստվերներու մեջ գեռես կան հանգստացած ուխտավորաց բազմությունը, որ երեկոյին երկայն ճանապարհեն հոգնած, կանանչ գալարվո մեջ տարածվել են, և սպասում են արևու առաջին ճառագայթներուն: Երեք ձիավորը, որ գնում էին Մանազկերտի ճանապարհով, տեսան սոցանե շատին՝ որ դեռ գալիս էին. ոմանք կամենում էին հանգստանալ, ոմանք պառկած էին, և քանի որ հեռանում էին Ափրոզիտյա տաճարեն, այնքան հարյուրապատիկ և հազարապատիկ փոփոխություն էին տեսնում ուխտավորաց գալու, երթալու կամ հանգստանալու ձևերու մեջ: Բայց լուսաղեմին մեծ մասն ճանապարհներու գեանի վերա փռված տեսան...»¹ և այլն:

Այսպիսով մեր հեղինակի նույնիսկ պատմա-գիցարանական երկերի մեջ էլ ստեղծ է իր ժամանակի ակտիվ գործիչ Գ. Պատկանյանը:

Ծիշտ է, Գ. Պատկանյանը շի պատկերացնում հասարակական այ կարգեր, քան այն, ինչ տեսնում է. նրա համար հասարակական կյանքի զարգացումը, հակասությունների խորացումը, գոյություն ունեցող պայքարը (որոնք նա շատ լավ էր տեսնում) այդ առումով այլ հեռանկարներ չեն բացում: Սակայն նույն Գ. Պատկանյանը այդ կարգերի ստեղծած հարարերությունների մեջ տեսնում է վնասակար, միանգամայն անընդունելի շատ ու շատ կողմեր, որոնք նա խիստ քննադատության է ենթարկում: Չգալով ժամանակակից կյանքի կողմից առաջադրվող նոր հարցերի կարևորությունը, միաժամանակ հասկանալով, որ ազգային լուսավորության առաջընթացի համար անհրաժեշտ է փշրել Ֆեոդալական կարգերի ստեղծած կաղանքները, նա պաշտպան է կանգնում այնպիսի գործունեության, որը սոցառնալից կարող էր լինել հենց այն կարգերի համար, որոնք նրա կարծիքով հավերժական պետք է լինեին: Մեր հեղինակի գաղափարախոսության այս գիծը հետևողականորեն դրսևորվում է նաև նրա հրապարակախոսական հոդվածների մեջ, որոնք կոնկրետացնում, ամփոփում են գեղարվեստական երկերի և հասարակական պրակտիկ աշխատանքի մեջ պաշտպանած նրա հայացքները:

Գ. Պատկանյանն ունի հրապարակախոսական տպագրված և անտիպրադմաթիվ հոդվածներ. «Միարանն ևն հայք», «Ուսումնասեր ևն հայք», «Հայոց ազգի պահպանողն ինչ է», «Հայոց ազգի ուսումնատվություն, ուսումնարանք և ուսուցիչք», «Ազգային հառաջագիմություն», «Իստախարակություն մանկանց», «Փայտե ձիու վրա նստած առաջագիմություն», և այլն:

¹ Մատենագարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 135, վավ. 11, էջ 25ա:

Նկատեցինք, որ Գ. Պատկանյանը զգում է կյանքի «ամենայն իրաց և հանգամանաց փոփոխությունը», նրա նոր շունչը և պահանջում է օգտբերել այդ հանգամանքներից, քաղաքակրթության ստեղծած բարիքներից, օգտագործել նրանք ֆեոդալական կարգերի ամբողջուման համար: Ուստի և նա որոշակի քննադատություն է հանդես գալիս և՛ ֆեոդալական անասաձևի և՛ նրա իդեոլոգիայի որոշ կողմերի նկատմամբ: Այսպես օրինակ, իր «Ուսումնասեր ևն հայք» հոդվածում նշում է, որ 19-րդ դարը ազատություն և լուսավորության դար է: «...Փոխվել են դարերը, փոխվել են ժամանակի հանգամանքները: Եկել է, հասել է այնպիսի ժամանակ, որ ամենայն ազգք և ազինք և լեզուք վազում են գեպի առաջ, ամենքը մեկ գրոշակ ունին բացած, ամենու գրոշակի վրա էլ այս խոսքերն են գրած՝ ազգություն և լուսավորություն: Այս երկու առարկայն այնպես ներքուստ մեկգմեկու հեռ կապված են, որ... չէ կարող լինել մեկը առանց մյուսի»¹:

Ֆեոդալական անասություն հին, իրենց դարն ապրած ձևերի գեմ Գ. Պատկանյանը ժխտողական վերաբերմունք ունի: Նա առաջարկում է անասություն ամբողջուման ու առաջընթացի նոր միջոցներ՝ զարգացնել երկրագործությունը, ծաղկեցնել արվեստագիտությունը, տեխնոլոգիան, ջանք գնել նոր տիպի վաճառաշահություն կիրառման և այլն: Ըստ Գ. Պատկանյանի՝ այս միջոցներով միայն հայ ազգաս գյուղացին նյութական ապահովություն ձևաք կրերի:

Գ. Պատկանյանը ցավում է, որ գյուղացու հողը քիչ է, բայց թե ո՞վ նրան ավելի հող կտա, բացազանչում է նա: Եթե հնարավորություն չկա հողը ավելացնելու, գոնե հնարավոր է հողը վերամշակման, մեքենայացման ենթարկելու ճանապարհով գյուղացու աշխատանքի փաստակը կրկնապատկել: «...Ո՞վ դառն է ազգատությունը, այսօր արտրն ու գութանը ծախել, ուտել կուտա, էգուց եղները, տեսնենք ինչո՞վ է գարնանը յուր անդատանը մշակում, որ սովամահ չլինին ինքն էլ, յուր զավակներն էլ»: Գյուղացու քնտանիքը աճել մեծացել է, բայց հողաքանակը նույնն է մնացել: «Կամ հնար, որ ազգատությունը ներս չսպրդի լրբությունը և հանգանությունը: Անշուշտ պիտի գա և տակնուվրա անե նրանց երջանիկ նահապետական կենցաղավարությունը: Ապա ի՞նչ անեն: Ո՞վ կուտա ամեն մեկ գերզատանին հիսունական օրավար, որ լայնությունը ու երկայնությունը վարեն, ցանեն, մշակեն ու լավ ապրուստ ունենան: Եթե չկա հնար հողը ավելացնելու, կամ հնար մշակությունը լավացնելու: Մեր հայազգի հողագործը լսած ունի, թե վարուցանքի, հողը բարվոքելու համար հնարած է ազրով շոգեներկությունը»: «...Հողը քրտինք է սիրում: Հայը քրտինքը չէ խնայում, բայց հողագործության մեջ էլ հառաջագիտություն չէ անում...»²:

Իր վերոհիշյալ հոդվածներում Գ. Պատկանյանը նույնպիսի պահանջներ է դնում նաև ֆեոդալական իդեոլոգիայի նկատմամբ: Գ. Պատկանյանին չի բավարարում հայ կուլտուրայի, լուսավորություն ու գիտություն 1850—60-ական թվականների մակարդակը: Այդ պատճառով նա բարձրացնում է արվեստի, գիտության ու կուլտուրայի քննադատանքում

¹ Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 37, էջ 25բ—26ա:

² Գ. Պ. «Հայոց ազգի նպատակն ի՞նչ է...», Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 144, վավ. 194, էջ 6ա:

քուրժուակիայի ձևաք բերած նվաճումները բնորոշելու և օգտագործելու հարցը: Հայ ազգի լուսավորութեան համար ամենաէականը Գ. Պատկանյանը համարում է լեզվի հարցը: Ըստ նրա՝ լուսավորությունը տարածելու համար ամենամեծ խոչընդոտը գրարարն է, որը «յուր երկաթի ծանրատաղտուկ շղթաներու մեջ կապած ուներ խղճալի ազգի զարգացումն ու հասաջողութունը»: Գրարարը պետք է իջնի կյանքի ասպարեզից և իր տեղը գիջի աշխարհարարին: Այս է նրա պահանջը: Գրել այն լեզվով, ինչ լեզվով որ խոսում են: «Լավ չէր լինի, որ մանուկը յուր լեզուն ճանաչեր մինչև վերջը: Այն, ինչ որ սովորել է յուր մորեն, գեոևս օրորոցի մեջ, գեոևս մոր կաթն ուտելու ժամանակ»: Ըստ Պատկանյանի գրարարը ազգի համար «օտար», «եկամուտ» լեզու է: «Եթե մեկը հասկանա, տասն և մեկը կմնա չհասկացած»¹: Նա, նույնպես, ինչպես բոլոր առաջադեմ գործիչները, ազգ ստելով հասկանում է ոչ թե նրա միջի բնարյալը կամ ուսյալը, այլ հասարակ ժողովուրդը: Եվ նա հարց է բարձրացնում, որ զրոյները գրեն ոչ թե փոքրամասնութեան համար, այլ «հազարավոր և բյուրավոր բազմութեան համար, որ մեկ անունով ասվում է հասարակ ժողովուրդ: Ազգը նա է և նորա հասկացողութեան պիտի հարմարեցնեն իրենց գրիչը»²:

Հիշելով հայ ժողովրդի դարավոր ակուր անցյալը, Գ. Պատկանյանը վճռականորեն պահանջում է քանդել լուսավորությունը կաշկանդող ֆեոդալական կապանքները, վերջ տալ կրթութեան քարացած, անշարժ վիճակին և ամեն ջանք գործադրել համազգային լուսավորութեան ստեղծման համար: «...Ուսումն ու դիտութունը օր ըստ օրե ծաղկում էր և աճում էր Հայաստանումը,— հիշում է նա,— բայց ոչ բնահանուր ազգի մեջ և ոչ միջին կարգի բազմութեան մեջ, որ իսկապես ազգ է, որ ամեն կողմանց կոտորած, կեղեքված, կողոպտված, քերթված, հալածված էր, այլ միայն ոմանց՝ երեկի իշխանաց, հարուստ վաճառականաց, և վանքերու անկյուններումը, լեռներու և անտառներու խորշերումը...»³,

Այսպիսով Գ. Պատկանյանը լուսավորութեան, կրթութեան տարածման ամենահիմնական միջոցներից մեկը համարում է աշխարհարար լեզվի հաղթանակը: Աշխարհարար լեզվով պիտի գրել և խոսել, աշխարհարար լեզվով հնարավոր է ուսում և դիտություն տարածել ամբողջ ազգի մեջ:

Հանդես գալով որպես գրարարի դեմ մարտնչողներից և աշխարհարար գրականութեան ու լեզվի հաղթանակը պաշտպանողներից մեկը, Գ. Պատկանյանը աշխարհարար գրական լեզուն ժողովրդական լայն խավերի սեփականութեանը դարձնելու համար գործնական առաջարկներ է անում: 1866 թվականին գրած իր «Ջեկուլուցումն»⁴ հոդվածում, անդրադառնալով աշխարհարար լեզվի զարգացման ժամանակակից վիճակին, Գ. Պատկանյանը իր դժգոհութունն է հայտնում այն բանի դեմ, որ նույնիսկ աշխարհարար լեզվով հրատարակվող սակավաթիվ գրքերն էլ չեն մասսայականում, չեն հասնում հասարակութեան բոլոր խավերին. բնթերցանութեանը դեռևս մնում է ուսումնականների շրջանակներում, առանց ներ-

¹ Գ. Պատկանյան, «Ուսումնասե՞ր են հայը», Մատենագրան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 37, էջ 14ա:

² Նույն տեղում, էջ, 13բ:

³ Նույն տեղում, էջ 9ա:

⁴ Մատենագրան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 62, էջ 39ա—42բ:

թափանցելու ժողովրդի մեջ: Ո՞րն է այս երևույթի պատճառը. մի՞թե ժողովուրդն է մեղավոր, — հարցնում է Գ. Պատկանյանը, — «հավասարի գիտեմ, պատասխանում է նա, — որ ժողովուրդը մեղք չունի»¹, գոյություն ունեցող կենդանի բարբառներն են խանգարում ժողովրդին, նույնիսկ «խոտակ հայերենով» գրված գրքերը հասկանալու: «Ասենք թե նոր-նախիջկանցոց լեզվի մեջ, — շարունակում է Գ. Պատկանյանը, — կան 3100 բառ՝ թե տաճկաց, թե ուսաց և թե ուրիշ ազգաց զանազան ժամանակներումը, զանազան տեղերիցը փոխառած. թե ազճատած նույնիսկ հայերենը, և թե վերջապես այնպիսի գուհիկ կամ տեղական կոշտ ու կոպիտ բառեր, որոնց թող թե հայերեն լինելը երկրայելի է, այլև բոլորովին անհասկանալի ուրիշ տեղերու հայերին, և այն ժամանակը ամեն հայ հեղինակ, աշխարհարար գրող, և ամեն ազգասեր՝ հայոց ժողովրդի համար մատչան շարագրեմ և օգուտ բերեմ ասող, պիտի հասկանա իսկական պատճառը՝ թե ինչո՞ւ համար հայերեն գրքերի ընթերցությունը մուտ չունեցավ և չէ ունենալու ևս ժողովրդյան մեջ. կամ ի՞նչ պատճառով հայեր, հայերեն պարզ գրածն էլ չեն հասկանում... Մենք նկնդուկ ենք գրում, նոր-նախիջկանցու համար պիտի քորղա գրես, որ հասկանա, հաշտրախանցոց համար՝ չերչե, թիֆլիզեցու համար՝ ծիա...: Մենք անկողին ենք գրում, նոր-նախիջկանցքի համար պիտի գրես տեռչեկ-յորղան, հաշտրախանցոց համար՝ աեղեր, կամ աեղարարձ, թիֆլիզեցոց համար՝ գողեկք. ի՞նչ հնար կա»²: Միթե՞ մենք կարող ենք բարբառների մեջ ճնշող մեծամասնություն կազմող օտար կամ սամկական կոշտ ու կոպիտ բառերով լցնել մեր լեզուն. «որ լեզուն մյուս անգամ խանգարվի», ոչ. անկարելի է, — պատասխանում է Գ. Պատկանյանը: Պայքարի գնով կյանքի մեջ մտած աշխարհարար գրական լեզուն պիտի պահպանվի և զարգանա, որպեսզի նրա միջոցով ազգային կրթությունն ու լուսավորությունը տարածվի ժողովրդի լայն շրջաններում: Ահա Գ. Պատկանյանի պահանջը: Այդ նպատակով նա առաջարկում է կազմել կենդանի բարբառների բառարաններ՝ համարելով այն չափազանց կարևոր և ոչ գժվարին մի գործ ժամանակակից ազգային գործիչների համար: «Այս ևս մեկ հայտնի ճրջմարտություն է, որ որպիսի և իցե լեզու խոսելու համար 3000 բառը բավական է. շատ է ու քիչ չէ. և այդ ցայն աստիճան, որ կարելի լինի ամենայն ինչ իմաստ պարզ և մեկին արտահայտել, մեկ մարդու և կամ նորա ասածը հասկանալ: Նույն ինքն անգլիացոց երևելի քերթողը՝ Շեքսպիրը, որ մարդկային սրտի ամեն մանր մունր ծալքերը քրքրել է յուր բազմահատոր շարագրությունների մեջ, Շեքսպիրը, ասում եմ, միայն 4—5000 բառ է գործ ածել»³: Այս ազգօգուտ հանգամանքները հաշվի առնելով, Գ. Պատկանյանը ինքը նախաձեռնում է կազմել գավառական բառարան նոր-նախիջկանցիների համար, կոչելով այն «Ծաղկաքաղ»: Գ. Պատկանյանի նպատակն է գավառաբարբառների «մեջն փուշերը զգուշությամբ հանել և խոտակել», «ասորացնել հայերեն բառերը», սրա հետ և միասին ըստ նրա՝ աշխարհարար գրքերը կարգալու և ինքնարուխ կեր-

¹ Մատենագրան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 62, էջ 39բ:

² Նույն տեղում, էջ 40ա:

³ Նույն տեղում, էջ 39բ:

պով իր լեզուն մաքրելու ժողովրդի ձգտումը աստիճանաբար կվերացնի այն մեծ վիճք, որ գոյություն ունի գրական հայերենի և բարբառների միջև և գրանով իսկ ժողովրդի լուսավորության համար գյուրին ճանապարհ կհարթվի¹:

Ուշագրավ է, որ իր «Ուսումնասեր են հայք» և «Հայոց ազգի նպատակն ի՞նչ է» հոդվածներում Գ. Պատկանյանը աշխարհաբար գրական լեզվի հարցի հետ մխտին առաջ է քաշում նաև նոր աշխարհիկ բովանդակությամբ գրականության զարգացման հարցը: Այստեղ նա նույնպես քննադատում ու հակադրվում է կղերամիտ պահպանողականությանը: Ըստ Գ. Պատկանյանի՝ աշխարհիկ լեզվով ու բովանդակությամբ գրականություն ստեղծելու գործին մեծ չափով վնասում են վանքերն ու եկեղեցիները և նրանց շուրջ համախմբված մարդիկ՝ հոգևորականությունը: Ուսումնական մարզիկանց համար կյանքի այլ ասպարեզ չլինելու պատճառով, շատ վարժապետացու կամ կրթություն ստացած մարդիկ, երբ տեսնում են ապրուստի հնարավորություն չունեն, կամա թե ակամա մտնում են վանք ու դառնում հոգևորականներ: «Ահա այս պատճառով էր, — շարունակում է Գ. Պատկանյանը, — ուսումնա մտնում էր վանքերու մեջ, վանականաց մեջ, հոգևորականաց մեջ և վանքերեն դուրս չէր գալիս, չէր մտնում աշխարհականաց բազմության մեջ... Նա մտնում է վանքի մեջ և գրում է վանքի մեջ: Նորա գրածը կարդում են միայն վանքի մեջ և այն վանքի մեջ աշակերտություն արած մարդիկ: Նա հեռու է աշխարհեն: Նա չի իմանում թե աշխարհումը ի՞նչ անցքեր են անց կենում. նորա բնաբանը կամ հին կամ նոր կտակարաններն է: Նորա գրելու նյութերը այն է, ինչ որ վանքական կենաց կտառաճի»²:

Գ. Պատկանյանը պախարակում է այն հոգևորականներին, որոնք չեն գիտակցում, թե բացի վանքերից գոյություն ունի նաև ժողովրդական կյանք, քաղաքական կյանք, առանին կյանք: «Այսպիսի խթանները կզարթնեցնեն մեր գրարար վանքի մեջ գրողներուն և նրանց ո՛չ թե միայն լեզուն, այլ առարկան լիովին կուսային, որ նոքա միայն երկնավոր ճանապարհը ցույց չտային, այլ մի քիչ էլ երկրավորի վրա էլ խոսեին»: Մի՞թե ժողովրդի կյանքի մեջ քիչ նյութ կա գրելու, — բողոքում է նա: «Մի՞թե գյուղացին մարդ չէ, մի՞թե նորա կյանքի մեջ քիչ նյութ կա գրելու, մի՞թե երկրագործության վրա, խաշնարածության վրա գրելը ամսթ կրեբեր նրանց, որոնք միշտ յոթն մահացու մեղաց վրա են հարձակում: Մի՞թե գյուղականք առն չունին, տեղ չունին, հաց չեն ուտում, սրգիք, գստերք չեն ծնանում, հարսնիք չեն անում, ուրախություն, ցնծություն չեն անում, տրամություն չեն քաշում, մի՞թե չէին կարող այս նյութերու վրա էլ գրել: Կամ քաղաքական կյանքը, կամ գյուղական կյանքը չէին կարող ստորագրել: Քիչ ձեռեր ունեն ամեն մեկ գեղ իրա համար առանձին, քիչ սովորություններ ունեն, քիչ ուխտատեղիք ունեն, քիչ զրոսարաններ ունեն, քիչ նախնի ավանդություններ ունեն պահած: Եթե մեկը մեկ գյուղինը

¹ Մեզ հնչողից գտնել Գ. Պատկանյանի «Ծագկաբազ» բառարանը: Տղադրվել է այն, թե ոչ, նույնպես չգիտենք: Հեղինակի հաղորդած տեղեկությունների համաձայն «Ծագկաբազը» կազմվել է 1866 թվականին: Մատենադարանի արխիվում կան նման մի բառարանի հետքեր. «Ծագկաբազ»-ից է այն, թե մի այլ բառարանից՝ դժվար է ասել:

² Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 37, էջ 12ա-բ:

գրեր, մյուսը մեկել գյուղին, կղառնար ազգային կյանքի հայելի»¹ (ընդ-
գծումը մերն է: Շ. Ն.):

Հատկանալի է, որ Գ. Պատկանյանը զգում է նաև նոր, սեպտեմբերյան գրականության ստեղծման պահանջը: Ըստ նրա, գրականությունը պիտի արտացոլի ժողովրդի լայն խավերի կյանքն ու կենցաղը՝ բոլոր կողմերով:

Ազգային լուսավորության հիմնական պայմաններից մեկն էլ Գ. Պատկանյանը համարում է թատրոնը: Գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահպանվում է նրա ձեռագիր մի պատասխիկը, որն անշուշտ թատրոնի մասին նրա գրած ուսումնասիրությունից է դուրս մընացել: Բովանդակությունից երևում է, որ այն գրված պիտի լինի 1859 թվականի վերջերին կամ դուրս 60-ական թվականների սկզբներին՝ թիֆլիզահայ թատրոնի բացման առիթով: Համենայն դեպս այդ պատասխիկը բավականաչափ պատկերացում է տալիս Գ. Պատկանյանի թատրոնի շուրջ ունեցած հայացքների մասին: 60-ական թվականները մի այնպիսի ժամանակաշրջան էր հայ թատրոնի համար, երբ սեպտեմբերյան մտքի ներկայացուցիչները կրքոտ պայքար էին մղում նրա դեմ և սչինչ գրական բան չէին տեսնում թատրոնի մեջ: Ակնհայտ է, որ Գ. Պատկանյանը թատրոնի հարցում նույնպես չի բաժանում այդ հայացքները և ընդհակառակը՝ սկզբունքորեն հակադրվում է նրանց: Գ. Պատկանյանը պաշտպանում է նոր, կյանքի հեռավարված թատրոն ստեղծելու պահանջը և ողջունում է այդ գործի ջատագով մարդկանց բեմերը: Գ. Պատկանյանը ճիշտ է գնահատում թատրոնի գաստիարակչական, հասարակական դերը: Թատրոնը համարելով «ազգի լուսավորության ամենահարկավոր միջոցներեն մեկը», «հայերու առաջ շարժելու գլխավոր լծակը»: «Մեր գիտավորությունը այն չէ,— գրում է Գ. Պատկանյանը,— որ ներբողական ճառեր գրենք կամ միաբանության համար, կամ թիֆլիզեցվոց: Այս երկուսի գովեստն էլ, վարձն էլ իրենց մեջն են պարունակում: Մենք միայն այս պիտի տեսնք, որ ուրեմն, եթե այլ հայարնակ քաղաքներու ժողովուրդներն էլ կամենան, կարող են իրենց օգտի համար այդպիսի ազգասիրական հանդեսներու մեջ ճգնիլ և փառավորվիլ: Բայց միշտ փառքը ու պատիվը նրանցն է, ով որ առաջ ճանապարհ կրանա: Ուրեմն փառք թիֆլիզարնակ հայերուն և պարձանք նոցա ազգասիրության, որ ազգային լուսավորության ասպարեզումը այս առաջին քայլափոխը արին: Թեպետ առաջին քայլն է, սակայն մեծ քայլափոխ է: Թատրոն ունենալը փոքր գործ չէ: Ի՞նչ կա մարդու բարի կենցաղավարության հարկավոր, որ այնտեղ չիմանա ու չսովորի: Ինչ որ նչ վարժապետը է կարող վարժատան մեջ ավանդել, և նչ վարդապետը եկեղեցու բեմումը, այն գերասանը կարող է ասել թեատրոնի տեսարանումը»²: Այնուհետև Պատկանյանը ցույց է տալիս, թե որքան մեծ նշանակություն ունի թատրոնը հասարակության բարքերը մաքրելու, մարդկանց մեջ բարոյական, բարձր և ազնիվ հատկություններ սերմանելու և ընդհակառակը ատելին ու վնասակարը պախարակելու, մերժելու գործում:

Թատրոնի մասին գրած Պատկանյանի աշխատանքի այս հատվածից երևում է, որ նա քաջածանոթ է եղել նաև ուսական թատրոնի պատ-

¹ Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, լավ. 37, էջ 12բ:

² Գր. թանգարան, Պատկանյանների ֆոնդ, լավ. № 6, էջ 1:

մությանը: Մոտում է սուսական թատրոնի կազմավորման և նրա տրագի-
ցիաների մասին, քննադատում է Ա. Ս. Մատվեևի թատրոնը, որպես հասար-
ակությունից կտրված արքունական նեղ շրջանների սպասարկող թատ-
րոն, և սուսական ազգային թատրոնի հիմնադիր է համարում Ֆ. Գ. Վոլկովին:

Հուսավորության մի այլ նախապայմանը, ըստ Գ. Պատկանյանի, գի-
տա-սոցիալիստական գրականություն ստեղծելու և տարածելու հարցն է: Նա
գտնում է, որ սխիտի ունենալ երկրագործության, վաճառաշահության և
արհեստագիտության վերաբերյալ գիտական գրականություն, որպեսզի
ամեն մեկը կարգա և նրա նոր պահանջների համաձայն մշակի հողը, կա-
ռավարի իր տնտեսությունը, առևտրով և արհեստով զբաղվի:

Ազգի մտավոր զարգացման, նրա տնտեսական ու կուլտուրական
առաջադիմության համար վերոհիշյալ գեղատոմսերը նշելու հետ մեկտեղ,
Գ. Պատկանյանը, այնուհետև, անդրադառնում է այն հարցին, թե հասար-
ակության ներսում առաջացած առանձին շերտեր ի՞նչ դիրք ունեն ազգ-
օգուտ այդ գործերի նկատմամբ և թե ի՞նչ է պահանջվում նրանցից ազ-
գի գոյության պահպանման համար մղվող պայքարի մեջ:

Իր «Ազգային հառաջադիմություն»¹ հոդվածում, հեղինակը նկարա-
գրում է հայ ժողովրդի աստանդակի գառը վիճակը և ապա շահագործա-
կան այն պայմանները, որոնք հարվածում են ազգային առաջադիմու-
թյանը: «Մեր ազգը չունենալով ինքնագլուխ տերություն, չունի և սչ մեկ
ազգի պատերազմ. ցրված լինելով ամեն աշխարհի անկյունները՝ մեկ
ապարախա կենցաղավարության է վիճակված: Ո՛չ գերի է, սչ էլ ճորտ,
բայց քան զգերին և քան զճորտը ավելի դառն է նորա բաժինը:
...Ամենեքեան մեկ առաքինություն են համարում հային հարստահա-
րել, կողոպտել, մերկացնել»²: Բայց, շարունակում է հեղինակը՝ ոչ պա-
կաս քան օտար բռնակալը նրան նեղում է նաև ազգակից խաբերան,
որը իրեն համար զենք և կարողություն է դարձնում նենգությունը, խո-
րամանկությունը, դավաճանությունը և պատճառ դառնում հազարավոր
մարդկանց դառն աղքատության: Գ. Պատկանյանը նկատում է, որ հասար-
ակությունը երկձեղքված է ու շերտավորված և գրա հետևանքով անավոր
հակասություններ են առաջացել ազգակիցների միջև: «Երբ որ հայը սխիտի
յուր գերզաստանի ապրուստը հոգա և յուր լուսավորության համար ջանք
անե և յուր հավատքին միտք դնե, այն ժամանակ նրան քաշքշում են
դոնե-գուռ, դատաստանե-դատաստան, երկրե-երկիր. նա զրկվում է յուր
վարուցանքեն, յուր խաշնարածութենեն, յուր արհեստեն, յուր վաճառաշա-
հութենեն, ընդհանրապես յուր բանուգործեն, ետ է մնում ուսումեն և լու-
սավորութենեն և հասնում է չքավորության...: Իսկ որն որ ազատ է
այդսխիտի բռնութենե և կարենում է յուր ձեռքը բերանին հասցնել և յուր
լուսավորության համար հոգալ, այդսխիտի մարդու համար էլ գտնվում է մեկ
այնսխիտի նենգավոր, խորամանկ, դավաճան, խաբերա, կեղծավոր «եղբայր»,
որն որ ազոավի բերանումը պանիր տեսնելով ազվեսի նման սկսում է
բարեկամարար նորա շորս կողմը պտույտ գալ, այնքան պոչը գեանե-գեաին
է քսում, մինչև նորա բերանեն պանիրը ցած է գցել տալիս: Հայանի է, որ
այնուհետև հեռանում է ծիծաղելով»³:

¹ Մատենագրարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 137, վավ. 67:

² Նույն տեղում, էջ 1րդ

³ Նույն տեղում, էջ 2րդ

Չնայած Գ. Պատկանյանը հասարակությանը որոշակիորեն չի բաժանում երկու հակոսանյա մասի և դասակարգերի բաժանման հարցում նրամտա նկատելի է շփոթ և որոշ նայելություն, սակայն, ինչպես գեղարվեստական ստեղծագործությունների, այնպես էլ հրապարակախոսական հոդվածների մեջ, նա սոցիալական բնորոշ հակասությունների փաստեր նշելով, սահմանադժու է շահագործողներին և շահագործվողներին: Նա խորապես զգում է նոր ժամանակների հեղափոխիչ ազդեցությունը ժողովրդի տնտեսական վիճակի և հոգեբանությունից վրա: «Մեր ազգը առաջ այսպես չէր, — գրում է նա, — տեսնում ենք պատմությունների մեջ, որ հայր միշտ ասում էր իմ հացս կերեք, իմ ջուրս խմեցեք. այժմ տեսնում ենք, որ հայերու մեջ գոյացել են այնպիսի անձինք, որ ասում են. իմ հացս խո իմս է. բեր քու հացն էլ աուր ինձ, որ այն էլ իմս լինի և ես մեկակ ուտեմ և ոչ քե քեզ հեռ միասին: Ի՞նչ պիտի անես, — ասում է նա, — ժամանակի ոգին այս կերպարանքն է առել»¹:

Գ. Պատկանյանը զգալով, թե որքան խորն է տնտեսական հիմքի վրա առաջ եկած հակասությունը ու հասարակության բարեկեցություն անկումը, հաճախ հուսահատվում է: «...Բերանով տեսնում ես լավ են խոսում, բայց գործով իրանց ասածներեն շատ հեռու են ման գալի՝ որպես թե իրանց բերանեն մինչև ականջները հազար մղոն է: Այս պատճառներով զրկյալ մարդիկ միշտ մնում են դժգոհ: Ե՞րբ կլինի զրկվածի և զրկողի մեջ հաշտություն, ինչո՞վ կլինի նոցա մեջ սեր, ինչպե՞ս կլինի սոցա մեջ խաղաղություն: Եթե վեճը, հակասությունը լիներ միայն դադափարներու վերա, փուլթ չէր, թող վիճեին, որքան որ կամենային. վեճը կենսական խնդիրների վրա է, օրական հացի վրա է, մեկը խլել է բովանդակ կենաց վաստակը, մյուսը կողկողում է: Այստեղ ի՞նչ խաղաղություն պիտի լինի»²: Գ. Պատկանյանը խորապես առելով «հազար մարդկանց հաց ուտողներին» — կեղեքիչներին, անկեղծորեն պաշտպանելով աշխատավոր հայի իրավունքները, ազգի ֆիզիկական և տնտեսական գոյությունն ամրապնդելու համար նշում է մի հիմնական ճանապարհ՝ «զորացնել նրա մեջ բարոյական կամ մուկիզմը», այդ միջոցով պայքարել ազգի ներքին քայքայիչների, զրկողների, խարեբանների դեմ, որպեսզի ազգը ուժ ու ամբողջուն ստանա այնպես, որ կարողանա պահպանել իր քաղաքական ինքնուրույնությունը, իր ազատությունը: Գ. Պատկանյանի հրապարակախոսական հոդվածների մեջ գնահատելին այն է, որ նա նկատում է ազգի կազմավորման պրոցեսի կարևոր հարցերը, առաջ է քաշում ճիշտ փաստեր, համարձակորեն բացելով կյանքի վարագույրը, մասնացույց է անում սոցիալական հակասությունները և չնայած ճիշտ ուղիներ չի նշում, սակայն նպաստում է ժողովրդի ազգային և նույնիսկ դասակարգային ինքնագիտակցության արթնացմանը:

Գ. Պատկանյանի քննադատությունը երբեմն հասնում է սեպիլիզմի բուն սահմանները: Նա տեսականորեն էլ ըմբռնում է սեպիլիզմի պահանջը. «նա որպես բնորոշ օրինակ նրա «Նախընթաց հանգամանք արդի վիճակի մտավորական դարդացման մերո» հոդվածը: Այստեղ հեղինակը քննարկում է թէ ո՞րն է իսկական բանաստեղծի, նկարիչի, պատմաբանի, ատենաբանի,

¹ «Ազգային հառաջադիմություն», էջ 2ա:

² Նույն տեղում:

գերասանի բուն նպատակը, ինչպես պիտի նրանք իրենց գործերով ազդել կարողանան հանդիսատեսի, ընթերցողի կամ գիտողի վրա: «Երևելի եղերերգակ ումն, — գրում է նա, — հանդիսացուցանելով տեսարանի մեջ Շիլլերի «Հուզկահարք»¹ բանաստեղծությունն, այնպիսի վառ և բորբոքյալ եռանդով հառաջ տարավ յուր գերն, որ ինքն ևս երևակերպելով թե ինքն է իսկապես այն անձն՝ որս նմանությունն էր յուր վերա առել, ատրաճանահար խոցեց յուր անձն: Այլ այսպիսի ծայրացյալ եռանդուն կրյուք բորբոքվիլ և վառվիլ կարե միայն նա՝ որ անցից հանգամանց մտադրությամբ տեղեկացած լինի՝ որպես արժան է. և ոչ հարևանցի, գիտենա անձանց, տեղաց և ժամանակաց պարագայքն, գիպվածոց շրջագարձից ազդեցությունքն, արկածից շարժառիթքն, նախընթացից և դուզընթացից մանրամասնությունքն, որով և հուսալի լինի հետևորդացն արգասյաց. ամենայն ինչ զգա հոգով և խորամուխ գիտակցությամբ մտաց, և ի բաց գնելով օտարությունն՝ զգածի համապատշաճ կրյուք, որպես թե յուրաքանչյուր պատկերացուցած գրվագաց մեջ ոչ թե միայն ինքն ևս խառն է, այլ և լցվի այն խանդով, որպես թե ինքն է գործագիրն»²:

Պատկանյանը գրիչ վերցնող ամեն մի գործչի պարտավորեցնում է, որ ոչ թե «երևակայության վայրկյանական ցնորից ազդեցության տակ» լցնել սովորակ թերթերը, այլ մտնել կյանք, ճիշտ տեսնել երևույթը և ազնվորեն գրել նրա մասին: Ինչուք թե, ասում է նա, ևս Պետերբուրգում նստած մտածում եմ գրել Երևան քաղաքի մասին, որտեղ բնավ չեմ եղել և միայն ծանոթ երևանցիների պատմելով գաղափար ունիմ նրա մասին. բայց ևս սեղմելով երևակայությունս և հագուրդ տալով փառասիրությանս, այնուամենայնիվ գրում եմ, ինչ է ստացվում գրանից: «Այս իմ խակամիտ շարժմամբք, որում նրբատես քննադատությունն չէ եղել հագորդ և բաժանակից, ոչ երևանցի հայոց լավությունն է հայտնվում, որ այլոց հրահանգ սատարե, և ոչ նոցա վատությունն՝ որ ուզվին. այլ ամենայն ինչ մնում է ի նույնություն, մի միայն սևացած թղթերն են մնում հիշատակարան և արձանագիր իմ անդիտություն, և կոթող գյուրահավան նախապաշարմանց, և հեզ հայն երևանցի տեսնելով նորա մեջ այնպիսի պժգալի անտեղություններ՝ որ ինքն չունի, ունեցած չէ, և գուցե թե ունենալու ևս չէ, մնում է տարակուսած թե այս գրպարտությունն ինչ պատճառով և ուստի է նորա քաղաքի և քաղաքակցաց վերա տարապարտուց ձյունել, անձրևել»³:

Անա այս օրյեկտիվ քննադատությունն պահանջով է, որ Գ. Պատկանյանը հաճախ շատ ավելի բացահայտ կերպով մերկացնում է և մեծատունների և հոգևորականություն բարքերը, նրանց վնասակար գերը՝ ազգի մտավոր դարգացման գործում: Այստեղ նա սոցիալական անարգարությունների ամբողջ կեղտաջուրը թափում է հարուստների, վատ մեծատունների դիմին: Նրանք են ազգի ամեն տեսակ դժբախտություն պատճառը, նրանցից է առաջ եկել ամբարտաժան մեծամտություն և արհամարհանք գեպի չքավոր դասը, նրանք նմանվելով այլազգի բռնավոր իշխաններին, աստիճանաբար, զանազան եղանակներով, երբեմն ձևանալով որպես պաշտ-

¹ Խոսքը Շիլլերի «Ավագակներ» գրամայի մասին է:

² Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 32, էջ 1ա-1բ:

³ Նույն տեղում, էջ 2ա:

պան ազգի և հովանավոր անպատասպար չքավորաց, կեղծապատիր հնարամտություններով շողոքորթել են, և երբեմն էլ, որպես անձնիշխան, անսանձ և անգուժ բռնակալ հայանի հալիշտակությամբ կողոպտել¹:

Գ. Պատկանյանը աստիճանաբար ընդհանրացնում է իր վերաբերմունքը սոցիալապես հակոտնյա շերտերի նկատմամբ²: Քաղաքական իշխանությունը, երկրի կառավարման ղեկը տալով մեծատուններին, Ֆեոդալական անտեսության վերափոխման իր մասնակի առաջարկները անելով նրանց, Գ. Պատկանյանը ազդի կուլտուրական լուսավորության ասպարեզում մեծ հույսեր չի կապում նրանց հետ: Իր վերոնիշյալ հոգվածում նա հանդում է այն եզրակացության, որ ազգային առաջադիմության բնագավառում մեր ունեցած նվաճումներով այնուամենայնիվ պարտական ենք «մեր չքավոր աշխատավորին» ... և եթե, — ասում նա, — մեզ կասեն թե ազգային լուսավորության ու կուլտուրայի առաջադիմության համար «մենք չունենք իշխանք, մարգարեք և առաջնորդք, բայց թող միտք բերեն, որ ունենք աղքատ աշխատասերք, գրողք և շարադրողք և թարգմանիչք...»³: «Մենք ժամանակավ ալելի մեծ իրավամբ պիտի ասենք թե այսքան զարգացման և հառաջադիմության մրցանակն պիտի մեր չքավոր աշխատողաց գլխույն դափնյա պսակ բոլորվի, այն անվարկ մշակներն են մեր լուսավորիչք, այն արհամարյալ ծակամուտներն են մեր երախտապարգևք, որ յուրյանց գրձի բթացյալ ծայրով տգիտության սարդոստայնը թել-թել պատառելով, մեզ օրըստօրե մարդկան կարգն մտանելո ճանապարհ են հարթում»⁴, գրում է Գ. Պատկանյանը իր նույն հոգվածի մի այլ ընդօրինակության մեջ:

Ինչպես վերևում տեսանք, Գ. Պատկանյանը անխնա քննադատում է նաև շահամոլ սևազգեստներին, հոգևորականությանը. «...նորա սկսում էին յուրյանց ծոցն ճոխացուցանել և այնուհետև ձեռնամուխ էին լինում ամենայն միջոցներով խարել, քերփել և կեղեքել ուսմիկ և խեղճ աշխարհականաց»: Գ. Պատկանյանը այստեղ նույնպես բազմաթիվ օրինակներով ցույց տալով հոգևորական դասի և աշխատավորության միջև գոյություն ունեցող շահերի ներհակությունները, անհնարին համարելով այդ երկու դասակարգերի միջև «հարաբերությունները կամ ընդհատելը կամ խապառ կանոն գնելը», կրկին նույն միակ և դժվարին միջոցն է առաջարկում՝ բարոյական դաստիարակությունը: Ըստ Գ. Պատկանյանի գրանով կարելի է հասնել խաղաղության:

Այժմ ալելի քան հատկանալի է դառնում, թե ինչու ասածու և եկեղեցու ծառա, կրքոտ հավատացյալ Գ. Պատկանյանի դեմ ծառացել էր մեծատունների և եկեղեցու գլուխ կանգնած բարձրաստիճան հոգևորականության պայքարը: Սակայն Գ. Պատկանյանը քննադատության է ենթարկում ոչ միայն եկեղեցական գործիչներին, այլև եկեղեցու միջնադարյան, սխոլաստիկ իգիտողիան: Հավանաբար նրա «Տեսրակ քրիստոնեական վարդապետության» աշխատությունը նույնպես ուղղված պիտի լիներ եկե-

1 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 32, էջ 3բ:

2 Այդ վերաբերմունքը բացահայտ դրսևորվում է նաև «Միտքան են հայք» հոգվածում, որը սխալմամբ Ռաֆայել Պատկանյանին է համարվել:

3 Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. № 136, վավ. 32, էջ 31ա-2բ:

4 Նույն տեղում, թղթ. № 136, վավ. № 33, էջ 26բ:

ղեցական սխոլաստիկայի դեմ, որի մասին այնքան սարսափով է խոսում Հովհաննես արքեպիսկոպոս Կարբեցին: Մեզ չհաջողվեց գտնել այդ ուշագրավ տետրակը. բայց երևույթին այն արգելել են հենց հրատարակության տարիներին: 1828 թվականին Հովհաննես արքեպիսկոպոսը գրում է Եփրեմ կաթողիկոսին, որ՝ մեր մերժումով չկամենալով վիրավորել ժողովրդի սիրտը, Գ. Պատկանյանին ուղարկեցինք Նախիջևան, բայց նա իր հեռուների պատրաստի տպարան իր բոլոր պարագաներով և այնտեղ ազատ գործելու հնարավորություն ունենալով, մեծամեծ վնասներ կարող է հասցնել մեզ և Ձեր հայրապետությանը: Ուստի խնդրում է, այդ առթիվ համապատասխան կարգադրություն անել և տեղյակ պահել բոլորին: Քանզի սոյն սա Գարրիէլ սարկաւազն, — շարունակում է նա, — ի բացակայութեան մերոյ ի քաղաքէս յօրինեալ կամ թարգմանեալ է գտետրակ իմն անուանեալ Քրիստոնէական վարդապետութիւն ի վարժութեանց մանկաց հոգևոր դպրոցիս և բոս հաճութեան մերոյ տպեալ է գայն ի տպարանի քաղաքիս ի 182[2] ամին: Ուղն և ծուծ այսր վարդապետութեան երեին բոս ամենայնի հակառակ եկեղեցական օրինաց սուրբ հաւատոյ մերոյ և դաւանութեան, կասեմք և դհերձուածութեան բանիցն միտս՝ որք բացատրեալ կան ի նմին ի բազում տեղիս¹:

Հովհաննես արքեպիսկոպոսը ուղարկում է Եփրեմ կաթողիկոսին Գ. Պատկանյանի վերոհիշյալ տետրակի մի օրինակը, «ի ծանօթութիւն և ի ցաւակցութիւն ընդհանրական հայրապետութեան Ձերոյ...»²:

Որ Գ. Պատկանյանը քննադատության է ենթարկում ոչ միայն հոգևորականությանը, այլև բախվում է հայ եկեղեցու գաղափարական սրտը դրույթներին, ապացուցում են նաև այլ փաստեր:

Գրականության և արվեստի թանգարանում պահպանվում է մի փաստաթուղթ (ստորագրված՝ Մինասիրյան — Գ. Պատկանյանի ծածկանուններից մեկը), որը վերաբերվում է եկեղեցու «հաս և չհաս» օրենքին: Գ. Պատկանյանը իր դարմանքն է հայտնում, թե ինչպիսի՞ կարգ ու կանոն, օրենք գոյություն ունի եկեղեցու մեջ, հասարակության տարրեր խավերի համար: «Հաս և չհաս» կոչված օրենքի համաձայն հարուստի համար 3 պորտից հետո հաս է համարվում ամուսնությունը, իսկ հասարակ, չքավոր ժողովրդի համար 5 պորտից հետո դեռ չհաս է: «Հարուստը ունենա ճանապարհ յուր չհասը հաս անել, աղքատը չունենա: Այս ինչ եկեղեցական խորհուրդ գառավ»³: Մեկի համար ավար, մեկի համար խավար: Մեկի համար հնարավոր, մյուսի համար անհնար և այլն:

Հենց այնպիսի օրենքներն են առաջ բերում հասարակական դանազան շարիքներ՝ կաշառակերություն, թշնամություններ, անուանգում, — եղբակացնում է Գ. Պատկանյանը:

Պատկանյանին դուր չեն գալիս նաև եկեղեցական երկար ու բարակ արարողություններն ու ծիսակատարությունները: Նա «Վերք Հայաստանի»-ի մասին իր դրած հոդվածում, ընդգծելով Ս. Արսվյանի այդ առթիվ արած ճիշտ քննադատությունը՝ միանում է նրան: Դեպի եկեղեցին ու

¹ Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. № 58, վավ. 44:

² Նույն տեղում:

³ Գր. թանգարան, Պատկանյանների ֆոնդ, № 66, էջ 63ա-բ:

կրոնն ունեցած քննադատական վերաբերմունքի պատճառով Գ. Պատկանյանը կասկածանքի տակ է առնվել. նրան մեղադրել են նաև իր հրատարակած շարաթաթերթը «Արարատ» կոչելու պատճառով: «Այս «Արարատ» անունն վրեժխնդիր հայտնեցավ ոչ միայն սրբազան հայրապետն, այլև բոլոր Տփլիսու հայոց հոգևորական դասն և սկսան քարոզել այն օրպես հանցանք հավասար... սրբապղծության...»¹: Ներսիսյան գաղտնույթով Գ. Պատկանյանի տեսութայն ժամանակ, Սահակ Սահառունին, Հակոբ Կարենյանը հաղորդում են Ներսեսին, թե Գ. Պատկանյանը պղծում է գրոց լեզուն, ցանկանալով Սորենացու պատմությունը թարգմանել աշխարհարար: Նրանք բողոքում են նաև, թե Պատկանյանը հակակրօնական սգի է սերմանում գաղտնույթ և ժողովրդի մեջ նորոգելով ազգի հին գիցարանությունը, «որո ջնջելո համար աշխատեցան այնքան առաքյալք և լուսավորիչն»²:

Հատկանալի է ուրեմն, որ Գ. Պատկանյանը կույր հավատացյալ չէր. ազգության պահպանման, համախմբության հիմնական գործոններից մեկը համարելով եկեղեցին, նա քննադատական վերաբերմունք ուներ նրա նկատմամբ և սրբություն չէր համարում նրա բոլոր գոգմաներն ու օրենքները:

* * *

Քննադատության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե իբր Գ. Պատկանյանը չի սիրել Ներսես Աշտարակեցուն, որովհետև վերջինս սուսական օրինատացիայի մարդ էր: Այդ ճիշտ չէ: Գ. Պատկանյանը բարձր է գնահատում Հայաստանը պարսկական լծից ազատելու գործում Ներսեսի կատարած մեծագույն ծառայությունը: Բայց նկատի ունենալով Ներսեսի, հատկապես կաթողիկոսական շրջանի գործունեությունը, խոշոր կալվածատերերի, Հարություն Սալիրյանի նման մեծատուն-աղաների վրա հենվելու նրա քաղաքականությունը, Գ. Պատկանյանին քիչ լավ բան է մնում ասելու Ներսեսի մասին: Ինչ վերաբերում է այն բանին, թե Պատկանյանը չէր սիրում Ներսեսին, որովհետև ինքը սուսական օրինատացիայի մարդ չէր, ապա դրա դեմ առարկելու համար կարելի է բերել բազմաթիվ փաստեր Գ. Պատկանյանի գրական և հրատարակատեսական երկերից: Նա երախտագիտությամբ նշում է, որ միայն սուսական օրինատացիան հայ ժողովրդի համար ունեցավ փրկարար ազդեցություն, որ հայ ժողովուրդը գրանով գտավ իր կորցրած լուսավորությունը: 1850 թվականին իր «Արարատ»-ում գրում է՝ «Ժամանակագրական կարգով հայոց ազգը սուսաց տերության մեջ բնակվել է առաջ Աստրախան քաղաքումը, հետո Մոսկով և Ս. Պետերբուրգ, հետո Ղզլար և Մազգոկ, հետո Նախիջևան և Նոր Ռուսսատանի մեջ: Ջկնի այնորիկ Ղրիմու երկիրը երջանկացավ սուսաց հովանավորության ներքո: Նորա նման տասն և ինն գարու սկիզբն Վրաստանն բախտավորվեցավ: Բսան և հինգ տարի հետո Հայաստանի վերին մասն և սուրբ էջմիածին հասավ յուր երանելիության»³:

Ապա, օրպես երախտագիտական հատուցում նա գտնում է, որ հայ ժողովուրդը իր այժմյան բարեբախտությունը տեսնելով ամեն օր, ամեն

¹ Գ. Պատկանյան, «Շիշատակաբան», էջ 312:

² Նույն տեղում, էջ 322:

³ «Արարատ», 1850, էջ 290:

տեղ, իր հոգու ամբողջ ջերմեռանդությամբ պիտի ասի՝ «Կեցցե՛ Ռուսաստան. Կեցցե՛ հայոց ազգի բարեբար քաբավորությունն. Կեցցե՛ հայոց ազգի ասպնջական նոր հայրենին»։ Եթե Պատկանյանը հայտարարում է կեցցե Ռուսաստանը և այն համարում հայ ժողովրդի նոր հայրենիքը, ապա տարակուսանքից վեր է, որ նա իր ժամանակին լավ է հասկացել և գնահատել ռուսական օրինատացիայի նշանակությունն ու դերը հայ ժողովրդի պահպանման համար։ Նրա «Մեր ժամանակակից հայք» հոդվածն¹ էլ նվիրված է այն հարցին, թե հայ ազգային առաջադիմությունը ինչ պատուհներ է տվել ռուսական հողի վրա։ «Վեհազնյա Լազարյանց տունը կունենանք այնքան ազգագրական երախտիք հայ ազգի վրա, եթե մնացած լինեիր Սպահանու գրանը։ Բանակալությունը թույլ կուտանք նոցա ի սեր ազգի այնքան դո՛ս քերել, որքան որ Ռուսաստանի ազատ տերություն մեջ ազգի համար լուսավորության տեղեր շինեցին...»² գրում է Գ. Պատկանյանը։ Դեպի Ռուսաստանը ունեցած Գ. Պատկանյանի առաջադիմական վերաբերմունքը ակնհայտ է դառնում նաև եվրոպական պետությունների մասին նրա ունեցած հայացքներից։

Գ. Պատկանյանը իր հոդվածներում շատ է խոսում եվրոպական լուսավորության ու կուլտուրայի մասին և անհամեմատ բարձր է գնահատում այն։ Հաճախ հիշելով լուսավորության ասպարեզում եվրոպայի կատարած այս կամ այն քայլը, նա խրախուսում է հայ հասարակությանը հետևել եվրոպային։ Գ. Պատկանյանը ցավով է ընդգծում այն տարբերությունները, որ կան եվրոպական և հայկական լուսավորության աստիճանների միջև։ «Զարհուրանք է գալիս վրաս, — ասում է նա, — երբ որ միտքս եմ բերում այն վիճի լայնությունը ու խորությունը, որն որ բացվել է մեր ազգի ու եվրոպացիոց գիտություններու շափի, քանակի ու որակի մեջ»³։ Եվ սկսում է թվել, թե ինչն է խանգարում մեզ հասնելու նրանց։

Սակայն Գ. Պատկանյանը ստրկամիտ չէ եվրոպայի նկատմամբ։ Ընդհակառակը, նա քննադատում է եվրոպական պետությունների նվաճողական քաղաքականությունը։ Այսպես, օրինակ, Գ. Պատկանյանը զարմանում է, որ Չինաստանը մի ժամանակ հսկա պարիսպներով ստիպված է կղել անջատել իր երկիրը, որով և կանխել է այլ երկրների լուսավորության ու կուլտուրայի մուտքը։ «Բայց ի՞նչ օգուտ ունեցավ, այն մեծ և լայնատարած պարիսպը, երբ որ ծովի կողմեն եկան Անգլիայի և Ֆրանսիայի նավերը, մտան Չինումաչին և որքան տեղ կամեցան, այնքան առին։ Հետո Փեքին մայրաքաղաքը մտան։ Կայսերական ասպարանքը կողոպտեցին և նորա զարդերով իրանց թանգարանները ճոխացուցին»⁴։

Պատկանյանը անգլիական կապիտալիզմի դեմ իր հակակրանքն է արտահայտում նաև Ղրիմի պատերազմի կապակցությամբ։ Թե առանձին նամակներում և թե «Հիշատակարան»-ի մեջ նա մերկացնում է Անգլիայի նվաճողական քաղաքականությունը և ուրախությամբ ընդգծում նրա նավատորմի կրած պարտությունը Ադովի ծովում⁵։

¹ «Արարատ», 1850, էջ 292։

² «Հյուսիս», 1863, № 5, էջ 36։

³ «Հյուսիս», 1864, № 24, էջ 186։

⁴ «Հյուսիս», 1863, № 5, էջ 33։

⁵ Այս կապակցությամբ կարևոր ենք համարում հիշատակել հետևյալը։ Գ. Պատկանյանի ձեռքահարկության պատճառով հանգիստ չունեի նրա հավատարիմ կինը՝ Եղիսա-

Այս բոլորը ցույց են տալիս, որ Գ. Պատկանյանը այն կղերամիտ, ազգայնամուլ, սեպիցիոն պահպանողականը չէ, որպիսին նրան անվանել են ոմանք՝ առանց ուսումնասիրելու նրա գրական-հասարակական գործունեության նրկարամյա պատմությունը: Նա լիբերալ բուրժուազիայի իդեոլոգ չույնպես չէ և արմատական հարցերում շատ է հեռու նրանից: Գ. Պատկանյանը արտահայտում է հայ ազգային պահպանողական գասի ամենաառաջագետ թևի գաղափարները: Նա կանգնած է հնի և նորի ճամփարածանում: Գ. Պատկանյանը մի կողմից ձեռք է մեկնում անցյալին, հիշում նրա արժանահիշատակ հերոսներին, նրանց օրինակով քննադատում ժամանակակից հասարակության թերությունները, մյուս կողմից խլում զարգացող լիբերալ բուրժուազիայի քաղաքականության և մտքի նվաճումները և երկուսը միասին աշխատում է ի սպաս գնել ֆեոդալական կարգերին:

Ինչպես տեսնում ենք, Գ. Պատկանյանը սիրելով իր ժողովրդին, նրա ապագա երջանկության համար ճիշտ սեղիններ չգտավ և չէր էլ կարող գրտնել: Նա հնարավոր էր համարում, որ հայ ազգը իր ներքին ջանքերով, ստեղծված կարգերի պահպանությամբ ու բարվոքմամբ, ազգային լուսավորության ու գիտության նվաճումների ճանապարհով կհասնի ապագա երջանկության:

Սակայն Գ. Պատկանյանի միայն գաղափարական եզրակացությունները չեն, որ քննության և գնահատության պիտի արժանանան, այլ այն ծառայությունները, որ նա մատուցել է իր ժողովրդին գոհարերությունների գնով: Գ. Պատկանյանը զգալի գեր կատարեց 19-րդ դարի կեսերին հայ ժողովրդի լուսավորության, կրթության և աշխարհաբար լեզվով գրականություն ու մամուլ ստեղծելու գործում: Իր տոհմությունամբ ու ժրջանությամբ նա հանդիսացավ այն գործիչներից մեկը, որոնք հող նախապատրաստեցին հայ հասարակական մտքի գալիք սերնդի համար, որի գրոշակակիրը եղավ մեծանուն գործիչ Միքայել Նալբանդյանը:

բեթ ամբուհին (Գ. Սունդուկյանի տոհմից): Անընդհատ դիմումների ու բողոքների միջոցով նրան հաջողվում է 1855 թ. մայիսի 24-ին ամուսնուն ազատել տալ բանտից: Նույն այդ օրերին Տաղանթոշի ղուրբերնատոր գրաֆ Տոլստոյի կինը հյուրընկալվում է Խալիբյանների տանը. Խալիբը օգտագործելով այդ՝ գրաֆ Տոլստոյի միջոցով 4 օրվա ընթացքում կրկին ձերբակալել է տալիս Գ. Պատկանյանին և ուղարկում նույն բանտը (Մատենադարանի արխիվ, Կաթողիկ. դիվան, թղթ. № 176, վավ. 254):

1855 թ. մայիսի 27-ին (այդ ղեկավարից մեկ օր առաջ) Գ. Պատկանյանը գրում է ներսեսին «...Գաի տուն իմ ի ետին թշուառութեան ի պատճառ քանի պատիկ խուզարկութեանց թշնամեաց... զինչ և իցէ գաի զգլուխ նոցա ի մարմինս և այն շատ է ինձ, զի ամենակարողն չէ տուեալ նոցա իշխանութիւն և ի վերս հոգւոց, որպէս մատեալ էր նոցա դամարմինս: Բայց ոչ ինչ նուազ քան գտուն իմ գաի զքաղաքս բոլոր ի տրամութիւն և սուքս, զի ասպատակք անգեղացւոց և զազգիացւոց, որք միջամուխ յեալ էին ընդ նեղուցն կերճի ի ծովն Աղովայ ի 21 մայիսի խարիսխ անկեալ հանդէպ Թաղանթոզա, ի 22 յաւուր կիւրակէի սկսեալ ևն ոմբակոծել զքաղաքն, որով բարձուցեալ են զգեղ ոմանց ի ծովեղբեկայ շինութեանց նորա...» (Մատենադարանի արխիվ, Կաթողիկ. դիվան, թղթ. № 176, վավ. 283): Սույն փաստաթուղթը ավելի մանրամասն օգտագործել է ընդ Ա. Աղամյանը (ՀՍՍՌ ԳՍ, Տեղեկագիր, 1955 թ., № 11, էջ 90):